



**ԱՌԱՋԻՆ
ՕԳՆՈՒԹՅՈՒՆ
ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ
ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆԸ
ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ
ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ**



ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆԸ ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ

1. ՁԵՌՆԱՐԿ

Արդարևարգ իրավիճակներում նյութական և ոչ նյութական ժառանգության պահպանման համակարգված պատրաստվածության և հասցեական արձագանքման համար

ԱՊԱՐՆԱ ԹԱՆԴՈՆ

ՀՏԴ 008:719(07)
ԳՄԴ 71+79.0g7
Թ 220

Թանդոն Ապարնա

Թ 220 Առաջին օգնություն մշակութային ժառագայթանը ճգնա-
ժամային իրավիճակներում: Ձեռնարկ / Ապարնա Թան-
դոն.- Եր.: «Մագաղաթ պլյուս» հրատ., 2024. – 180 էջ:

ՀՏԴ 008:719(076)
ԳՄԴ 71+79.0g7

Հրատարակվել է 2024 թվականին Մշակութային արժեքների պահպանության և վերականգնման ուսումնասիրությունների միջազգային կենտրոնի (ICCROM), Via di San Michele 13, 00153 Rome, Italy (Հոռոմ, Իտալիա)

Արքայազն Կլաուսի անվան մշակույթի և զարգացման հիմնադրամի, Kingsfordweg 151, 1043 GR, Amsterdam, The Netherlands

Մշակույթի ոլորտում արտակարգ իրավիճակների արձագանքման կազմակերպության, Herengracht 474, 1017 CA Amsterdam, The Netherlands (Ամստերդամ, Նիդերլանդներ)

ԻԿՕՄ-ի հայկական թանգարանների ազգային կոմիտեի և Թանգարանների աշխատողների և բարեկամների ասոցիացիայի (ԹԱԲԱ) կողմից

ՀԱՄԱՀԵՂԻՆԱԿՈՒԹՅԱՄ

Հիմնական հեղինակ և խմբագիր

Ապարնա Թանդոն

ՀԱՏՈՒԿ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՀԵՂԻՆԱԿՆԵՐ

Պատահարից հետո վնասի և ռիսկերի գնահատում

Ռուիլտ Ջիգյասու, Էժենի Կրետե, Էլկե Աեթեր

Անվտանգություն և կայունացում

Էժենի Կրետե, Էլկե Աեթեր, Շավիլ Ռոման, Էսմերալդա Պոպերյո

Գործնական օրինակներ

Մարիա Սեսիլիա Ռոդրիգեզ Մորենո, Էժենի Կրետե, Իհոր Պոշիվայլո, Կյա Միլո Կո, Էլկե Ջեթեր, Վալենտինա Սպանո, Լայլա Սալիի

Գիտական ակնարկ

Ջեսիկա Դոյլ, Ջոնաթան Իթոն, Սոնյա Ջովինացի

Հետազոտություն

Ջեսիկա Դոյլ, Ջոնաթան Իթոն, Սոնյա Ջովինացի

Տվյալների ձևավորում

Քրիստոֆեր Մալափիթան

ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

ICCROM

Քեթրին Անտոնարլի, Ապարնա Թանդոն, Ջենիֆեր Քոփիթորն, Իզաբել դը Բրիգի և Իզաբել Վերգեր

Արքայազն Քլաուսի մշակույթի և զարգացման հիմնադրամ

Դերորա Սթյոլբ

ՀԱՅԵՐԵՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ԻԿՕՄ-ի հայկական թանգարանների ազգային կոմիտե

Հայկ Մկրտչյան (նախագծի ղեկավար)

Թանգարանների աշխատողների և բարեկամների ասոցիացիա

Ալվարո Գրիգորյան

Թարգմանություն

Արմինե Բաչաչյան

Մասնագիտական խմբագրում/ սրբագրում

Նժդեհ Երանյան, Հռիփսիմե Պիկիչյան, Ալվարո Գրիգորյան

Գրական խմբագրում/սրբագրում

Սևակ Ղազարյան



Սույն իրապարակումը գտնվում է հանրային տիրույթում Attribution-NonCommercial-ShareAlike 4.0 (CC BY-NC-SA 4.0) միջազգային արտոնագրի (<https://creativecommons.org/licenses/by-nc-sa/4.0/>) պայմաններով: Օգտագործելով սույն իրատարակության բովանդակությունը՝ օգտատերերն ընդունում են իրենց պարտավորվածությունը ICCROM-ի Բաց հասանելիության շտեմարանի ցանկացած նյութերի հետագա օգտագործման պայմաններով:

Բնօրինակի վերնագիրը՝ First Aid to Cultural Heritage on Times of Crisis: 1. Handbook and 2. Toolkit [IN ENGLISH]: Հրատարակվել է 2018 թվականին Մշակութային արժեքների պահպանության և վերականգնման ուսումնասիրությունների միջազգային կենտրոնի (ICCROM) և Արքայազն Կլաուսի անվան մշակույթի և զարգացման հիմնադրամի կողմից: Բնօրինակ տարբերակ, ©ICCROM, Արքայազն Կլաուսի անվան մշակույթի և զարգացման հիմնադրամ:

Այս իրատարակության մեջ նշված անվանումները և ներկայացված նյութերը չեն ենթադրում որևէ կարծիքի արտահայտում ICCROM-ի, Արքայազն Կլաուսի անվան մշակույթի և զարգացման հիմնադրամի և Մշակույթի ոլորտում արտակարգ իրավիճակների արձագանքման կազմակերպության կողմից՝ կապված որևէ երկրի, տարածքի, քաղաքի կամ տեղանքի իրավական կարգավիճակի, ինչպես նաև այդ երկրի իշխանությունների կամ դրա սահմանների սահմանազատման հետ: ICCROM-ը, Արքայազն Կլաուսի անվան մշակույթի և զարգացման հիմնադրամը և Մշակույթի ոլորտում արտակարգ իրավիճակների արձագանքման կազմակերպությունը չեն երաշխավորում այս իրատարակությունում տեղ գտած տվյալների ճշգրտությունը և դրանց կիրառումից առաջացած հետևանքների համար որևէ պատասխանատվություն չեն կրում:

Հրատարակության մեջ արտահայտված տեսակետները պատկանում են հեղինակներին, սակայն պարտադիր չէ, որ դրանք արտահայտեն ICCROM-ի, Արքայազն Կլաուսի անվան մշակույթի և զարգացման հիմնադրամի և Մշակույթի ոլորտում արտակարգ իրավիճակների արձագանքման կազմակերպությունների քաղաքականությունը կամ տեսակետները:

Բովանդակություն

Առաջաբան	5
Նախաբան	6
Ինչպես օգտվել ձեռնարկից	8



Առաջին օգնություն մշակութային ժառանգությանը

• Ինչ է մշակութային ժառանգության առաջին օգնությունը	10
• Ինչպե՞ս այն տրամադրել	11
• Ո՞վ կարող է այն նախաձեռնել	16
• Ինչո՞ւ համակարգել	20
• Ե՞րբ կարելի է տրամադրել	22



Քայլ 1. Իրավիճակի վերլուծություն

• Ինչ է իրավիճակի վերլուծությունը	27
• Ինչո՞ւ ձեռնարկել իրավիճակի վերլուծություն	28
• Ովքե՞ր պետք է մասնակցեն	29
• Ինչպե՞ս իրականացնել	30



Քայլ 2. Տեղում վնասի և ռիսկերի հետպատահարային գնահատում

• Ինչ է պատահարի վայրում վնասի և ռիսկերի գնահատումը	45
• Ինչո՞ւ ստանձնել այն	46
• Ինչպե՞ս իրականացնել	47



Քայլ 3. Անվտանգություն և կայունացում

• Որո՞նք են անվտանգության և կայունացման գործողությունները	71
• Ովքե՞ր կարող են իրականացնել անվտանգության և կայունացման գործողությունները	72
• Տարածքի անվտանգություն	75
• Հետպատահարային տարհանում	79
• Փրկում	90
• Վթարային իրավիճակում կառույցների ամրակայում	106
• Ոչ նյութական ժառանգության պաշտպանություն	119



Վաղ վերականգնում

• Ինչ է վաղ վերականգնումը	127
• Առաջարկվող գործողություններ	129
• Եզրակացություն	137

Բառարան	138
Հղումներ	154

Մշակույթն ընդունված է համարել զարգացման շարժիչ ուժ: Մինչդեռ տարիների ձեռքբերումները կարող են մեկ ակնթարթում անհետանալ, երբ տեղի են ունենում աղետներ, ու ողբերգական հետևանքների պատճառով համայնքները մղվում են հետընթացի: Այդուհանդերձ, տառապանքի և կորստի միջավայրում, ի հայտ են գալիս տոկունության պատմություններ, որտեղ մշակույթն առանցքային դեր ունի: Սա գիտական համայնքին ներշնչել է ավելի ուշադիր ուսումնասիրել մշակութային ավանդույթների ու խնդիրների հաղթահարման մեխանիզմների փոխազդեցությունը:

Արքայազն Կլաուսի հիմնադրամի կարգախոսը՝ «Մշակույթը հիմնարար պահանջ է», առավելապես արտացոլում է ICCROM-ի՝ մշակույթի պահպանության և բազմազանության տարածման սեփական համոզմունքը: Հենց սա նկատի ունենալով են երկու կազմակերպությունները միավորվել՝ մշակելու մի գործիք, որը կօգնի մեկտեղել առաջնային շահագրգիռ կողմերի և համայնքի մտահոգությունները կարևոր վայրերի և օբյեկտների վերականգնման գործում: Սա իր հերթին օգնում է նրանց զարգացնել գալիք աղետներին դիմակայելու կարողություններ:

Մեր առջև ծառայած հիմնական մարտահրավերներից մեկն այն է, որ մշակութային ժառանգության վերաբերյալ նկատառումները պաշտոնապես ներառված չեն արտակարգ իրավիճակների արձագանքման պետական և համայնքային համակարգերի մեծ մասում: Այնուամենայնիվ, առաջին արձագանքման մասնագետները ձեզ կպատմեն, որ իրենք անխուսափելիորեն ներգրավված են ժառանգության փրկարարական աշխատանքներում՝ երբեմն թույլ չտալու, որ մշակութային արժեքները փրկել փորձելիս տեղացիները վտանգի ենթարկեն իրենց կյանքը, քանի որ խորապես գիտակցում են ժառանգության կարևոր դերը կորուստների և տրավմաների հաղթահարման գործում:

Մշակույթը չի կարող սպասել: Եվ ICCROM-ը, և՛ Արքայազն Կլաուսի հիմնադրամը կիսում են այս հավատամքը: 2010 թվականին ICCROM-ն Իտալիայի մշակույթի նախարարության և մի շարք այլ գործընկերների հետ ձեռնարկեց «Առաջին օգնություն մշակութային ժառանգությանը ճգնաժամային իրավիճակներում» դասընթացը: Այս նախաձեռնությունն ընդլայնվեց՝ ներառելով Սմիթսոնյան ինստիտուտը և Արքայազն Կլաուսի հիմնադրամը, ինչն առանցքային էր «մշակութային ժառանգության փրկարարների» ցանցն ընդլայնելու և մասնակիցների նախաձեռնությունները ֆինանսավորելու գործում, որպեսզի դրական արդյունքները բազմապատկվեն:

Այս գիրքը նախատեսված է «Առաջին օգնության» գործընթացները համակարգելու և հետագա ուսումնասիրությունները, գործողությունները և իրազեկումը խթանելու համար: Գրքի հեղինակները գիտակցում են այն փաստը, որ յուրաքանչյուր արտակարգ իրավիճակ մեզ նոր դաս է սովորեցնում և հնարավորություն ընձեռում շարունակել լրացնել տեսական ու գործնական գիտելիքների բացերը: Տեղեկությունը ներկայացնում է տարաբնույթ տեսակետներ՝ փորձելով թեմայի շուրջ ծավալել ընդգրկուն քննարկումներ և ընդլայնել գրույցի սահմանները:

Անկասկած է, որ աղետների ռիսկերի նվազեցումը զարգացնող հարց է: Հուսով ենք՝ այս ձեռնարկը և ուղեցույցը, իրենց գործնական առաջարկություններով, մշակույթի պահպանության նոր ուղիներ կհարթեն:

Վերբեր Նրդորո
ICCROM-ի գլխավոր տնօրեն

Ջոմանա Էլ Ջեին Խուրի
Արքայազն Կլաուսի անվան մշակույթի և զարգացման տնօրեն

Ինչո՞ւ պահպանել մշակութային ժառանգությունը հումանիտար ճգնաժամի ժամանակ:

Մշակույթը չի կարող սպասել: 2015 թվականի ավերիչ երկրաշարժերից դեռ մեկ ամիս չանցած՝ Նեպալի Կատմանդուի պատմական Դուրբարի հրապարակի ավերված տաճարների փլատակների վրա նկատվում էին ուխտավորներ և ծաղկավաճառներ: Հետնցումներին դիմակայելով՝ նրանք այնտեղ էին ամենօրյա կրոնական ծեսերում մխիթարություն փնտրելու և վերսկսելու իրենց առօրյա գործունեությունը՝ և ասում էին, թե հետագա երկրաշարժերից Նեպալի ժողովրդի խոցելիությունը նվազեցնելու համար առաջին հերթին պետք է պաշտպանել և կայունացնել Նեպալի հնագույն տաճարներն ու քաղաքային հրապարակները:

Մեկ տարի անց, երկրաշարժին հաջորդած որոնումներ և փրկարարական աշխատանքներ իրականացնելիս, Իտալիայում հրշեջներն օգնեցին տեղի համայնքին Նորջայի մի եկեղեցուց տարհանել «Սգացող Աստվածամոր» (Madonna Addolorata) կտավը: Երկու ամիս հետո նոր երկրաշարժը ամբողջովին ավերեց այդ եկեղեցին: Հրշեջներն առաջնահերթություն համարեցին նկարի փրկությունը, քանի որ հասկանում էին, որ Նորջայի բնակիչների համար Աստվածամայրը հարատևության և միասնության խորհրդանիշն է:

Հումանիտար ճգնաժամերին մշակութային ժառանգության փրկության համար ցուցաբերած ինքնազոհ և կամավորական արարքները չեն սահմանափակվում աղետներով: Հայտնի է, որ կատաղի հակամարտություններում հայտնված համայնքների համար առաջնահերթությունն իրենց մշակութային ժառանգության պաշտպանությունն է, նույնիսկ երբ սեփական անվտանգությունն է սպառնալիքի ներքո: Լուսանկարներ, փաստաթղթեր, կրոնական և անձնական իրեր, սովորույթներ և շինություններ, այն ամենը, ինչը մարդկանց կապում է միմյանց հետ և տալիս է ինքնության զգացողություն կամ ապրուստը հոգալու միջոց՝ դառնում է ավելի արժեքավոր ավերածությունների ու տեղահանմաների ժամանակ: Ուստի կարևոր է, որ մշակութային ժառանգության պահպանությունը և վերականգնումը չհետաձգվեն կամ տարանջատվեն արտակարգ իրավիճակների ժամանակ և դրանից հետո տրամադրվող մարդասիրական օգնությունից, հատկապես երբ վերջնանպատակն է օգնել մարդկանց հաղթահարելու նյութական և ոչ նյութական կորուստները ու վերադառնալու բնականոն կյանքին:

Ինչո՞ւ այս ձեռնարկը:

Լայնածավալ և բազմաշերտ մարդասիրական ճգնաժամերի ժամանակ՝ մշակութային ժառանգության պաշտպանությունը բարդ է մի քանի պատճառով: Գլխավոր պատճառներից է մշակութային ժառանգության անտեսումը՝ աղետների կառավարման պետական և միջազգային համակարգերում: Մյուս պատճառն այն է, թե որտեղից սկսել, երբ բազմաթիվ մշակութային վայրեր են տուժում: Ո՞վ կարող է ապահովել տարածքի հասանելիությունը: Ո՞վ կարող է օգնել: Երբ է միջամտելու ճիշտ ժամանակը: Եվ ինչպե՞ս միջամտել:

Այս ձեռնարկը և գործնական ուղեցույցը բացատրում են «առաջին օգնություն մշակութային ժառանգությանը» հասկացությունը, այն է՝ անհապաղ և փոխկապակցված գործողություններ, որոնք ձեռնարկվում են կայունացնելու և նվազեցնելու վտանգված նյութական և ոչ նյութական մշակութային ժառանգության ռիսկերը՝ ի նպաստ այդ դրանց վերականգնմանը: Գործնականում փորձարկված եռաստիճան համակարգի միջոցով այն սահմանում է՝ երբ և ինչպե՞ս պաշտպանել վտանգված մշակութային ժառանգությունը և մատնանշում բոլոր նրանց, ովքեր կարող են աջակցել նման գործողություններին: Այս քայլերն ու աշխատանքային գործընթացները կարող են հարմարեցվել արտակարգ իրավիճակների տարբեր տեսակներին և դրանց որոշ համատեքստերին:

Այս ձեռնարկի նպատակն է ծառայել իբրև

- Հղում՝ մշակութային արժեքների փրկության, արտակարգ իրավիճակների արձագանքման մասնագետների և կամավորների վերապատրաստման համար:
- Գործիք, որը կբարելավի մշակութային ժառանգության պահպանության կառույցների՝ արտակարգ իրավիճակներին պատրաստվածության և արձագանքման ծրագրերը:
- Առաջին օգնության գործողություններն իրականացնելու ուղեցույց՝ համատեղելով մարդասիրական օգնությունը և վերականգնումը:

Ձեռնարկը սահմանում է մշակութային ժառանգության առաջին օգնության առանձնահատկությունները, որոնց համակարգված իրագործման դեպքում հնարավոր է նվազեցնել աղետից տուժած բնակչության խոցելիությունը: Այդ կերպ մենք հուսով ենք խրախուսել մշակութային ժառանգության առաջին օգնության ներառումը արտակարգ իրավիճակների արձագանքման և մարդասիրական օգնության միջազգային, պետական և համայնքային համակարգերում:

Այս ձեռնարկն ու կից գործնական ուղեցույցը լրացվող աշխատություններ են, և հեղինակները կցանկանային կարծիքներ ստանալ, որպեսզի կարողանան շարունակել աշխատել՝ երաշխավորելու ոլորտի արդիականությունը և որակյալ տեղեկատվություն տրամադրելու նրանց, ովքեր դրա կարիքն ունեն ամենից շատ:

Ապարնա Թանդոն

«Առաջին օգնություն մշակութային ժառանգությանը՝ ճգնաժամային իրավիճակներում»
ծրագրի համակարգող, ICCROM
fac@iccrom.org

Ինչպես օգտվել ձեռնարկից

Ստորև կգտնեք մի քանի խորհուրդ՝ ինչպես օգտվել այս ձեռնարկից և գործնական ուղեցույցից:

ԳՐՔԻ ՆԵՐԴԻՐՆԵՐ

Յուրաքանչյուր էջի վերին աջ անկյունում կգտնեք ինտերակտիվ ներդիրներ, որոնք կօգնեն անցնել գործնական ձեռնարկի ձեզ անհրաժեշտ բաժինը:

ՀԻՊԵՐՀՂՈՒՄՆԵՐ

Թավ և կապույտ՝ Փաստաթղթի կոնկրետ բաժիններ անցնելու հղումներ:

Նարնջագույն և թավ՝ Բառարանի հղումներ:



ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ՝ Փորձի վրա հիմնված խորհուրդներ:



ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ Ուշադիր եղեք՝ չնախատեսված սպառնալիքներից և/կամ սխալներից խուսափելու համար:



ԿԱՐԴԱԼ ԱՎԵԼԻՆ՝ Շարունակել կարդալ:




ՕՐԻՆԱԿ՝ Առանձին դեպքերում հանդիպող մարտահրավերներ կամ գործնականում ձեռք բերված դասեր:



ԻՆՏԵՐԱԿՏԻՎ՝ Փորձել վարժությունը կամ գործողությունը:

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ
ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ
ԱՌԱՋԻՆ
ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ



Ինչ է մշակութային ժառանգության առաջին օգնությունը:

Անհապաղ և փոխկապակցված գործողություններ, որոնք արտակարգ իրավիճակների ժամանակ ձեռնարկվում են վտանգված **մշակութային ժառանգության** կայունացման ու ռիսկերի նվազեցման համար և դրանից հետո սահմանվում են որպես մշակութային ժառանգության առաջին օգնություն: Նման արտակարգ իրավիճակի անմիջական պատճառը կարող է լինել **քնական** կամ **տեխնածին** վտանգը կամ երկուսը միասին: Առաջին օգնությունը ներառում է արտակարգ իրավիճակի **վերլուծություն** և մշակութային ժառանգության վրա դրա հնարավոր ազդեցությունները, **տեղում վնասի և ռիսկերի գնահատում, անվտանգություն և կայունացում**:

Առաջին օրգնության ընդհանուր նպատակը տուժած մշակութային ժառանգության վերականգնման խթանումն է՝ նպաստելով վերջինիս առնչվող համայնքների վերականգնմանը:

Արտակարգ իրավիճակների կամ ճգնաժամային արձագանքման ինստիտուցիոնալ պլանի շրջանակներում մշակութային ժառանգության առաջին օգնությունը արտակարգ իրավիճակների արձագանքման ընթացակարգերի մաս է կազմում: Շատ անգամ, հատկապես լայնածավալ աղետներից հետո մշակութային ժառանգության առաջին օգնությունը հաճախ իրականացվում է միայն պաշտոնապես հայտարարված արտակարգ իրավիճակի ավարտից հետո: Այնուամենայնիվ, նախնական պատրաստվածությունը և համակարգումը կօգնեն մշակութային ժառանգությանն արագ և արդյունավետ առաջին օգնություն ասպահովել, եթե արտակարգ իրավիճակ ստեղծվի:



Կարմանդոլի փրճարում արվակարգ իրավիճակի կայունացում, Նեպալ, 2015թ.:
Լուսանկարը ICCROM-ի:

Ինչպե՞ս կարող ենք արտակարգ իրավիճակներում առաջին օգնություն տրամադրել մշակութային ժառանգության տարբեր տեսակներին:


Այս ձեռնարկն ուրվագծում է եռաստիճան գործողությունների շրջանակ՝ տարբեր վայրերում մշակութային ժառանգության բոլոր տեսակներին առաջին օգնություն տրամադրելու համար:

Շրջանակը հիմնված է ICCROM-ի՝ «**Առաջին օգնություն մշակութային ժառանգությանը ճգնաժամային իրավիճակներում**» միջազգային և բազմազործընկերային դասընթացի, ընդգրկուն գործնական փորձի և ամբողջ աշխարհում համապատասխան մասնագետների հետ միջգիտակարգային համագործակցության վրա:

Քանի որ որևէ արտակարգ իրավիճակ մյուսին նման չէ, շրջանակում նկարագրված գործողությունները պետք է հարմարեցվեն առանձին համատեքստերին:



ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿ



Շրջանակի յուրաքանչյուր քայլ ունի գործողությունների առանձին ընթացք, որը կարելի է բաժանել ավելի փոքր գործողությունների:



Քայլ 1. Իրավիճակի վերլուծություն

Իրավիճակի վերլուծությունը հնարավորություն է տալիս հասկանալու արտակարգ իրավիճակի ավելի լայն համատեքստը: Այն առաջին օգնություն ցուցաբերողներին հնարավորություն է տալիս տեղում իրականացվող գործողություններին համապատասխան հատուկ պլան մշակել: Արտակարգ իրավիճակների փուլի վերջում կատարվում է իրավիճակի խոր վերլուծություն՝ **մշակութային ժառանգության վերականգնման** միջնաժամկետ և երկարաժամկետ կարիքները սահմանելու նպատակով:



Քայլ 2. Տեղում վնասի և ռիսկերի գնահատում

Տեղում վնասի և ռիսկերի գնահատումը թույլ է տալիս բացահայտել ու արձանագրել **աղետից** հետո մշակութային ժառանգությանը պատճառված վնասն ու ռիսկերը: Այս քայլի արդյունքներն օգնում են որոշել տեղում իրականացվող գործողությունների առաջնահերթությունները:



Քայլ 3. Անվտանգություն և կայունացում

Անվտանգությունը և **կայունացումը** ներառում են գործողություններ, որոնք օգնում են մեղմել վնասը և նվազեցնել ռիսկերը՝ տուժած ժառանգությունը մեկ քայլ ավելի մոտեցնելով վերականգնմանը: Այս փուլում նյութական և ոչ նյութական ժառանգության համար ձեռնարկվող գործողությունները տարբերվում են միմյանցից:

Առաջին օգնության շրջանակում նշված քայլերի բարեհաջող իրականացման համար, առաջին արձագանքման այլ գործընթացների հետ միասին, կարևոր են **փաստաթղթավորումը, ռիսկերի շարունակական կառավարումը, հաղորդակցությունը և համակարգումը**: Գործողությունների հերթականությունն օգնում է սահմանել մշակութային արժեքներին առաջին օգնություն ցուցաբերողների, տեղի համայնքների, արտակարգ իրավիճակների արձագանքման խմբերի և մարդասիրական կազմակերպությունների համատեղ գործողությունների ոլորտները:

Մշակութային ժառանգության անվտանգության և վերականգնման ուղղությամբ ձեռնարկվող գործողությունները պետք է համահունչ լինեն մարդասիրական, չեզոքության, անկողմնակալության և անկախության սկզբունքներին: Այս նպատակին գործնականում աջակցելու համար այս ձեռնարկն առաջարկում է հիմնարար սկզբունքների հետևյալ փաթեթ, որը համապատասխանում է մարդասիրական օգնության սկզբունքներին:



Մշակութային ժառանգության առաջին օգնության հիմնարար սկզբունքները



1. Մարդակենտրոն առաջին օգնություն

Մարդկանց կարիքների առաջնահերթությունն ու սեփական ժառանգությունը պաշտպանելու և վերականգնելու նրանց կարողության գորեղացումը «Առաջին օգնության ծրագրի» ստեղծման ու մոտեցման անբաժանելի մասն է:



Մշակութային ժառանգության վայրերը ճգնաժամի պահերին հաճախ օգտագործվում են տեղահանված մարդկանց ապաստան տրամադրելու նպատակով: Մշակութային ժառանգությանն առաջին օգնության ժամանակ պետք է հաշվի առնել նման կարիքները և օժանդակել օգնություն տրամադրելու աշխատանքներին: Ավելին՝ վիճակագրությունը ցույց է տալիս, որ աղետների հիմնական դեպքերում տեղական համայնքներն առաջինն են արձագանքում և պաշտպանում իրենց մշակութային ժառանգությունը: Օրինակ՝ 2012 թ. Մալիի հյուսիսում տեղի ունեցած հակամարտության ժամանակ հնագույն ձեռագրերի մասնավոր հավաքածուները պահպանվեցին ավանդական միջհամայնքային կապերի շնորհիվ: Հաճախ համայնքներն ունեն ժամանակի ընթացքում փորձված հաղթահարման մեխանիզմներ և հարուստ գիտելիք (օրինակ՝ ավանդական շինարարական մեթոդներ), որոնք պետք է կիրառվեն վերակառուցման և վերականգնման ժամանակ:

2. Ներառական մոտեցում և հարգանք՝ բազմազանության հանդեպ

Առաջին օգնությունը պետք է ունենա ներառական մոտեցում՝ օգնել ճանաչելու այն տարրերը, որոնք ամբողջացնում են աղետից տուժած տարածքի մշակութային ժառանգությունը:



Որպես անհատներ և մասնագետներ՝ մշակութային ժառանգության ոլորտում առաջին օգնություն ցուցաբերողները կարող են ակամա սուբյեկտիվ դատողություններ անել՝ հիմնվելով այնպիսի արժեքների վրա, որոնք հանգեցնում են մշակութային ժառանգության ընտրողական ճանաչմանը և տուժած տարածքներում առկա անհավասարությունների աճին: Օրինակ՝ ինստիտուցիոնալ կառույցները սովորաբար ավելի ուշադրություն են դարձնում հայտնի կամ մոնումենտալ ժառանգության պաշտպանությանը և հիմնականում անտեսում են վերնակուլյար ժառանգությունը:

3. Համատեքստին հատուկ արձագանք

Մշակութային ժառանգությանն արդյունավետ առաջին օգնություն ցուցաբերելու համար կարևոր է հասկանալ արտակարգ իրավիճակի ավելի լայն համատեքստը:



Յուրաքանչյուր արտակարգ իրավիճակ ունի որոշակի համատեքստ: Համատեքստի վերլուծությունը թույլ է տալիս սահմանել հիմնական դերակատարների առաջնային կարիքները և հայտնաբերելիք մշակութային ժառանգությունը պաշտպանելու նրանց համապատասխան ունակությունները: Համատեքստի գնահատումն օգնում է նաև բացահայտել ռիսկի այն գոր-



ծոնները, որոնք կարող են տվյալ ճգնաժամում առավել մեծ վնաս հասցնել մշակութային ժառանգությանը: Օրինակ՝ սրված հակամարտությունների ժամանակ անվտանգության բացակայությունը կարող է մեծացնել մշակութային վայրերի պարբերական կողոպուտի ռիսկը:

4. Միավորել մշակույթը և մարդասիրական օգնությունը
Մշակութային ժառանգության առաջին օգնությունը պետք է տրամադրել մարդասիրական օգնության և վերականգնման հետ միասին:



Ընդունելով, որ ցանկացած ճգնաժամային իրավիճակում մարդկանց կյանքերը փրկելը թիվ մեկ առաջնահերթությունն է, բայց նաև ունենալով այն համոզմունքը, որ աղետներից տուժած մարդիկ իրավունք ունեն օգնություն ստանալ՝ իրենց մշակույթների շարունակականությունն ապահովելու համար՝ «Առաջին օգնության ծրագիրն» ընդգծում է մշակութային ու մարդասիրական օգնությունների փոխկապակցվածությունը:

Հետևաբար մշակութային ժառանգության պաշտպանությանն ուղղված գործողությունները պետք է նախաձեռնել և համակարգել կառավարության ու մարդասիրական օգնության համապատասխան գործակալությունների հետ համագործակցությամբ. օրինակ՝ հումանիտար կազմակերպությունների կողմից գործարկվող «Կանխիկ գումար՝ աշխատանքի դիմաց» ծրագրերը կարող են օգտագործվել մշակութային վայրերում բեկորների տեսակավորման, օբյեկտների և շենքերի բեկորների փրկության համար:

5. Մի վնասիր.

Առաջին օգնության գործողությունները պետք է կանխեն հետագա վնասը և նպաստեն վերականգնմանը:



Մշակութային ժառանգության առաջին օգնության հիմնական նպատակներից է հետագա վնասների կանխարգելումը՝ գնահատելով, մեղմելով և նախապատրաստվելով այլ ռիսկերի դիմակայմանը: Օրինակ՝ մշակութային հավաքածուների համար ժամանակավոր պահեստ-նմբապաստարան կառուցելիս՝ համոզվեք, որ այն չի ենթարկվում այնպիսի վտանգների, ինչպիսին են ջրհեղեղը կամ կողոպուտը:

Ո՞վ է թույլատրում մշակութային ժառանգության առաջին օգնության գործողությունների մեկնարկը:

Հիմնականում տուժած մշակութային ժառանգության խնամակալն է թույլատրում սկսել առաջին օգնության գործողությունները: Խնամակալները կարող են լինել պետական կամ համայնքային կառավարման հաստատությունները կամ կրոնական կառույցները:

Այդուհանդերձ, խնամակալը միակ իրավասուն չէ: Պաշտոնապես հայտարարված արտակարգ իրավիճակի ժամանակ **արձագանքման** առաջնահերթությունները սահմանվում են պատահարի կառավարման պատասխանատու գերատեսչությունները:

Երկրի արտակարգ իրավիճակների կառավարման օրենքները կարևոր դերակատարություն ունեն որոշելու, թե ով կամ որ գերատեսչությունն է ստաճնում ընդհանուր իրավասություն՝ նախաձեռնելու արձագանքման գործողություններ և ապահովելու մուտք դեպի աղետից տուժած տարածք(ներ): Ուստի մշակութային ժառանգության առաջին օգնության գործողություններ սկսելու համար անհրաժեշտ է ունենալ արտակարգ իրավիճակների ընդհանուր արձագանքման պատասխանատու գերատեսչության հետ նախնական համաձայնություն, համակարգում, ինչպես նաև խնամակալի թույլտվություն:



Երկրաշարժից անմիջապես հետո Կարմանդուում իրականացվող մաքրման աշխատանքներ, Նեպալ, 2015թ.: Լուսանկարը՝ Թափաշ Փոլ/Դրիկ:



Who coordinates the overall emergency response?

Պաշտոնապես հայտարարված արտակարգ իրավիճակի համար համապատասխան պետական մարմինը նշանակում է **արտակարգ իրավիճակների արձագանքման համակարգող** կամ **պատահարի ղեկավար**, որը գործարկելու է արտակարգ իրավիճակների կառավարման համակարգը՝ համաձայն նախապես որոշված ընթացակարգի: Օրինակ՝ Հնդկաստանում Աղետների կառավարման ազգային վարչությունը համակարգում է բոլոր բնական և տեխնածին աղետների արձագանքման գործողությունները՝ համաձայն 2005 թվականի **Աղետների կառավարման ազգային օրենքի**:

Վտանգի կարիքից և ծավալից կախված՝ արտակարգ իրավիճակների արձագանքման այնպիսի դերակատարները, ինչպիսին են՝ քաղաքացիական պաշտպանության վարչությունները, Կարմիր խաչի կամավորները, ոստիկանությունը և զինվորականները, գործում են երկրի արտակարգ իրավիճակների կառավարման համակարգի ներքո՝ փրկելու կյանքեր, վերականգնելու կապի և տրանսպորտային միջոցները, ապահովելու առաջնային անհրաժեշտության այլ կարիքները:

Խոշոր աղետների դեպքում ազգային կառավարությունը կարող է օգնություն խնդրել այլ երկրից կամ միջազգային հանրությունից՝ Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) առաջնորդության ներքո:

ՄԱԿ-ն ուղղորդում է մարդասիրական արձագանքման գործողությունները Միջգերատեսչական մշտական հանձնաժողովի (ՄԱԿ ՄԳՄԿ) միջոցով, որը բաղկացած է ՄԱԿ-ի և միջազգային գերատեսչությունների հիմնական մարդասիրական դերակատարներից:

Արտակարգ իրավիճակի սկզբից 48 ժամվա ընթացքում ՄԱԿ ՄԳՄԿ-ը դասակարգում է աղետը՝ ըստ աստիճանի, բարդության, հրատապության և իրավիճակը կառավարելու տեղական **կարողությունների**՝ հիմնվելով նախնական գնահատման վրա:

2-րդ կամ **3-րդ մակարդակի** աղետի դեպքում ՄԱԿ-ը կգործարկի համակարգված, միջգերատեսչական արձագանքման (ՄԱԿ, միջկառավարական և հասարակական կազմակերպություններ) մեխանիզմներ՝ մարդասիրական օգնությունը խմբավորելով թեմատիկ կլաստերներում: Այսպիսի աղետները հաճախ վկայում են այն մասին, որ տեղական իշխանությունները և աղետներին արձագանքելու նրանց կարողությունները էապես տուժել են:

Նման իրավիճակներում տեղական ինքնակառավարման մարմիններն իրենց գործողությունները համաձայնեցնում են միջազգային գերատեսչությունների հետ՝ յուրաքանչյուր կլաստերի ներսում իրականացնելով գնահատում և ֆինանսական օգնության դիմումներ: Ներկայումս մշակույթը ներառված չէ կլաստերային այս համակարգում:

Այն դեպքում, երբ հայտարարվել է բարդ արտակարգ իրավիճակ, ՄԱԿ-ի մարդասիրական օգնությունը կարող է խաղաղապահ առաքելության մեջ ներառել ռազմական և/կամ ոստիկանական գործողություններ:

Ո՞վ կարող է պլանավորել և իրականացնել մշակութային ժառանգության առաջին օգնությունը:

Մշակութային ժառանգության փրկարարները կարող են պլանավորել և իրականացնել առաջին օգնության գործողություններ արտակարգ իրավիճակների արձագանքման և մարդասիրական օգնություն ցուցաբերող մասնագետների, մշակութային ժառանգության սեփականատերերի և կամավորների հետ միասին:

Մշակութային ժառանգության փրկարարն արտակարգ իրավիճակների ընթացքում կամ անմիջապես հետո վտանգված ժառանգության պահպանության վերապատրաստում անցած անձն է: **Խոշոր կամ բարդ արտակարգ իրավիճակների** ընթացքում մշակութային ժառանգությանը ցուցաբերվող առաջին օգնությունը ներառում է սննդի, ջրի, ապաստանի, անվտանգության և ինքնության կարիքների բաշխման հավասարակշռում: Մշակութային ժառանգության փրկության գործողություն իրականացնողը տվյալ աշխատանքի ժամանակ պետք է կարողանա դրսևորել ֆիզիկական, հոգեբանական, էկոլոգիական և այլ առանձնահատուկ հմտություններ:

Նա պետք է համապատասխան գիտելիք և հմտություններ ունենա՝ գնահատելու, փաստաթղթավորելու, պաշտպանելու և կայունացնելու արտակարգ իրավիճակների տարբեր համատեքստում հայտնված մշակութային ժառանգության բազմազան նմուշները: Պետք է կարողանա աշխատել միջգիտակարգային թիմերում: Մշակութային ժառանգության փրկարարները կարող են ներգրավվել նաև տեղա-



կան համայնքներից, աղետների արձագանքման գերատեսչություններից և մշակութային ժառանգության հաստատություններից:

Կարդալ հաջորդ էջում թվարկված հատկությունները և նշանակել ձեր հաստատությունից կամ տեղական համայնքից որևէ մեկին, որը լավագույնս կհամապատասխանի մշակութային ժառանգության փրկարարի դերին:



Մշակութային արժեքների փրկարարները Պորտ-ո-Պրենսում, Հայիթի, 2010: Լուսանկարը՝ Ապարնա Թանդոնի, ICCROM:

Մշակութային ժառանգության փրկարարի երեք հիմնական հատկանիշները



Հնարամիտ

- հասկանում է մշակութային ժառանգության բազմազանությունը
- տեղյակ է արտակարգ իրավիճակների համատեքստից
- ունի վերլուծական և քննադատական բարձր հմտություններ



Մարդակենտրոն

- ակտիվ ունկնդիր
- հասկանում և հարգում է գոյություն ունեցող սոցիալական կառուցվածքները, հավատալիքները և արժեքները
- կարողանում է աշխատել թիմում
- ուշադիր է մարդկանց կարիքների հանդեպ
- ունակ է վստահություն ձևավորել



Գործողության վրա կենտրոնացած

- ունի դրական՝ «կարող եմ անել» տրամադրվածություն
- ունի խնդիրները լուծելու ստեղծագործ մոտեցում
- արագ է մտածում, դիմացկուն է



Ինչո՞ւ է կարևոր համաձայնեցնել մշակութային ժառանգության առաջին օգնության գործողությունները արտակարգ իրավիճակների ընդհանուր արձագանքման գործողությունների հետ:

Արտակարգ իրավիճակների ժամանակ օգնության և վերականգնման առաջնահերթությունները սահմանվում են արտակարգ իրավիճակների կառավարման, նախապես կազմակերպված պետական և միջազգային համակարգերի միջոցով: Հիմնվելով հաստատված առաջնահերթությունների վրա՝ օգնությունն այնուհետև ուղղորդվում է այդ համակարգերի միջոցով: Անվտանգություն և ապահովություն երաշխավորելու համար խստորեն վերահսկվում է մուտքը դեպի աղետից տուժած տարածք:

Աղետից տուժած տարածք մուտք գործելու և մշակութային ժառանգությունը առաջնահերթություն ճանաչելու համար կարևոր է համակարգել մշակութային ժառանգության փրկությանն ուղղված ջանքերը արտակարգ իրավիճակների արձագանքման ընդհանուր գործողությունների շրջանակում: Այլապես տուժած մշակութային ժառանգության վնասի կամ ոչնչացման ռիսկը կարող է մեծանալ:



Հիմնավորելով մշակութային ժառանգության առաջին օգնության համակարգման կարևորությունը. Հայիթի

2010 թվականի Հայիթիի երկրաշարժին հաջորդող ամիսներից Ազգային ժառանգության պահպանության ինստիտուտը (ԻՄՊԱՆ) նախաձեռնեց աղետից տուժած տարածքներում վնասված պատմական շենքերի համարակալման և կնքման գործողությունը: Չունենա-



Մշակութային ժառանգության կառույցների կնքումը Ջերմելում, Հայիթի, 2010թ.:
Լուսանկարը՝ Ապարնա Թանդոնի, ICCROM:





լով շենքերն անվտանգ դարձնելու և կայունացնելու բավարար հնարավորություն (ֆինանսական և մարդկային ռեսուրսների առումով)՝ ինստիտուտը նպատակ ուներ կանխել շենքերի քանդումը և միջոցներ ձեռնարկել պահպանելու դրանք՝ ըստ դրանց կարևորության, գործառույթի և օգտագործման:

Այս պրակտիկան կիրառվել է կառույցների գնահատումներին զուգահեռ, որն իրականացրել են Հանրային աշխատանքների նախարարությունը և ՄԱԿ-ին կից գործակալությունները:

Լիակատար համակարգումն անհնար էր հիմնականում, որովհետև մշակութային ժառանգության վերականգնումը կամ պաշտպանությունը ներառված չէր արտակարգ իրավիճակների արձագանքման ոչ պետական, ոչ միջազգային համակարգերում: Արդյունքում շատ պատմական կառույցներ ճանաչվեցին վտանգավոր և, ի վերջո, քանդվեցին:

Տես հղումները, էջ 153:



Կնքված մշակութային ժառանգության շինություն Ջեքմեղում, Հայիթի, 2010թ.:
Լուսանկարը՝ Ապարնա Թանդոնի, ICCROM:

Երբ է նպատակահարմար մշակութային ժառանգությանն առաջին օգնություն ցուցաբերել:

Արտակարգ իրավիճակների ժամանակ կյանքեր փրկելը և անվտանգություն ապահովելն առաջնահերթություն է: Այս գործողություններն ավարտելուն պես կարելի է սկսել մշակութային ժառանգությանն ուղղված առաջին օգնությունը: Այնուամենայնիվ, արտակարգ իրավիճակների և մարդասիրական օգնություն ցուցաբերող տարբեր դերակատարների հետ անմիջապես տեղում իրականացվող համակարգման մեխանիզմները պետք է սահմանված լինեն նախքան պատահարները, որոնք պետք է պատշաճ ուշադրության արժանանան տեղական ինքնակառավարման մարմինների և մշակութային ժառանգության պահպանության կառույցների աղետների պատրաստվածության պլաններում: Գործնականում մշակութային ժառանգությանն առաջին օգնություն ցուցաբերելու ճիշտ ժամանակը կարող է տարբերվել և կախված է հետևյալ գործոններից՝

- Արտակարգ իրավիճակի բնույթը և ծավալը. **խոշոր** կամ **բարդ արտակարգ իրավիճակների** դեպքում, որոնք ենթադրում են մեծ վնասներ և մարդկային կորուստներ, առաջին օգնության գործողությունները կարող են հետաձգվել:
- Մուտք աղետից տուժած գոտիներ. զինված հակամարտությունների ժամանակ մուտքը վնասված տարածք կարող է խիստ սահմանափակ լինել, որն իր հերթին կարող է հետաձգել առաջին օգնության գործողությունների մեկնարկը:
- Մշակութային ժառանգությանը հասցված վնասի ծավալը և/կամ **շահագրգիռ կողմերի** համար դրա նշանակությունը (օր.՝ համայնքային, պետական, միջազգային), որտեղ վնասը մեծ է, արտաքին օգնության անհրաժեշտությունը կարող է հետաձգել գործողությունները: Նույն կերպ առանձնապես կարևոր մշակութային ժառանգության, օրինակ՝ Համաշխարհային ժառանգության որևէ հուշարձանի համար կպահանջվի, որ արտաքին փորձագետները ստուգումներ իրականացնեն որևէ գործողություն ձեռնարկելուց առաջ:
- Տեղական կարողությունները և պատրաստվածությունը. երբ կա տեղական ներուժ՝ անձնակազմի և ռեսուրսների տեսքով, և համակարգման մեխանիզմներն իրականացվում են արտակարգ իրավիճակների կառավարման հաստատությունների հետ միասին, ավելի դյուրին է նախաձեռնել մշակութային ժառանգության առաջին օգնությունն անմիջապես փրկարական աշխատանքներից հետո:

Նախաձեռնելով մշակութային ժառանգության առաջին օգնության գործողություններ. Իտալիա և Իրաք Առաջին օգնության գործողություններ մշակութային ժառանգությանը

Ինչպես արդեն նշվեց, մշակութային ժառանգության առաջին օգնություն ցուցաբերելու ճիշտ ժամանակը կախված է արտակարգ իրավիճակի բնույթից և ծավալից: Օրինակ՝ 2016 թվականի օգոստոսի 24-ին կենտրոնական Իտալիայի լեռնային շրջանում տեղի ունեցած երկրաշարժի առաջին ցնցումից հետո որոնողական և փրկարարական աշխատանքները տևեցին տասը օր: Այդ ժամանակահատվածից հետո միայն Իտալիայի Քաղաքացիական պաշտպանության դեպարտամենտը, համագործակցելով մշակութային նախարարության հետ, ձեռնարկեց այդ տարածքում անշարժ և **շարժական մշակութային ժառանգությանը** պատճառված վնասի առաջնային գնահատումը:

2014 թվականին Հյուսիսային Իրաքում մշակութային ժառանգության միտումնավոր ոչնչացումը հնարավոր եղավ գնահատել 2016 թվականին Մոսուլ քաղաքի ազատագրումից հետո:

Տես էջ 153-ի հղումները:



Վերևում՝ Երկրաշարժ կենտրոնական Իտալիայում, 2016թ.:
Լուսանկարը՝ Ապարնա Թանդոնի, ICCROM:

Ներքևում՝ Առաջին օգնության գործողություններ
Նիմրուդի հնավայրում, հյուսիսային Իրաք, 2017թ.:
Լուսանկարը՝ Լայլա Սալիհի:






Պարզեք, թե ով է համակարգում արտակարգ իրավիճակների ընդհանուր արձագանքման գործողությունները ձեր երկրում: Արդյոք մշակութային ժառանգության առաջին օգնությունը ներառված է համայնքային կամ պետական ընդհանուր պատրաստվածության և արձագանքման գործողություններում:

Ենթարդենք, թե ձեր տարածքում արտակարգ իրավիճակ է հայտարարվել: Իրավիճակը պարզ չէ, քանի որ վնասի մասին դեռ նոր տեղեկություններ են ստացվում: Նախնական հաղորդումները ցույց են տալիս, որ մշակութային ժառանգությանը վնաս է հասցվել տարբեր վայրերում, և կանխատեսվում են մեծ կորուստներ: Բազմազան ու հարուստ մշակութային ժառանգությունը կապված է Ձեր երկրի ազգային ինքնության հետ: Պատմության հնարավոր կորստով մտահոգված՝ դուք ցանկանում եք առաջին օգնություն տրամադրել:

Որտեղից սկսել:

Պարզելու համար՝ կարդացեք:

ՔԱՅԼ ԱՌԱՋԻՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ



Ինչ է իրավիճակի վերլուծությունը:

Արտակարգ իրավիճակների ժամանակ վստահելի տեղեկություն հավաքելը կարող է դժվար լինել, հատկապես երբ այն կապակցված չէ և ստացված է չհաստատված աղբյուրներից: Ուստի նախքան մշակութային ժառանգության անվտանգության համար միջոցներ ձեռնարկելը՝ ժամանակ տրամադրեք իրավիճակը գնահատելու, հավաքված տեղեկատվությունը վերլուծելու և առաջին օգնություն ցուցաբերելու ռազմավարություն մշակելու համար: Այլապես ձեր գործողությունները կարող են հանգեցնել աղետից տուժած ժառանգության համար ոչ ճիշտ առաջնահերթություններ սահմանելուն, վնասի ավելացմանը և նույնիսկ կյանքեր վտանգելուն:

Անսպասելի սկսված աղետի կամ աստիճանաբար ծավալվող ճգնաժամի պարբերական գնահատումը կոչվում է իրավիճակի վերլուծություն: Այն ներառում է նախա- և հետպատահարային հատուկ տեղեկատվության հավաքում և միմյանց միջև կապերի հաստատում՝ տեղում իրականացվող աշխատանքներն ի մասին իրազեկելու, անմիջական կարիքները և դրանք հասցեագրելու կարողությունները բացահայտելու համար:

Իրավիճակի վերլուծությունը մարդասիրական կազմակերպությունների կողմից կիրառվող տարածված գործիք է: Այն օգտագործվում է աղետից անմիջապես հետո՝ օգնության առաջնահերթությունները սահմանելու համար և **վաղ վերականգնման** փուլի սկզբում՝ երկարաժամկետ մարդասիրական կարիքները բացահայտելու համար:



Իրավիճակի վերլուծությունը՝ «Առաջին օգնություն մշակութային ժառանգությանը ճգնաժամային իրավիճակներում» միջազգային դասընթացի մաս, Ամստերդամ, 2015թ., Նիդերլանդներ: Լուսանկարը՝ ICCROM-ի:

Ինչո՞ւ ձեռնարկել մշակութային ժառանգության առաջին օգնության իրավիճակի վերլուծություն:

Արագորոտեն աճող ճգնաժամի ժամանակ իրավիճակի վերլուծությունը կարող է օգնել նվազեցնել ռիսկերը, զսպել կամ կանխել մշակութային ժառանգության վնասները:

Եթե այն ձեռնարկվել է դաշտային աշխատանքների սկզբում, մշակութային ժառանգությունը պաշտպանելու նպատակով՝ իրավիճակի վերլուծությունը կարող է օգնել պարզել գործողության վայր(եր)ը, ժամանակահատվածը, ծավալը և շրջանակը:

Հիմնվելով աղետից տուժած մշակութային ժառանգության տեսակ(ներ)ի և նշանակության վերաբերյալ նախնական տեղեկատվության վրա՝ իրավիճակի վերլուծությունն օգնում է պատասխանել այնպիսի կարևոր հարցերի, ինչպես օրինակ՝ ի՞նչն է **առաջնահերթ** և ինչպե՞ս միջամտել: Միևնույն ժամանակ այն օգնում է սահմանել այն դերակատարներին և շահագրգիռ կողմերին, որոնք կարող են աջակցել առաջին օգնություն ցուցաբերելու գործում:

Հակամարտության հետևանքով առաջացած արտակարգ դրության համար իրավիճակի վերլուծությունը կարող է ընդլայնվել՝ ներառելով հակամարտության գնահատումը, ինչը հայտնի է որպես **հակամարտության վերլուծություն** (տես էջ 38):

Իրավիճակի վերլուծության արդյունքներն օգտագործվում են ենթատեքստից բխող ծրագրի մշակման համար՝ պաշտպանելու և կայունացնելու տուժած մշակութային ժառանգությունը, և **տեղում վնասի ու ռիսկերի գնահատումից** ստացված հավելյալ տվյալների համաձայն՝ կարող է փոփոխվել (տես էջ 42):



Երկրաշարժից տուժած եկեղեցի Բոհոլում, Ֆիլիպիններ, 2013թ.:
Լուսանկարը՝ Ապարնա Թանդոնի, ICCROM:



Ինչպես իրավիճակի վերլուծությունն օգնեց մեղմել վնասը և նվազեցնել ռիսկերը աճող ճգնաժամում. Կիև, Ուկրաինա

2014 թվականի փետրվարին Կիևում սկսվեցին հանրային բողոքի ցույցեր: Կիևի կենտրոնում ցուցարարները և ոստիկանական ուժերը շրջապատեցին մշակութային ժառանգության մի քանի հաստատություն: Հիմնվելով դրսում ծավալվող տեսարանների իրավիճակի վերլուծության վրա՝ Ուկրաինայի Ազգային թանգարանի առաջին հարկը տարհանվեց, և արժեքավոր արվեստանմուշները ժամանակավորապես տեղափոխվեցին ավելի ապահով վայր՝ նախքան ցույցերը կվերածվեին արյունալի բախումների: Հավաքածուի մասերը տեղափոխելուց բացի՝ թանգարանի աշխատակիցները կապ էին հաստատել անվտանգության ուժերի հետ՝ նրանցից պահանջելով կանխել վանդալիզմը: Ժամանակին արված այս գործողությունների շնորհիվ թանգարանի հավաքածուն մեծ վնասներ չկրեց, մինչդեռ հարևան թանգարանի հավաքածուի մի մասը գողացվեց անկարգությունների ժամանակ:

Աղբյուրը՝ Իհոր Պոշիվայլո, Երկնային հարյուրի հերոսների ազգային հուշահամալիրի և Արժանապատվության հեղափոխության թանգարանի տնօրեն, Կիև, Ուկրաինա: «Առաջին օգնություն մշակութային ժառանգությանը ճգնաժամային իրավիճակներում» միջազգային դասընթացի մասնակից, 2015թ.:

Ո՞վ պետք է մասնակցի իրավիճակի վերլուծությանը:

Մշակութային ժառանգության համար առաջին օգնություն ցուցաբերելու իրավիճակի վերլուծությունը կարող է ներառել, բայց չսահմանափակվել՝

- առաջին օգնություն ցուցաբերող թիմերով և հաստատություններով,
- տուժած մշակութային ժառանգության համար պատասխանատու սեփականատերերով կամ հաստատություններով,
- արտակարգ իրավիճակների կառավարման հաստատությունների ներկայացուցիչներով, որոնք վերահսկում են տուժած տարածքի մուտքը և պատասխանատու են արտակարգ իրավիճակների արձագանքման առաջնահերթությունների սահմանման համար,
- տեղական համայնքների ներկայացուցիչներով,
- կամավորներով և տեղական ՀԿ-ներով:



Ինչպե՞ս իրականացնել մշակութային ժառանգության առաջին օգնության իրավիճակի վերլուծություն:

Մշակութային ժառանգության իրավիճակի վերլուծության ընթացքը ներկայացված է ստորև՝





Տեղեկություն հավաքել

Մշակութային ժառանգության առաջին օգնության իրավիճակի վերլուծության առաջին քայլն արտակարգ իրավիճակի բնույթի, դրա աշխարհագրական դիրքի, տուժած մշակութային ժառանգության տեսակ(ների) և նշանակության, վնասի տեսակ(ների) և չափի, ինչպես նաև ներգրավված շահագրգիռ կողմերի և դերակատարների մասին հատուկ տեղեկատվություն հավաքելն է:

Արտակարգ իրավիճակի համատեքստ



1. Ո՞ր նահանգը, մարզը կամ երկիրն է ներառված: Գտնել համապատասխան տարածքի ճշգրիտ աշխարհագրական կոորդինատները:
2. Ո՞րն է առաջնային **վտանգը**, որը դարձել է արտակարգ իրավիճակի պատճառը:
3. Երկրորդական իր վտանգները կարող են ավելի մեծ վնաս հասցնել մշակութային ժառանգությանն աղետից տուժած տարածքում:
4. Սոցիալական, տնտեսական կամ քաղաքական իր ոչ բարենպաստ պայմանների պատճառով մշակութային ժառանգությունը վնասի հանդեպ ավելի **խոցելի կդառնա**: Օրինակ՝ ոչ բարվոք ճանապարհները կարող են խոչընդոտել ժամանակին արձագանքմանը կամ օրենքի խախտումը կարող է մշակութային ժառանգությունը ենթարկել կողոպուտի երկրորդական վտանգի:
5. Իրավիճակի իր փուլում եք:
 - ա. Արդյոք դա նախքան պատահարի փրկյն է (օրինակ՝ եղել է հրաբխի ժայթքման մասին վաղ նախազգուշացում):
 - բ. Արդյոք դա տեղի է ունենում արտակարգ իրավիճակի սկզբում (օրինակ՝ անկարգություններ են սկսվել, փոթորիկ է սպասվում):
 - գ. Արդյոք դա տեղի է ունենում տարերային կամ տեխնաձին աղետից անմիջապես հետո, ինչպիսին է, օրինակ, ուբա-կոծությունը:



Բազմաշերտ արտակարգ իրավիճակներում պատահարները միատարր զարգացում չունեն: Օրինակ՝ երկրաշարժից կարող է հորեհ բռնկվել: Նույն կերպ երկարատև ճգնաժամը կարող է ապակայունացնել խաղաղության պայմանագիրը: Ուստի շատ կարևոր է ճիշտ սահմանել այն փուլը, որում գտնվում եք ծավալվող իրադրության ժամանակ և ընդգրկել չնախատեսված իրադարձությունների պլանավորումը:





1. Քանի և ինչպիսի մշակութային արժեքներ կարող են տուժել: Եթե **մշակութային արժեքները** մի քանիսն են, համոզվեք, որ ունեք բոլորի աշխարհագրական կոորդինատները: Այս տեղեկությունը կարելի է գտնել մշակույթի նախարարության կամ մշակույթի պետական գերատեսչություններում եղած **գույքացանկերում**:
2. Ինչ **նշանակություն** ունի տուժած մշակութային ժառանգությունը տվյալ տարածքում և ո՞ւմ համար է այն կարևոր: Արդյոք այն ներառված է մշակութային ժառանգության արժեքների ցանկում որպես ազգային կամ տարածաշրջանային կարևորության նմուշ:
3. Տեղական ռի հավատալիքները և մոտեցումները կարող են ազդել մշակութային ժառանգության առաջին օգնության ցուցաբերման վրա: Դրանք կարող են ազդել ռեսուրսների հասանելիության և օգնություն ցուցաբերող մարդկանց վրա: Օրինակ՝ 2015 թվականին Նեպալում տեղի ունեցած երկրաշարժից հետո վնասը գնահատելու համար ոչ հինդու օտարերկրյա նախագծող ճարտարագետներին չէին թույլատրում մուտք գործել հինդուիստական տաճարների ներքին տարածքներ: Տեղի մշակութային և սոցիալական նորմերի միջավայրին համապատասխան առաջին օգնության գործողություններ պլանավորելիս կարևոր է հասկանալ՝
 - ա. Տարածքի կրոնական հավատալիքները:
 - բ. Նախընտրելի լեզուն և հաղորդակցության ձևերը:
 - գ. Ժառանգության փրկության և պահպանության գործում տղամարդկանց ու կանանց դեր(եր)ը և ներգրավվածությունը:
 - դ. Ազգային փոքրամասնությունների ժառանգության ներառումը կամ ներկայացվածությունը տվյալ տարածքի հիմնական ժառանգության հատվածում:
 - ե. Մշակութային ժառանգության վերականգնման գործում արտաքին աջակցության ակնկալիքները:
4. Ինչպիսիքն էր աղետից տուժած մշակութային ժառանգության վիճակը նախքան պատահարը. այսինքն՝ ֆիզիկական ինչ վիճակում էր և որո՞նք էին խոցելի կողմերը: Այն վերականգնվել էր: Վերականգնման ընթացքում էր: Լավ էր պահպանվում: Փաստաթղթավորումը պատշաճ էր: Այս տեղեկությունները կարելի է ստանալ այն հաստատություններից կամ անհատներից, որոնք զբաղվում են խնդրո առարկա հանդիսացող մշակութային ժառանգության արժեքներով:



Կարևոր է բացահայտել և փաստաթղթավորել տեղի մշակութային ժառանգությունը նախքան ճգնաժամը, որպեսզի հնարավոր լինի հետագայում բացահայտել ցանկացած վնաս, եթե պատահար տեղի ունենա: Փաստաթղթավորման ուսուցումը, ինչպես նաև լուսանկարների միջոցով վնասի արձանագրումը պետք է հանձնարարել տեղական որևէ հաստատության անձնակազմի անդամներին: (Ավելին իմանալու համար՝ տես **«Տեղում վնասի և ռիսկերի գնահատում» բաժինը**):

5. Արդյոք կան արտակարգ իրավիճակների կառավարման գործող ծրագրեր՝ տուժած մշակութային ժառանգության համար: Եթե այո, ապա հավաքե՞ք մշակութային ժառանգության փրկության տեղական արձագանքման գործողությունները համակարգող անձի(անձանց) կոնտակտային տվյալները:
6. Ինչպիսի՞ վնաս է հասցվել տարածքի մշակութային ժառանգության արժեքներին: Տեղեկությունը կարող եք հավաքել տեղի վստահելի աղբյուրներից:



Իրենց կրոնական հավաքավայրերի համաձայն՝ տեղի համայնքի կամավորները, անձնական անվրանգություն անտեսելով, աշխատում էին բոկոպոն՝ փրկելու Սյանմարի Բագան քաղաքում 2016-ին երկրաշարժից փրոժած բուդդայական տաճարների և պագոդաների բեկորները: Տեղի հավաքավայրերը և ավանդույթները միշտ կազդեն մշակութային ժառանգության առաջին օգնության ցուցաբերման վրա: Այնուամենայնիվ, նախքան պատահարը պետք է ջանքեր գործադրել, որ տեղական համայնքները զիտակցեն առանց համապատասխան անվրանգ հանդերձանքի մշակութային ժառանգության փրկության ռիսկերը: *Լուսանկարը՝ Ապարնա Թանդոնի, ICCROM:*



Սահմանել շահագրգիռ կողմերին և դերակատարներին



1. Ովքեր են աղետից տուժած տարածքում **մշակութային ժառանգության արժեքներ**ի սեփականատերերը (հաստատություններ/անհատներ/սոցիալական խմբեր):
2. Հավաքեք նրանց կոնտակտային տվյալները և, հնարավորության դեպքում, կապ հաստատեք նրանց հետ՝ մշակութային ժառանգությանը հասցված ցանկացած վնասի մասին նախնական տեղեկություն ստանալը:
3. Ովքեր են այն մարդիկ կամ որո՞նք են համայնքները, որոնց ֆինանսական դրությունը կախված է մշակութային ժառանգության արժեքներից:
4. Ո՞վ է պատասխանատու արտակարգ իրավիճակների արձագանքման աշխատանքների համակարգման համար և ո՞վ է վերահսկում աղետից տուժած տարածքների հասանելիությունը: Հավաքեք նրանց կոնտակտային տվյալները, որոնք, ըստ անհրաժեշտության, հետագայում կօգտագործվեն տեղում գնահատման ժամանակ:
5. Տեղական ո՞ր համայնքները, կամավորական խմբերը կամ տեղում աշխատող անձնակազմը կարող են օգնել վնասը և ռիսկերը գնահատելու, ինչպես նաև անվտանգության ու կայունացման միջոցներ ձեռնարկելու հարցում:
6. Արտակարգ իրավիճակի արձագանքման ո՞ր խմբերն են ունակ առաջին օգնություն ցուցաբերել տուժած մշակութային ժառանգությանը, օրինակ՝ հրշեջները, ռազմական կամ քաղաքացիական պաշտպանության հաստատությունները:
7. Ինչպիսիք ռեսուրսներ կարող են տրամադրել աղետից տուժած ժառանգության շահագրգիռ կողմերը:
8. Ո՞րն է արտակարգ իրավիճակների գլխավոր դերակատարների և շահագրգիռ կողմերի համագործակցության մակարդակը:



Սահմանելով շահագրգիռ կողմերին և դերակատարներին

Տեսողական քարտեզ կազմելը արդյունավետ գործիք կարող է լինել մշակութային ժառանգության առաջին օգնության ժամանակ շահագրգիռ կողմերի և դերակատարների միջև բարդ հարաբերությունները, ինչպես նաև նրանց համապատասխան հետաքրքրություններն ու դերերը պարզելու և հասկանալու գործում: Ինչպե՞ս: Դիտարկենք հետևյալ էջի օրինակը, որը բացահայտում է «Ա» երկրի կրոնական ժառանգության վայրում տեղի ունեցած ումբի պայթյունից հետո շահառուներին ու դերակատարներին: Պատահաբար տեղի է ունեցել շարունակվող հակամարտության իրավիճակում:


Ա երկրի զինվորականները պատասխանատու են տուժած տարածքում խաղաղապահ և հակահարձակողական գործողությունների համար: Ներկայումս նրանք վերահսկում են տարածքի մուտքը:

Համայնքի անդամները, ովքեր ապրում են մոտակայքում, ամբողջությամբ չեն վստահում զինվորականներին: Նրանք կապված են կրոնական վայրին ու ցանկանում են փրկել այն:

Այլ գլխավոր շահագրգիռ կողմերը և դերակատարներն են՝

- Հնությունների պետական խորհուրդը, որը կրոնական վայրում վնասներ կրած շինություններին և օբյեկտներին առաջին օգնություն ցուցաբերելու փորձ ունի:
- Վնասված սրբավայրի Կրոնական խորհուրդը, որը Հնությունների պետական խորհրդի հետ սերտ հարաբերություններ չունի, բայց որից պետք է խորհրդակցել նախքան Հնությունների պետական խորհրդին կապված արված առաջին օգնության միջոցառումներ իրականացնել:
- Մշակութային ժառանգության պահպանության օտարերկրյա կազմակերպություններ, որոնց դիմում է Հնությունների պետական խորհուրդը՝ ֆինանսական և տեխնիկական օժանդակություն ստանալու համար:
- Մշակութային ժառանգության տեղական մասնագետներ, որոնք գիտեն վայրի պատմությունը և ունեն վնասը գնահատելու և վնասված մշակութային ժառանգության կայունացման ու պաշտպանության փորձ:





<p>○ Դերակատար / Շահագրգիռ կողմ</p> <p>○ Դերակատար</p>	<p>● Տեղական քաղաքացիական հասարակություն և համայնքային խմբեր</p> <p>● Մշակութային ժառանգության առաջին օգնության համար օտարերկրյա օժանդակություն</p> <p>● Պետական մարմիններ</p>	<p>Ազդեցության մակարդակ</p> <p>Ցածր ○</p> <p>Միջին ○</p> <p>Բարձր ○</p>	<p>Հարաբերություն</p> <p>Թույլ - - - -</p> <p>Միջին —</p> <p>Ուժեղ —</p>
--	--	---	--

Սահմանելով տվյալ իրավիճակի բոլոր շահագրգիռ կողմերին ու դերակատարներին և բացահայտելով նրանց շահերն ու փոխհարաբերությունները՝ շահագրգիռ կողմերի և դերակատարների քարտեզը կօգնի պարզաբանել՝

- Ո՞վ կարող է մուտք գործել աղետից տուժած մշակութային ժառանգության վայր:
- Ո՞վ կարող է հոգալ մշակութային ժառանգության առաջին օգնության ծախսերը:
- Ո՞վ կարող է թույլատրել սկսել մշակութային ժառանգության համար առաջին օգնության միջոցառումները:
- Ո՞ւմ կարելի է դիմել խորհրդատվության համար և ներառել համայնքային հարցերի մակարդակում:
- Ո՞վ կարող է տրամադրել տեղեկություն, որն անհրաժեշտ է համատեքստին հատուկ արձագանքելու համար՝ հաշվի առնելով տեղական կարիքները:

Շահագրգիռ կողմերի ու դերակատարների քարտեզը թույլ է տալիս ավելի լավ հասկանալ բոլոր նրանց միջև առկա համապատասխան շահերը և ուժերի հարաբերությունը, որն իր հեթին օգնում է խուսափել հնարավոր տարածայնություններից ու թյուրըմբռնումներից:



Վերլուծել տեղեկությունը

1. Վերլուծել ստացված տեղեկությունը և առանձնացնել մշակութային ժառանգության արժեքները, որոնք՝
 - ա. ամենից կարևոր են,
 - բ. մեծ վնաս են կրել,
 - գ. որոշ վնասներ են կրել և պաշտպանված չեն երկրորդական վտանգներից, որոնք կարող են հանգեցնել հետագա վնասների, եթե անուշադրության մատնվեն:
2. Բացահայտել մշակութային ժառանգության այն արժեքները, որոնք պահանջում են տեղում վնասի և ռիսկերի գնահատում: Մշակութային ժառանգության այն արժեքները, որոնք կրել են մասնակի կամ մեծ վնասներ և գտնվում են հետագա կորուստների վտանգի տակ, պետք է տեղում գնահատվեն առաջնահերթ: Նույն կերպ պետք է ընտրել կարևոր նշանակություն ունեցող և վտանգված նմուշները՝ տեղում գնահատելու համար:
3. Նկատի ունեցեք, թե ինչ մասնագետների կարիք կունենաք տեղում վնասի և ռիսկերի գնահատման համար, ինչը կարող է նաև պահանջել նաև տեղանքի և դրա շինությունների (եթե կան այդպիսիները) անվտանգության ընդհանուր գնահատում: Օրինակ՝ ջրհեղեղից հետո պատմական շինության և հավաքածուի տեղում գնահատման համար անհրաժեշտ կլինի այնպիսի նախագծող ճարտարագետի օգնությունը, որը տեղյակ է ջրից վնաս կրած մշակութային ժառանգության կառույցներից և ֆոնդապահի ներգրավվածությունը, որը կարող է գնահատել վնասը, ինչպես նաև քայքայման ու բորբոսի վտանգները: Նույն կերպ մշակութային արժեքների հետպատերազմյան վնասի գնահատումը կարող է առաջին հերթին պահանջել պայթուցիկ սարքերի առկայության անվտանգության ստուգում: Ուստի ջանքերը մեկտեղելու համար պետք է ապահովել, որ արտակարգ իրավիճակների արձագանքման գործողությունները համակարգող հաստատության ներկայա-



Արտակարգ իրավիճակի մակարդակից և ծավալից կախված՝ արձագանքման աշխատանքների շրջանակներում աղետից տուժած տարածքում իրականացվում են շենք-շինությունների, ինչպես օրինակ՝ դպրոցների, հիվանդանոցների և տների օգտագործելիության գնահատումներ, որի ժամանակ միշտ չէ առաջնահերթությունը տրվում մշակութային ժառանգության օբյեկտներին:

ցուցիչը մասնակցի մշակութային ժառանգության իրավիճակի վերլուծության գործընթացին:

4. Հիմնվելով առկա տեղեկատվության վրա՝ վերլուծել յուրաքանչյուր վայրի համար պահանջվող անվտանգության անհետաձգելի գործողությունները (տե՛ս էջ 73): Օրինակ՝ արդյոք պետք է տարածքը ծածկել, թե՞ այն հսկելու համար պետք է պահակ նշանակել: Ոչ նյութական ժառանգության դեպքում հաշվի առեք աղետից վերականգնվելու այն աջակցության տեսակը, որի կարիքն ունի տվյալ համայնքը:
5. Սահմանել պարագաների ու սարքավորումների տեսակները (Գործնական ուղեցույց, տե՛ս էջ 9), որը ձեզ անհրաժեշտ է կլի-նի տեղում վնասի և ռիսկերի գնահատման համար:
6. Օգտագործելով շահագրգիռ կողմերի ու դերակատարների քարտեզը՝ սահմանել, թե նրանցից ովքեր կարող են ձեզ թույլատրել տեղում աշխատել, ապահովել մուտքի հասանելիությունը, ռեսուրսներ տրամադրել, կազմակերպել մատակարարումները և մասնագիտական խորհրդատվություն տրամադրել՝
 - ա. տեղում վնասի և ռիսկերի գնահատման համար,
 - բ. յուրաքանչյուր վայրում անվտանգության ու կայունացման գործողությունների համար,
 - գ. յուրաքանչյուր վայրում իրականացված գնահատման ու մշտադիտարկման համար:
7. Հիմնվելով աղետից տուժած տարածքում տեղական նախընտրելի լեզվով (լեզուներով) հասանելի տեղեկության կամ հաղորդակցման միջոցների վրա՝ ռազմավարություն սահմանել՝ արտակարգ իրավիճակների դերակատարների, շահագրգիռ կողմերի, աղետից տուժած համայնքների և լրատվամիջոցների խմբերի հետ հաղորդակցության համար:



Տեղում առաջին օգնության գործողությունների պլան

Հավաքագրված ողջ տեղեկությունը վերլուծելուց հետո օգտագործել արդյունքները՝ մշակութային ժառանգության առաջին օգնություն ցուցաբերելու ռազմավարական պլան մշակելու համար՝ ընդգծելով հետևյալը.

1. Տեղում իրականացվող գործողությունների կանխատեսված ժամանակը, ծավալը, շրջանակը, ծախսերը և նպատակները:
2. Ներգրավված հաստատությունների, արտակարգ իրավիճակների դերակատարների, մշակութային արժեքների փրկարարների և կամավորական խմբերի դերերն ու պատասխանատվության տիրույթները:
3. Պաշտոնական թույլտվություններ և համայնքահեն խորհրդատվություններ, որ անհրաժեշտ են տեղում գնահատման, անվտանգության ու կայունացման միջոցառումներ սկսելու համար:
4. **Հաղորդակցության պլան.** հաղորդակցության ինչպիսի միջոցներ են օգտագործվելու, ով է պատասխանատու:
5. Տեղում աշխատելու համար պահանջվող նախապատրաստություն և ռեսուրսներ՝ ներառյալ մշակութային ժառանգության արժեքների հատուկ փաստաթղթավորում նախքան պատահարը և տեղում աշխատանքների համար անհրաժեշտ արտակարգ իրավիճակների պարագաների և սարքավորումների ցանկեր:
6. Տեղում վերապատրաստման կամ կողմնորոշման վարժանքի տեսակը, որն անհրաժեշտ է կամավորներին և արտակարգ իրավիճակների արձագանքման խմբերին՝ նախքան առաջին օգնություն ցուցաբերելը:
7. Առաջին օգնության ցուցաբերման անվտանգության և որակի վերահսկման չափանիշները:
8. Գնահատման չափանիշները և ձևերը. ով է իրականացնելու գնահատումը, ինչպե՞ս:
9. Մշտադիտարկման կարգը. ով է իրականացնելու, ի՞նչ ժամանակացույցով:



Հիշեք, որ վնասի և դիսկերի տեղում գնահատումն ավելի մանրամասն տեղեկություն կտրամադրի, ինչը կարող է փոփոխել կամ կատարելագործել առաջին օգնություն իրականացնելու ռազմավարական պլանը:





Ի՞նչ է հակամարտության վերլուծությունը:

Հակամարտության վերլուծությունը գործիք է, որն օգնում է բացահայտել հակամարտության հիմնական պատճառները և հասկանալ՝ որոնք են այն խթանները, որ կարող են թաքնված հակամարտությունը վերածել ակտիվ բախման: Այդ խթանները կարող են ներառել մշակութային ժառանգության միտումնավոր թիրախավորում:

Ինչպե՞ս իրականացնել հակամարտության վերլուծություն:

Ստորև ամփոփ ներկայացված է հակամարտության վերլուծության եռաստիճան մեթոդը. այն հիմնված է Միացյալ Թագավորության Միջազգային զարգացման վարչության ուղեցույցի վրա և կարող է կիրառվել՝ մշակութային ժառանգության առաջին օգնության ու վերականգնման առաջնահերթությունները բացահայտելու համար:

1. Հակամարտության պատճառների վերլուծություն.

Հակամարտության պատճառները հասկանալու համար՝ անհրաժեշտ է վերլուծել քաղաքական, սոցիալական, տնտեսական և անվտանգային խոցելի կողմերը: Այսպիսի վերլուծությունը պետք է ներառի տարբեր տեսակետներ, ինչպես նաև հետևյալ տարրերը՝

- ա. Համատեքստի ընդհանուր վերլուծություն (հակամարտության պատմությունը, ֆիզիկական և ժողովրդագրական առանձնահատկություններն ու սոցիալ-տնտեսական անհավասարությունները),
- բ. լարվածությունների և հակամարտության սկզբնաղբյուր(ներ)ի քարտեզ, որը կարող է ներառել մշակութային խորհրդանիշեր,
- գ. տարբեր ոլորտներում լարվածության սկզբնաղբյուրների միջև կապերի բացահայտումը՝ ներառյալ մշակութային ժառանգության ոլորտում:

2. Դերակատարների վերլուծություն. ովքեր են ազդում հակամարտության վրա կամ ազդվում դրանից: Ուշադրություն է դարձվում կարճաժամկետ ազդակների և շահերի վրա, որոնք պետք է ներառեն՝

- ա. ուղղակիորեն կամ անուղղակիորեն հակամարտության մեջ ներգրավված բոլոր դերակատարների ցանկը,





- բ. ինչպես վերլուծել բոլոր կողմերի շահերը, հարաբերությունները, կարողությունները և խաղաղության օրակարգը խթանող այլ հանգամանքները,
- գ. տեսողական քարտեզագրում:

Նկատի ունեցեք՝ մշակութային ժառանգությանն առնչվող հակամարտությունները վերլուծելու համար՝ 2-րդ քայլը պետք է ներառի շահերի և հետաքրքրությունների քարտեզագրում՝ հաշվի առնելով աղետից տուժած մշակութային ժառանգությունը:

3. Հակամարտության դինամիկայի վերլուծություն. վերաբերում է հակամարտության աճի, նվազման կամ կայուն մնալու հավանականության գնահատմանը, ինչպես նաև առկա երկարաժամկետ և կարճաժամկետ ազդակներին:

Այն պետք է ներառի՝

- ա. երկարաժամկետ ուղղությունների վերլուծություն,
- բ. հնարավոր կարճաժամկետ ազդակների գնահատում,
- գ. հակամարտության դինամիկան արագացնող կամ դանդաղեցնող հնարավոր գործոնների (հաշվի առնել հաստատությունները և զուգահեռ գործընթացները) գնահատում,
- դ. հակամարտության հնարավոր սցենարներ:

Նկատի ունեցեք՝ վաղ վերականգնման ժամանակ (տես էջ 125) տուժած մշակութային ժառանգության ռիսկերը վերլուծելու նպատակով, այս քայլը պետք է նաև գնահատի, թե հակամարտող կողմերն ինչպես կընկալեն մշակութային ժառանգության վերականգնման ուղղությամբ ձեռնարկվող գործողությունները:

Տես հղումները, էջ 155:




ԻՆՉ Է ՀԵՏԵՎՈՒՄ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆԸ:

Ձեր տարածքում ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿԻՑ ՀԵՏՈ դուք իրականացրել եք իրավիճակի վերլուծություն բազմաթիվ շահագրգիռ կողմերի, համայնքի անդամների և արտակարգ իրավիճակների համապատասխան դերակատարների հետ: Դուք բացահայտել եք նյութական և ոչ նյութական այն արժեքները, որոնք վնասներ են կրել և/կամ գտնվում են հետագա վնասի վրանգի տակ:

Որո՞նք են ձեր հաջորդ քայլերը:
Պարզելու համար՝ կարդացե՛ք:

ՔԱՅԼ ԵՐԿՐՈՐԴ
ՏԵՂՈՒՄ ՎՆԱՍԻ
ԵՎ ՌԻՍԿԵՐԻ
ՀԵՏՊԱՏԱՀԱՐԱՅԻՆ
ԳՆԱՀԱՏՈՒՄ



Ինչ է տեղում վնասի և ռիսկերի հետպատահարային գնահատումը:

Իրավիճակի վերլուծությունն օգնում է վերհանել նյութական և ոչ նյութական մշակութային ժառանգության այն արժեքները, որոնք պահանջում են տեղում անհապաղ զննումներ կատարել: Սա կոչվում է տեղում վնասի և ռիսկերի հետպատահարային գնահատում:

Նման գնահատումների համար մշակութային ժառանգության արժեքների ընտրությունը հիմնված է կրած վնասի չափի և հետագա վնասի ռիսկի համապատասխան **նշանակության** վրա:

Տեղում վնասի և ռիսկերի գնահատումը ներառում է վնասների ու կորուստների տեսազննում և փաստաթղթավորում: Այն արդյունավետ է անմիջական ռիսկերի գնահատման համար, որոնք, եթե անտեսվեն, մշակութային ժառանգությանն ավելի մեծ վնաս կհասցնեն: Հիմնվելով նախքան պատահարը առկա տեղեկատվության վրա՝ այն արձանագրում է նյութական վնասի չափը և թե ինչն է հնարավոր փրկել: Բացի այդ՝ գնահատում է կորուստները. օրինակ՝ թե ինչպես է աղետն ազդել մարդկանց, նրանց եկամտի ու ենթակառուցվածքների վրա:

Կարևոր է իրականացնել վնասի և ռիսկերի հետպատահարային ամբողջական գնահատում մշակութային ժառանգության բոլոր տեսակների համար. այն է՝ **չարժական, անչարժ և ոչ նյութական**: Այլապես այն կհանգեցնի ժամանակի և ռեսուրսների ոչ արդյունավետ օգտագործմանն ու վերականգնման կարիքների սխալ գնահատմանը: Սա էական է, քանի որ այն կամբողջացնի **ռազմավարական պլանը**՝ տեղում իրականացվող գործողությունների համար, որ նախանշվել էին իրավիճակի վերլուծության ընթացքում:



Թիմն իրականացնում է տեղում վնասի և ռիսկերի գնահատում
Կարմանդոլի Հանուման Դոկա պալատ-թանգարանում, Նեպալ, 2015թ.:
Լուսանկարը՝ ICCROM-ի:

Ինչո՞ւ իրականացնել տեղում վնասի և ռիսկերի գնահատում:

Աղետից տուժած տարածք(ներ)ի առաջնային գննումը թույլ է տալիս լրացուցիչ տեղեկություն հավաքել տարածքի/շինության/առարկայի վիճակի մասին, որը հնարավոր չէի լինի անել կամ ստուգել իրավիճակի վերլուծության ընթացքում:

Տեղում արված գնահատումը հնարավորություն է տալիս՝

- Գնահատել տուժած մշակութային ժառանգության ֆիզիկական վիճակը վերջինիս միջավայրում և բացահայտել անվտանգության ու կայունացման համար անհրաժեշտ գործողությունները:
- Ուշադրություն դարձնել, թե ինչպես է աղետն ազդել շահագրգիռ կողմերի ավելի մեծ խմբի վրա, օրինակ՝ գրուցել համայնքի ներկայացուցիչների, տեղական առաջնորդների կամ առևտրականների հետ, որոնք տարածքում կամ մոտակայքում հուշանվերներ էին վաճառում կամ հյուրատների օպերատորների էին:
- Բացահայտել անմիջական ռիսկերը և դրանք մեղմելու համապատասխան միջոցները:
- Հաշվարկել անվտանգության և կայունացման գործողություններին և ամբողջական վերականգնմանն ուղղված հատուկ ծախսերը:

Տեղում վնասի և ռիսկերի գնահատումը կարող է ծառայել մշակութային ժառանգության առաջին օգնության և վերականգնման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցներն ապահովելուն: Նման գնահատումը կարող է տեղեկություն հաղորդել **աղետից հետո կարիքների գնահատմանը** (ԱՀԿԳ), որը բազմակողմանի գնահատման մեթոդ է և օգնում է լայնածավալ աղետի հետևանքով տուժած կառավարություններին որոշելու ուղղակի ու երկարաժամկետ ազդեցությունները և վերականգնման կարիքները:




Որոշ երկրներ աղետից վերականգնվելու կարիքների գնահատման սեփական մեթոդներն ունեն: Աղետից հետո կարիքների գնահատումն իրականացվում է միայն, երբ տվյալ երկիրն օգնություն է խնդրում միջազգային կազմակերպություններից, օրինակ՝ ՄԱԿ-ից:

Ինչպե՞ս կձեռնարկեք տեղում վնասի և ռիսկերի ամբողջական գնահատումը:

Ստորև ներկայացված է անշարժ, շարժական (առարկաներ և հավաքածուներ) և **ոչ նյութական մշակութային ժառանգության** համար տեղում իրականացվող վնասի և ռիսկերի ամբողջական գնահատման քայլերի ընթացքը:

Տեղում վնասի և ռիսկերի հետպատահարային գնահատման գործողությունների հաջորդականությունը





Պատրաստվել

Օգտագործել իրավիճակի վերլուծության արդյունքները որպես հիմք՝

1. Ձեռք բերել թույլտվություն և կոնտակտային տվյալներ

Աղետից տուժած վայր(եր) մուտք գործելու համար, հնարավորության դեպքում, թույլտվություն ստանալ խնամակալներից և արտակարգ իրավիճակների արձագանքման խմբի համակարգողից կամ միջադեպը վերահսկող հրամանատարից: Ձեռք բերել աշխատակազմի անդամների կամ պահապանների կոնտակտային տվյալները, որոնք խորքային գիտելիք ունեն աղետից տուժած մշակութային ժառանգության և դրա վիճակի մասին նախքան պատահարը:

2. Նախապատրաստել թիմին

Հավաքագրել և նախապատրաստել թիմ, որը տեղում կիրականացնի վնասի և ռիսկերի գնահատում: Թիմը պետք է ստեղծել պատահարի վտանգավորության բնույթին, արտակարգ իրավիճակի ծավալին և տուժած մշակութային ժառանգության տեսակին համապատասխան:

Խոշոր աղետի դեպքում գնահատումը կարող է իրականացվել տարբեր վայրերում, կամավորների և տարբեր բնագավառների մասնագների ներգրավմամբ, օրինակ՝ ճարտարապետների, նախագծող ճարտարագետների, թանգարանագետների, վերականգնողների և մարդաբանների:

Արտակարգ իրավիճակի բնույթից ու պատճառոված վնասից կախված՝ գնահատման գործընթացին կարող են մասնակցել զինվորականներ և արտակարգ իրավիճակների արձագանքման թիմեր, օրինակ՝ կառուցվածքային անվտանգության ճարտարագետներ:

Բացի այդ՝ խոշոր և բարդ արտակարգ իրավիճակներում նրանք կարող են նյութատեխնիկական օժանդակություն տրամադրել գնահատումն իրականացնելու համար:

Կարևոր է, որ գնահատումներն իրականացնող թիմերը վերապատրաստված լինեն՝ ճշգրիտ փաստաթղթավորում տրամադրելու համար, ներառելով՝

- ա. վնասներն ու ռիսկերն արձանագրելու համար կիրառվող գնահատման միասնական ձևաթերթեր ու հատակագծեր,
- բ. նախապես որոշված ու ստանդարտ լուսանկարներ (ընդհանուր պլան կամ խոշոր պլան)՝ մատնանշելով վնասի կամ կորստի կոնկրետ տեսակը,
- գ. հայտնաբերված վնասի նախապես սահմանված կամ ճշգրիտ աստիճանների նշում, օրինակ՝ խոշոր, միջին կամ փոքր, ինչպես նաև առարկաներին, շինություններին և ոչ նյութական

ժառանգությանը պատճառած վնասի նկարագրություն,
դ. վնասի և կորուստների վերաբերյալ տեղեկություններ հավաքելու նախապես համաձայնեցված ձևաչափերի կիրառում, որոնք հասկանալի են արտակարգ իրավիճակների ծառայության դերակատարների, շահագրգիռ կողմերի և նվիրատուների համար:

Փաստաթղթավորման ընդունված մոտեցումների, վնասի և ռիսկերի գնահատման ձևաթերթերի որոշ օրինակների համար տե՛ս «Գործնական ուղեցույցը»:

Տեղում աշխատող գնահատման թիմերի կողմնորոշումը պետք է ներառի ընթացակարգեր, որոնք ապահովում են նրանց անձնական անվտանգությունը:

Ավելին՝ տեղում գնահատում իրականացնող ընտրված կամավորները պետք է ծանոթ լինեն տեղանքի սոցիալական և մշակութային համատեքստին և կարողանան հաղորդակցվեն աղետից տուժած համայնքի ներկայացուցիչների հետ վերջիններիս լեզվով:

3. Հավաքել տեղեկություններ նախքան պատահարը

Նախքան պատահարը հավաքել հետևյալ փաստաթղթերը՝

- ա. աշխարհագրական կոորդինատներով քարտեզ՝ տուժած մշակութային ժառանգության գտնվելու վայրերով:
- բ. Տեղանքի քարտեզ կամ, առկայության դեպքում, արբանյակային վերջին պատկերը:
- գ. Հնարավորության դեպքում հավաքել հատակագծերը կամ պատրաստել էքսիզային պլան:
- դ. Տեղանքի գույքագրում ՝ շինությունների, առարկաների և ոչ նյութական տարրերի տեսակի, քանակի ու տեղակայման նկարագրությամբ:
- ե. Աղետից տուժած վայրերի, շինությունների, առարկաների և ոչ նյութական մշակութային ժառանգության արժեքների՝ նախքան աղետն արված լուսանկարներ (գլխավորապես ընդհանուր կամ ամբողջական պլաններ):



Հաշվի առեք, որ կախված աղետից՝ տուժած մշակութային ժառանգության տեղեկության տեսակը և նշանակությունը զգալիորեն կտարբերվեն: Մեկ մշակութային հաստատության, օրինակ՝ թանգարանի համար մանրամասներով հատակագիծը և գույքացանկն ավելի մեծ նշանակություն ունեն են, քան մասշտաբային շարքի տեղագրական քարտեզը: Նույն կերպ մեծ տարածքին վնաս հասցրած աղետի դեպքում առանձին կառույցների/շինությունների հատակագծերը կարող են չափազանց շատ մանրամասներ պարունակել գնահատման նպատակների համար:



4. Գործիքներ և սարքավորումներ

Վնասը և ռիսկերը արձանագրելու համար հավաքել գործիքներ, ինչպես օրինակ՝ լրացուցիչ մարտկոցներով տեսախցիկ և վնասի ու ռիսկերի գնահատման ձևաթերթ (տե՛ս «Գործնական ուղեցույցը»), որը հիմնված է համատեքստի վրա և հարմար է օգտագործել:

Հավաքել վտանգավոր պատահարին համապատասխան անձնական անվտանգության պարագաներ. օրինակ՝ հեղեղից տուժած տարածքում գնահատում իրականացնելու համար համոզվեք, որ ունեք ջրակայուն կոշիկներ ու պաշտպանիչ դիմակներ՝ վարակները կանխելու համար (տե՛ս անհատական պաշտպանության միջոցների ցանկը «Գործնական ուղեցույցում»)

5. Լոգիստիկա և հաղորդակցման միջոցներ

Տեղում իրականացվող գնահատման համար պատրաստել բյուջե՝ հաշվի առնելով հետևյալ ծախսերը.

ա. Ճանապարհաձախս

բ. Կեցություն

գ. Սնունդ և խմելու ջուր

դ. Ապահովություն և անվտանգություն

ե. Կապի միջոցներ

զ. Գնահատման ժամանակ տվյալների գրանցման սարքավորում

է. Պարագաներ՝ տեղանքի նախնական անվտանգությունն ապահովելու համար, օրինակ՝ պարաններ, նախազգուշական ժապավեն, նշաններ, ցուցանակներ, բրեզենտներ և այլն

ը. Անձնակազմ



Նախահաշիվը պատրաստ լինելուն պես ապահովեք անհրաժեշտ գումարը և միջոցներ ձեռնարկեք նյութերի մատակարարման համար:

Իտոշոր արտակարգ իրավիճակի դեպքում, որը ներառում է բազմաթիվ վայրեր, աղետից տուժած վայրի մոտակայքում հիմնեք ճամբարային գրասենյակ, որը կձառայի որպես համակարգման կենտրոն և տեղում գնահատում իրականացնող թիմերի գործողությունների հենակետ:



6. Համակարգեք ձեր պլանը

Համակարգեք ձեր պլանը տարածքում գործող արտակարգ իրավիճակների այլ դերակատարների և գերատեսչությունների հետ: Դա անհրաժեշտ է, քանի որ հասարակական շենքերի կառուցվածքային անվտանգությունը և օգտագործելիության գնահատումները կարող են իրականացվել միաժամանակ: Նման շինությունները սովորաբար ներառում են թանգարանները, գրադարանները, արխիվները և մշակութային ժառանգության կառույցները:

Նույն կերպ արտակարգ իրավիճակների կառավարման ծառայությունները մշակութային ժառանգության վայրերի բաց տարածքներում կարող են ստեղծել ժամանակավոր ապաստաններ: Նրանց աշխատանքը կարող է համընկնել տեղում իրականացվող գնահատումների և մշակութային ժառանգության անվտանգության և կայունացման աշխատանքների հետ:



Մշակութային ժառանգության վայրերում առաջին օգնության համար ժամանակավոր ապաստաններ ստեղծելիս խորհրդակցեք տարածքի խնամակալների հետ, որոնք կուղղորդեն տարածքն անվտանգ օգտագործելու հարցում:



Ջնեք վայրը

1. Ներս մտքեք, շրջեք տարածքով և պարզեք՝ տարածքի մուտքերը բաց են, թե՛ փակ: Տարածքի հատակագծի վրա նշեք մուտքերը:
2. Պարզեք, նշեք և, անհրաժեշտության դեպքում, պատրաստեք դեպքի վայր տանող անվտանգ մուտքի ուղիներ՝ հատկապես մեքենաների համար ապահովելով հասանելիություն և կայանելու հնարավորություն: Տարածքն արագ լքելու անհրաժեշտության դեպքում նշեք նաև անվտանգ ելքերը և տարհանման ուղիները՝ դեպի անվտանգ գոտիներ:
3. Եթե շինության վրա առկա են տեսանելի վնասներ, խորհրդակցեք նախագծող ճարտարագետի հետ: Եթե մուտքն անվտանգ է, հատակագծի վրա նշեք ներքին անվտանգ մուտքի ուղին: Եթե հատակագիծ չկա, ստեղծեք էսքիզային հատակագիծ:
4. Բացահայտեք հիմնական կոնստրուկտիվ տարրերը. արդյո՞ք կառույցն ունի կարկասային, թե՛ պատային կրող համակարգ: Ինչ տեսակի է տանիքը: Սա կօգնի որոշել շինության ամենախոցելի հատվածները, որոնց մասին պետք է տեղյակ լինեն



Պահպանեք հեռավորություն պատից՝ դրա բարձրության չափով, քանի դեռ չի իրականացվել պատի ամրակայման նախնական գնահատում: Հեռու մնացեք առանց հիմնակմախքի (կրող) ճակտոնային պատերից, որոնք ավելի բարձր են, քան մյուս պատերը և որպես կանոն՝ ավելի թույլ (տե՛ս լուսանկարը):



Ճակտոնային պատ, Գուջրաթ, Հնդկաստան, 2015թ.:
Լուսանկարը՝ Ռոհիթ Զիզյասուի:

մշակութային ժառանգությանը առաջին օգնություն ցուցաբերողները և կամավորները:

5. Արտակարգ իրավիճակների ծառայության տեղի մասնագետների հետ բացահայտել դեպքի վայրում և նրա շրջակայքում առկա անվտանգ աշխատանքի պայմաններն ու պահեստային այն տարածքները, որոնք կամավորները և առաջին օգնություն ցուցաբերողները կարող են օգտագործել անվտանգության ու կայունացման գործողություններ իրականացնելու նպատակով:.



*Երկրաշարժից վնասված պատմական կրող կառույց, Իսպանիա, 2017թ.:
Լուսանկարը՝ Էյսուկե Նիշիկավայի:*


6. Բացահայտեք և արձանագրեք հիմնական ծառայություններին ու ենթակառուցվածքներին հասցված վնասները, օրինակ՝ էլեկտրականություն, ջրամատակարարում և այլն: Եթե դա դեռ չի արվել, անջատեք ջուրը, էլեկտրականությունն ու գազը: Հիշեք, որ դուք խմելու ջրի պաշարի և էլեկտրականության կարիք կունենաք, որպեսզի հետագայում ամրակայեք դեպքի վայրի օբյեկտները:
7. Պարզեք՝ արդյոք տարածքում կան արտաքին կամ անցանկալի բեկորներ, կամ վտանգավոր թափոններ կամ քիմիական նյութեր, որոնք անհրաժեշտ է ոչնչացնել: Եթե այո, ապա նշեք դրանց գտնվելու վայրը տարածքի քարտեզի վրա: Նման դեպքերում պետք է կանչել հատուկ մասնագիտացված խմբերի, որոնք ունեն աղետից մնացած բեկորներն ու վտանգավոր թափոնները վնասագերծելու և դրանցից ազատվելու համապատասխան փորձ: Միևնույն ժամանակ ստուգեք՝ արդյոք տարածքում կան շինության կոտորված կտորներ կամ դեկորատիվ տարրերի բեկորներ, որոնք պետք է փրկել: Քարտեզի վրա նշեք դրանց տեղակայման վայրը:



Արձանագրել աղետի պատճառած վնասը և ազդեցությունները

Արձանագրել մշակութային անշարժ ժառանգությանը հասցված վնասը

1. Հնագիտական տարածքի դեպքում տեղանքի քարտեզի վրա նշել վնասը, իսկ մշակութային ժառանգության հուշարձան-շենքերի (երեւ առկա են) դեպքում նշել հատակագծերի, ճակատների և կտրվածքների վրա: Հակառակ պարագայում հասցված վնասը նշեք էսքիզային հատակագծի վրա: Տարածքում կամ շենքում գտնվելիս, այնուամենայնիվ, արձանագրեք միայն խոշոր վնասը. ժամանակը սահմանափակ է լինելու, և առաջնային սպառնալիքներին դիմակայելու համար կարևոր է առաջնահերթություն տալ արձագանքման գործողություններին. օրինակ՝ թեքվածության, փքվածության, շերտազատման, մեծ և խոր ճաքերի պատճառով փլուզման եզրին հայտնված պատերի հատվածներին: Հավելյալ տեղեկության համար օգտվեք «Գործնական ուղեցույցում» նշված ժառանգության շինություններին տարբեր վտանգներից հասցված տիպական վնասների ուղեցույցից:



Էսքիզային հատակագծի նմուշ, ճակատի և կտրվածք, Հռոմ, 2018թ.:
Լուսանկարը՝ Էյտուկե Նիշիկավայի:

2. Տուժած շենքի(երի) և շինության(ների) դեպքում արձանագրեք շենքի վնասը միայն դրսից՝ ապահով հեռավորությունից, մինչև լիազորված մասնագետը ձեզ թույլ կտա ներքին զննում իրականացնել:



3. Լուսանկարեք վնասի ընդհանուր պատկերը (ընդհանուր կամ վերից վար պլանով) և նշեք լուսանկարի հղման համարը տարածքի քարտեզի/հատակագծի վրա: Գնահատման ձևաթերթում նկարագրեք վնասի տեսակը, տեղակայման վայրը և աստիճանը:
4. Նշեք այն շինությունները (ավելի մեծ տարածքի դեպքում) կամ սենյակները (մեկ շինության դեպքում), որոնք մեծ վնասներից մինչև կառուցվածքային ու ոչ կառուցվածքային տարրերի վնասներ են կրել և համապատասխան հատակագծերի վրա նշեք նրանց տեղը: Յուրաքանչյուր շինության համար պատրաստեք գնահատման առանձին ձևաթերթ և օգտագործեք այն՝ նկարագրելու վնասի տեսակն ու չափը: Հնարավորության դեպքում լուսանկարեք վնասը և նշեք լուսանկարի հղման համարը հատակագծի վրա:
5. Խոսեք տարածքում աշխատող կամ բնակվող մարդկանց հետ: Նրանք կարող են արժեքավոր տեղեկություններ ունենալ փլատակների տակ մնացած առարկաների կամ իրավիճակի մասին նախքան Ձեր ժամանումը տվյալ վայր:
6. Արձանագրեք տնտեսական կորուստները, օրինակ՝ մշակութային ժառանգության վայր կամ թանգարան մուտք գործելու համար վաճառված տոմսերի եկամտի կորուստ:

Շարժական և անշարժ մշակութային ժառանգության վնասի ու ռիսկերի գնահատման ձևաթերթերի և տեղեկատվական ցուցումների համար՝ տես Գործնական ուղեցույց, էջ 15:

Արձանագրել մշակութային ժառանգության առարկաներին և հավաքածուներին հասցված վնասը

1. Հատակագծի (եթե առկա է) կամ էսքիզային հատակագծի վրա որոշեք և նշեք սենյակի/տարածքի այն հատվածը, որտեղ կան մշակութային ժառանգության վնասված առարկաներ:
2. Օգտագործեք նախքան պատահարը կատարված **գույքագրումից** և ձեր սեփական տեսողական գննումից՝ որոշելու վնասված առարկաների քանակը և թե ինչ նյութերից են դրանք պատրաստված (օրինակ՝ քար, փայտ, թուղթ կամ մետաղ): Այս տեղեկությունը պետք է գրանցել վնասի և ռիսկերի գնահատման ձևաթղթում:
3. Փորձեք սահմանել վնասի տեսակը և չափը: Օրինակ՝ արձանագրեք՝ առարկաները կոտրված են, թե դեֆորմացված: Ստուգեք՝ առարկաները թրջված են, չոր, աղտոտված, թե այրված:

Գրանցեք ձեր դիտարկումները գնահատման թերթիկում:

4. Արձանագրեք արդյոք առարկաները ենթարկվել են շրջակա միջավայրի կամ վտանգավոր նյութերի ազդեցությանը, օրինակ՝



Վնասված քանդակներ Կարմանդոլի Հանուման Դոկա պալատում, Նեպալ, 2015թ.:
Լուսանկարները՝ Ապարնա Թանդոնի, ICCROM:Nepal 2015.

նակ՝ քիմիկատների կամ թափոնների:

5. Լուսանկարեք վնասված առարկաները: Եթե գտնեք դրանք միասին մեկ կամ մի քանի կոյտերում, լուսանկարեք յուրաքանչյուր կոյտը մեկ ընդհանուր պլանով: Նշեք լուսանկարների հղման համարները գնահատման ձևաթերթում և հատակագծի վրա:

Արձանագրել աղետի հետևանքները ոչ նյութական մշակութային ժառանգության վրա

Քննարկեք համայնքի համապատասխան խմբերի հետ (կրոնական առաջնորդներ, կանանց խմբեր, ավագներ, արհեստագործական միություններ և այլն), թե որ ոչ նյութական ժառանգության արժեքներն են տուժել և ինչպե՞ս:



Նման խորհրդատվության համար օգտագործեք իրավիճակի վերլուծության ժամանակ կազմած **շահագրգիռ կողմերի և դերակատարների քարտեզի** արդյունքները՝ բացահայտելու համայնքի համապատասխան խմբերին:

1. Ուղղորդեք համայնքին, որպեսզի նրանք միայն կարևոր փառատոներն ու միջոցառումները հաշվի չառնեն: Նկատի ունեցեք **2003 թվականի ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Ոչ նյութական մշակութային ժառանգության պաշտպանության մասին» կոնվենցիան**՝ բանավոր արտահայտությունների (ներառյալ լեզուն), կատարողական արվեստների,



սոցիալական սովորույթների, ծեսերի, տոնակատարությունների, բնությանը և տիեզերքին վերաբերող գիտելիքների/սովորույթների, ավանդական արհեստների մասին:

Գնահատումը պետք է ներառի տուժած ոչ նյութական մշակութային ժառանգության կատարումը, հասանելիությունը և փոխանցումը: Բոլոր երեքն էլ խիստ փոխկապակցված են:

2. Փաստաթղթավորեք այն նյութական արժեքները, որոնք կապված են ոչ նյութական ժառանգության հետ (ինչպես օրինակ՝ վայրեր, առարկաներ, տարազներ և գործիքներ): Նյութական արժեքները գնահատելն ամենադյուրինն է: Նույն մեթոդները կարելի է կիրառել վերը նկարագրված բաժիններում:



Հաճախ նյութական արժեքներին հասցված վնասը չի ազդում ոչ նյութական ժառանգության վրա: Օրինակ՝ ծեսերը կարելի է շարունակել իրականացնել այլ վայրում, իսկ փառատոները կարող են անցկացվել նոր տարազներով: Այդուհանդերձ, հիշեք մյուս կորուստների մասին. օրինակ՝ արհեստավորների համար շուկայի կամ գործիքների հասանելիության կորուստը կարող է նշանակել եկամտի կորուստ:

3. Հաղորդակցվեք մարդկանց հետ, այդ թվում՝ կատարողների, մասնագետների, հոգևոր առաջնորդների և ավագների: Գնահատումը պետք է արտացոլի, թե ինչպես են տուժել ոչ նյութական ժառանգության կրողները: Օրինակ՝ աղետը կարող է հանգեցնել ժառանգության կրողների գիտելիքի փոխանցմանը, ինչպես նաև կարող է հանգեցնել տեղահանմանը, որն իր հերթին կարող է բարդացնել գիտելիքի և ավանդույթների փոխանցման գործընթացը: Տեղահանումը կարող է նաև ենթադրել, որ ավանդական բժշկությամբ զբաղվողները և քահանաներն այլևս չեն կարողանա մուտք գործել սրբավայրեր, որպեսզի ծեսեր իրականացնեն:

4. Սահմանեք ու գնահատեք ավանդույթները և գիտելիքը: Գնահատման այս քայլը ամենաբարդն է. լավ իմացություն է պետք՝ հասկանալու, թե ինչպես է զարգացել խնդրո առարկա ոչ նյութական ժառանգությունը, որը Ձեզ թույլ կտա գնահատել աղետի հետևանքով հասցված փոփոխության ծավալը և ազդեցությունը: Շատ հաճախ գիտելիքն ու ավանդույթն ամբողջովին վերացնելու փոխարեն՝ աղետը կարող է ոչ նյութական ժառանգության էական փոփոխության պատճառ դառնալ:

Օրինակ՝ կարելի է շարունակել թափորի երթեր կազմակերպել, սակայն հաջորդները նույն երթուղով չեն ընթանա: Նույն կերպ տեղական պատմությունները կարող են տարբեր ձևով վերապատմվել՝ հաշվի առնելով վերջին աղետի դեպքերի դրվագները: Կարևոր է, որ հետպատահարի գնահատումները հաշվի առնեն աղետի հետևանքով նման իրողություններում առաջ եկած փոփոխությունները: Անպայման չէ, որ դրանք բացասական լինեն, այլ կարող են ցույց տալ ոչ նյութական ժառանգության ու դրա կրողների ճկունությունը:

Ոչ նյութական ժառանգության վրա աղետի ազդեցությունների գնահատման ձևաթերթի համար, տես Մեթոդական ձեռնարկ, էջ 22:












Գնահատեք և արձանագրեք անմիջական ազդեցության ռիսկերը

Ռիսկերի հետպատահարային գնահատումն օգնում է անհապաղ գնահատել արտակարգ իրավիճակի ժամանակ արագ փոփոխվող իրադրության ռիսկերը: Այն օգնում է սահմանել ռիսկերի նվազեցման համար անհրաժեշտ գործուն միջոցները և պատրաստվածությունը՝ խուսափելու մշակութային ժառանգությանը սպառնացող անդառնալի կորուստներից:

Ռիսկերը գնահատելու աշխատանքային գործընթացի մանրամասները ներկայացված են ստորև՝

1. Սահմանել այն հնարավոր (բնական կամ տեխնածին) վտանգները, որոնք կարող են անմիջականորեն սպառնալ մարդկային կյանքերին և/կամ վտանգել նյութական և ոչ նյութական ժառանգությունը: Դիտարկեք **առաջնային**, ինչպես նաև **երկրորդական** ռիսկերը: Օրինակ՝ երկրաշարժը՝ որպես առաջնային ռիսկ, կարող է երկրորդական այնպիսի ռիսկեր հրահրել, ինչպիսին են ցունամին, ջրհեղեղը, հրկիզումը կամ վանդալիզմը: Եթե այս ռիսկերի աղբյուրները մեկուսացված են, սահմանեք դրանց տեղը մշակութային ժառանգության վայրի/շինության/համայնքի ներսում ու շրջակայքում:

Առաջնային ռիսկ	Երկրորդական ռիսկ
Տարերային աղետներ	
 Երկրաշարժ	Հրդեհ, սողանք, ցունամի, հեղեղումներ
 Ջրհեղեղ	Սողանք, բորբոս, աղակալում, կոռոզիա
 Յունամի	Հրդեհ, հեղեղներ
 Փոթորիկ/Տորնադո	Հրդեհ, քամու վնաս
 Հրդեհ	Ջրից վնաս, բորբոս, աղակալում, կոռոզիա
 Հրաբուխ	Հրդեհ, սողանք, երկրաշարժ
Մարդածին վտանգներ	
 Պատերազմ	Հրդեհ, ունբակոծություն, քանդում
 Ահաբեկչություն	Հրդեհ, ունբակոծություն
 Վանդալիզմ	Քանդում, գողություն



2. Որոշեք ֆիզիկական, սոցիալական, տնտեսական, քաղաքական և մարդկային գործոնները, որոնք մշակութային ժառանգությունը ենթարկում են տարբեր ռիսկերի:

Այս խոցելիությունները կարող են սահմանվել ստորև ներկայացված նկարագրություններում՝


- ա. Օգտագործեք ձեր իրավիճակի վերլուծության արդյունքները՝ հասկանալու, թե ինչպես և ինչու է վնասվել մշակութային ժառանգությունը և ինչպես այն կարող է ենթարկվել երկրորդական ռիսկերի: Օրինակ՝ վատ պահպանված մշակութային ժառանգության կառույցը, որը վնասվել է փոթորիկից, կարող է դեռ երկրորդական այնպիսի ռիսկերի ենթարկվել, ինչպիսին են հրդեհի կամ անձրևի վնասը: Ժառանգության պահպանության բացակայությունը կարող է բխել սոցիալական կամ տնտեսական մի շարք հիմնական պատճառներից, ինչպես օրինակ՝ ռեսուրսների պակասը կամ այն դեպքերը, երբ մշակութային ժառանգությունը պատկանում է փոքրամասնության համայնքին:
- բ. Վնասն արձանագրելիս դիտարկեք, թե ինչպիսի երկրորդական ռիսկերի կարող է ենթարկվել մշակութային ժառանգությունը՝ կախված իր բնույթից: Օրինակ՝ օրգանական նյութերից կազմված թաց ու կեղտոտ առարկաները բորբոսի և վնասատուների առաջացման ավելի մեծ հավանականություն ունեն:
- գ. Տեղում իրականացավող գնահատումների ժամանակ արձանագրեք տարածքի ներսում և շրջակայքում կատարված այն գործողությունները, որոնք կարող են ստեղծել կամ մեծացնել խոցելի կողմերը և ռիսկերը: Օրինակ՝ մշակութային ժառանգության վայրի մոտակայքի բաց տարածքում մարդկանց ապաստան տալը կարող է կողոպուտի կամ վանդալիզմի պատճառ դառնալ, կամ վայրի մոտակայքում ժամանակավոր խոհանոցը կարող է տարածքը հրդեհի վտանգի ենթարկել: Վայրի շահագրգիռ կողմերի և դերակատարների հետ հարցազրույցներ անցկացրեք՝ գնահատելու սպառնալիքների, սահմանափակումների վերաբերյալ նրանց ընկալումները և կարիքները: Շահագրգիռ կողմերն ու դերակատարները կարող են ընդգրկվել մշակութային ժառանգության վայրի կառավարիչների, պահակների, անվտանգության աշխատակիցների խմբերում:
- դ. Ոչ նյութական ժառանգության դեպքում հաշվի առեք այն սոցիալական գործընթացները, որոնք ազդում են ոչ նյութական ժառանգության փոխանցման, հասանելիության և իրականացման վրա: Օրինակ՝ գիտելիքը կարող է չտուժել, բայց լայնածավալ տեղահանությունը կամ շուկաների այլևս անհասանելի լինելը կարող է նշանակել, որ միջին կամ երկարաժամ-

կետ ժամանակահատվածում ավելի երիտասարդ սերունդը կկորցնի հետաքրքրությունը կամ ի վիճակի չի լինի սովորել կամ փոխառել որոշ ավանդույթներ իր համայնքից:

3. Անմիջական ռիսկերը գնահատելու համար մշակեք ռիսկերի ամփոփաթեթը: Այն բացահայտում է, թե առաջնային ու երկրորդական ռիսկերը ինչպես կարող են փոխկապակցվել խոցելի կողմերի և ազդեցության մակարդակների հետ՝ մշակութային ժառանգության տարբեր ձևերի ու մարդկանց անվտանգության անմիջական ազդեցության հետ մեկտեղ:

Օրինակ՝ առաստաղի ճաքերը կարող են ջրի արտահոսքի պատճառ դառնալ հորդառատ անձրևների ժամանակ՝ այդպիսով վնասելով պատմական ներույթները և անմիջապես առաստաղի տակ գտնվող որմնանկարները: Կամ ցանկապատի և անվտանգության համակարգի բացակայության դեպքում վանքը կարող է ենթարկվել թալանվելու ռիսկի: Ռիսկերի ամփոփաթեթը պատրաստելիս հաշվի առեք խոցելիությունների, առաջնային ու երկրորդական ռիսկերի միջև հնարավոր կապերը և ազդեցության մակարդակները, որոնք կարող են մեծացնել աղետի բացասական ազդեցությունները (տե՛ս ստորև պատկերը):

Ռիսկերի ամփոփաթեթը մշակելը կարող է ժամանակ պահանջել: Այս աշխատանքը կարող է իրականացվել դեպքի վայրի սահմաններից դուրս, մինչ դուք տվյալներ եք հավաքում:





Տոհուկույի երկրաշարժի և ցունամիի ազդեցությունը. Ճապոնիա

2011 թվականի մարտի 11-ին Ճապոնիայի ամենամեծ՝ Հոնշու կղզու հյուսիսարևելյան ափում տեղի ունեցավ 9.0 մագնիտուդով երկրաշարժ, որին հաջորդեց հուժկու ցունամին՝ հեղեղելով արևելյան Ճապոնիայի ափերը, ջրի տակ առնելով Սենդայ քաղաքի որոշ հատվածներ, ներառյալ օդանավակայանը և բազում ավանդական համայնքներ:

Երկրաշարժից տուժել էր նաև ամբարտակը, որի հետևանքով հոսանքն ի վայր հեղեղումներ եղան: Ցունամիի հետևանքով շրջված



*Ցունամիի հետևանքով շենքի փլուզում Ճապոնիայի արևելքում, 2011թ.:
Լուսանկարը՝ Միյագի պերֆեկտուրայի խորհրդի:*

տարաներից նավթի արտահոսք էր եղել՝ հանգեցնելով հրդեհների: Ցունամիի պատճառով նաև պայթյուններ էին եղել ատոմակայանում:

Այս դեպքում երկրաշարժն առաջնային ռիսկն է և այն առաջացրել է երկրորդական այնպիսի ռիսկեր, ինչպիսին են հետցնցումները, ցունամին, հեղեղումները, հրդեհները և միջուկային պատահարը: Ծովին մոտ լինելը, Ճապոնիայի աշխարհագրական դիրքը երկրին այնպիսի վտանգների է ենթարկում, ինչպիսին են երկրաշարժերը և ցունամիները: Ավելին՝ տարածքում նավթի տանկերների և միջուկային ատոմակայանի առկայությունը ցույց տվեցին այն խոցելի





կողմերը, որոնք, իրենց հերթին, հրդեհների և ռադիոակտիվ ճառագայթման պատճառ դարձան: Վտանգավոր պատահարների այս շղթայի ընդհանուր ազդեցության հետևանքով ավելի քան 19.000 մարդ մահացավ, հարյուր հազարավորներ անտուն մնացին, ավերվեցին կարևոր ենթակառուցվածքներ, ներառյալ՝ ճանապարհները ու ատոմակայանները: Բացի այդ՝ գրանցվեց մշակութային ժառանգության վնասի ավելի քան 700 դեպք: Մշակութային ժառանգության շատ շինություններ երկրաշարժի հետևանքով կրեցին փոքր և միջին կարգի կառուցվածքային վնասներ: Աղետից տուժած տարածքներում ցունամիի ալիքները ոչնչացրին պատմական ու վերնակուլյար շինություններ և հավաքածուներ:

Ավելի խորքում, որտեղ ցունամիի ալիքները չէին հասել, հնավայրի պահոցի տարածքը և շարժական ժառանգության այլ առարկաներ տուժեցին հեղեղումից, որն առաջացել էր ամբարտակի վնասման պատճառով: Շարժական ժառանգության արժեքները նաև ռադիոակտիվ ճառագայթման ենթարկվեցին, որն իր հերթին հետաձգեց վերականգնման աշխատանքները: Աղետից տուժած վայրում հոսանքազրկումներից թրջված բնական ժառանգության արժեքները, ինչպես օրինակ՝ փայտե և թղթե նմուշները, ենթարկվեցին բորբոսի ու կենսաբանական քայքայման մյուս ձևերի վտանգին:

Տես հղումները, էջ 159:

4. Յուրաքանչյուր հայտարարված ռիսկի համար սահմանեք ռիսկի մակարդակը (ցածր, միջին կամ բարձր)՝ հիմնվելով առաջնային ու երկրորդական ռիսկերի բնույթի և հավանականության, ինչպես նաև մարդկանց անվտանգության ու ժառանգության արժեքների հնարավոր ազդեցության տեսակի վրա: Օրինակ՝ երկրաշարժից հետո, հետցնցումների ժամանակ շինության փլուզման վտանգը մեծ է՝ կառուցվածքային ճաքերի պատճառով: Այդուհանդերձ, մեկուսացված հեղեղման դեպքում նույն շենքի առաստաղի փոքր ճաքերից հորդառատ անձրևների և ջրի ներթափանցման հետևանքով՝ փլուզման վտանգը հարաբերականորեն ցածր է:

Ամմիջական ռիսկերը գնահատելու համար, տես Գործնական ուղեցույց, էջ 14:





Տվյալների հավաքագրում

1. Պարբերաբար թվայնացնել գնահատման ձևաթերթերը և էսքիզները ժառանգության յուրաքանչյուր տեսակի համար տեղում իրականացված գնահատումներից անմիջապես հետո: Դա կօգնի կանխել տվյալների կորուստը և կիսել տեղեկատվությունը հեշտությամբ կիրառելի ձևաչափով: Պետք է պլանավորեք թվայնացնել արդյունքներն առնվազն ամեն օր: Այդպես, նախքան դաշտային աշխատանքները սկսելը, համոզվեք, որ ունեք գործուն թվայնացման մեթոդ և աշխատանքի կազմակերպան գործընթաց:

Ժառանգության յուրաքանչյուր տարր կամ արժեք պետք է հեշտությամբ նույնականացվի եզակի նույնականացման համարով (տես Գործնական ուղեցույց, էջ 42):

2. Շահագրգիռ կողմերի հետ հարցազրույցների համար՝ նշումներ կամ սղագրություններ արեք ու պահպանեք մյուս տվյալների հետ: Համոզվեք, որ նշել եք աղբյուրի անունը, ամսաթիվն ու հարցազրույցի անցկացման վայրը և, հնարավորության դեպքում, հարցվողի հետ կապ հաստատելու միջոցը:
3. Ներբեռնեք ձեր տեսախցիկի լուսանկարները և հղման համարներով կցեք դրանք հատակագծերի թվային պատճեններին: Կամ ջնջեք ներբեռնված պատկերի՝ սարքի ստեղծած ֆայլի անունը կամ համարը և փոխարինեք այն ֆայլի անվանումով, որը կարճ ծածկագրերով նշում է վայրը, ամսաթիվը և վնասի տեսակը:

Սա հատկապես կարևոր է մի շարք վայրերում իրականացված գնահատումների դեպքում և/կամ երբ դրանք իրականացվել են տարբեր փուլերում: Համոզվեք, որ ֆայլերի անվանումները և ծածկագրերը ճշգրիտ ու հասկանալի են գնահատման և տվյալների հավաքման գործընթացում ներգրավված բոլոր մասնակիցների համար:

4. Գնահատման թերթիկում ամփոփված տվյալները միավորեք վնասի տեղանքի քարտեզի, հատակագծերի և լուսանկարների հետ մեկ ամբողջական ֆայլում:
5. Եթե չեք կարողացել անել դա տեղում, պատրաստեք դիսկերի մասին ձեր հաղորդումը և յուրաքանչյուր պնդման համար սահմանեք դիսկերի մակարդակը:
6. Հավաքեք, դասակարգեք ու պահպանեք դեպքի վայրից ստացված տեղեկատվությունը ստանդարտացված տվյալների շտեմարանում՝ ապահովելով հասանելիություն և վերլուծություն:



Կազմման և վիզուալիզացիայի գործիք

Պատմամշակութային անշարժ ժառանգության և մշակութային արժեքների պահուցների համար ձեր հեռախոսում կամ պլանշետում ներբեռնված **Աշխարհագրական տեղեկատվական համակարգերի (ԱՏՀ)** հավելվածը կարող է շատ օգտակար լինել տեղում իրականացվող փաստաթղթավորման համար: Վնասի և ռիսկերի գնահատման ձևաթերթերը կարելի է լրացնել առցանց՝ ԱՏՀ-ի գործիքակազմի միջոցով, և լուսանկարները կարելի է ուղղակիորեն կցել ձևաթերթերին այնպես, որ բոլոր լուսանկարները և բոլոր ձևաթերթերը միասին պահվեն: Ձեր բջջային հեռախոսը համացանցին միանալուն պես ձևաթերթերը և լուսանկարները կարող են անմիջապես տեղափոխվել տվյալների կենտրոնական շտեմարան: Կարևոր է նշել, որ ցանկացած հավելված, որը դուք ընտրում եք տվյալների արձանագրության, կազմման և վիզուալիզացիայի համար, պետք է հարմարեցնել և ձեր գնահատող թիմերին ուղղորդել՝ դաշտային աշխատանքներում այն կիրառելիս:

Տես հղումները, էջ 158:



Կազմել գնահատման հաշվետվություն

Հիմնվելով տեղանքի հարցման վրա՝ պատրաստեք գնահատման ամփոփ հաշվետվություն, որը ներառում է հետևյալ տեղեկատվությունը՝

- Տուժած մշակութային արժեքների նշանակությունը (ժառանգության վայր/հավաքածու/ավանդույթ):
- Աղետի կամ հակամարտության բնույթը: Ինչ պատահեց: Երբ: Ինչպես այն տարածվեց մշակութային ժառանգության վրա:
- Անշարժ և շարժական մշակութային ժառանգությանը հասցված վնասի նկարագրությունը և աղետի ազդեցությունը ոչ նյութական ժառանգության վրա:

Այն պետք է ներառի վնասի/ազդեցության տեսակի ամփոփ նկարագրությունը, գտնվելու վայրը (հղում անելով բազային քարտեզին, տեղանքի քարտեզին, հատակագծին կամ էսքիզային քարտեզին) և հնարավոր պատճառները:

Ոչ նյութական մշակութային ժառանգության համար նկարագրությունը կարող է ներառել մանրամասներ, թե որ ասպեկտներն են տուժել (օրինակ՝ նյութական տարրեր, մարդիկ և/կամ գիտելիքը/ավանդույթը):

- Մարդկային, հատուկ եկամուտներին և/կամ ենթակառուց-

վաճքներին վերաբերող կորուստները (եթե այդպիսիները կան) ու երկարաժամկետ բացասական ազդեցությունները տուժած մշակութային ժառանգության վրա:

- Ռիսկերի մասին հայտարարություններ, որոնք հիմնված են ժառանգության տարբեր արժեքներին սպառնացող վտանգների բացահայտման, խոցելի կողմերի և հետագա ռիսկերի վրա:
- Ժառանգության յուրաքանչյուր արժեքի համար անհրաժեշտ տեղում անմիջապես իրականացվող անվտանգության և կայունացման գործողություններ:
- Տուժած ժառանգության արժեքների անվտանգության և կայունացման համար անհրաժեշտ ռեսուրսներ և սահմանված ժամանակացույց:

Հաշվետվության մեջ պետք է նշել ամսաթիվը, հեղինակ(ներ)ին, դեպքի վայրում գնահատումներն իրականացնող անձանց անունները և կոնտակտային տվյալները, ինչպես նաև նրանց պարտականությունները: Այն պետք է ներառի նաև գնահատումների ժամանակ բոլոր հարցվածների անունները:



Թարմացնել պլանը դեպքի վայրում իրականացվող գործողությունների համար

Վնասի և ռիսկերի գնահատման ամփոփ հաշվետվությունը կարող է օգտագործվել **իրավիճակի վերլուծության ընթացքում հայտնաբերված տեղում անվտանգության և կայունացման գործողությունների** իրականացման պլանը մշակելու համար: Այն հատկապես արդյունավետ է տեղանքին հատուկ գործողությունների առաջնահերթությունները սահմանելիս, օրինակ՝ անպաշտպան, վնասված կառուցվածքային տարրերը ժամանակավոր ծածկով ապահովելու համար: Նաև օգնում է որոշել, թե տուժած մշակութային ժառանգության յուրաքանչյուր արժեքի կայունացման համար ինչպիսի ռեսուրսներ և մասնագետներ են անհրաժեշտ:



Հետպատահարային կարիքների գնահատում (ՀՊԿԳ)

ՀՊԿԳ-ի նպատակն է անցկացնել կարիքների գնահատում և մշակել վերականգնման շրջանակ, որը կներառվի հրատապ ֆինանսավորման համատեղ հայտերում (օրինակ՝ մարդասիրական հրատապ օգնության) և կարող է ծառայել որպես վերականգնման պետական առաջնահերթությունների ու դրամական միջոցների հաստատման հիմք:





Քանի որ ՀՊԿԳ-ի նպատակը դրամահավաքի դիմումների իրագեկումն է, այն սովորաբար իրականացվում է աղետից հետո՝ չորսից վեց շաբաթվա ընթացքում: ՀՊԿԳ-ի ամենաանմիջական արդյունքը հաշվետվությունն է, որը բաղկացած է երկու մասից՝ **կարիքների գնահատումից և վերականգման շրջանակից**: Այն տարբեր ոլորտային հաշվետվությունների ժողովածու է, որը ներառում է նաև մշակույթը:

ՀՊԿԳ-ը կառավարության կողմից ղեկավարվող գործընթաց է, որն իրականացվում է ՄԱԿ-ի համապատասխան գործընդերների հետ: Համատեքստից և կառավարության **կարողությունների** վրա աղետի ազդեցությունից կախված՝ կառավարությունը կարող է խնդրել ՄԱԿ-ին առաջնորդություն ստանձնել:

Գնահատման ժամանակ ՀՊԿԳ-ն ապավինում է կազմակերպությունների, համայնքների և անհատների, միջազգային կազմակերպությունների ու փորձագետների, տեղական ինքնակառավարման մարմինների, աղետից տուժած համայնքների, տեղական առաջնորդության (պաշտոնական, ավանդական և կրոնական), անվտանգության ծառայության պետերի և մասնավոր հատվածի լայն մասնակցությանը:

Շատ դեպքերում մշակութային ոլորտի համար իրականացվող ՀՊԿԳ-ը ղեկավարվում է կառավարության ու ՄԱԿ-ի կրթական, գիտական և մշակութային կազմակերպության (ՅՈՒՆԵՍԿՕ) և մշակույթի տարբեր ոլորտների փորձագետների (ճարտարապետներ, ճարտարագետներ, թանգարանագետներ, մարդաբաններ, հնագետներ և այլն) խմբի կողմից: **Մշակույթը գնահատելու առանձին գլուխ** ընդգրկվել է ՀՊԿԳ-ի հանձնարարականների սոցիալական բաղադրիչում:

ՀՊԿԳ-ը և դրա փոխազդեցությունը մշակութային ժառանգության առաջին օգնության քայլերի հետ

Թե ինչպես են **իրավիճակի վերլուծությունը և տեղում վնասի ու ռիսկերի գնահատումը** փոխազդում ՀՊԿԳ-ի հետ, կախված է յուրաքանչյուրի իրականացման ժամանակից: Սկզբունքորեն կարելի է հեշտությամբ մեկը մյուսով փոխարինել՝ կախված նրանից, թե որն է իրականացվում սկզբում:

Քանի որ ո՛չ առաջին օգնությունը, ո՛չ ՀՊԿԳ-ն հստակ ժամանակացույց չունեն, յուրաքանչյուր դեպքի համար դրանք կտարբերվեն:

Աղբյուրը՝ էլկե Սելթեր, Արևելագիտության և Աֆրիկագիտության դպրոց, Լոնդոնի համասարան, ՄԹ:

Տես էջ 159-ի հղումները:





Բարելավեք մշակութային ժառանգության արժեքների տեղում վնասի և ռիսկերի հետպատահարային գնահատման ձեր պատրաստվածությունը:

Հաշվի առեք հետևյալ հարցերը.

- Պատրաստե՞լ եք մշակութային ժառանգության բոլոր արժեքների ցանկը և ստո՞ւգել եք՝ արդյոք գոյություն ունի քարտեզ, ուր նշված են դրանց աշխարհագրական կոորդինատները:
- Ունե՞ք հստակ տեղեկություն մշակութային ժառանգության արժեքների մասին նախքան պատահարը, օրինակ՝ գույքացուցակ, հատակագծեր, լուսանկարներ և վիճակի նկարագրություն:
- Կազմե՞լ եք վնասի և ռիսկի գնահատման ձևաթղթի օրինակ, որը մշակվել է հատուկ ձեր տարածքում գտնվող մշակութային ժառանգության արժեքների տարբեր տեսակներն ընդգրկելու համար:
- Նշանակե՞լ եք ժառանգության մասնագետներ և արտակարգ իրավիճակների կառավարիչներ, որոնք ձեր տարածքում կկարողանան ստանձնել վնասի ու ռիսկերի գնահատման աշխատանքները:
- Փորձարկե՞լ եք ձեր ձևաթուղթը գնահատման թիմի հետ, մշակե՞լ եք տվյալների հավաքման և վիզուալիզացիայի միասնական համակարգ:
- Տեղում վնասի և ռիսկերի հետպատահարային գնահատման ֆինանսավորման համար ինստիտուցիոնալ պայմանավորվածություններ ձեռք բերե՞լ եք:
- Կապվե՞լ եք արտակարգ իրավիճակների կառավարման համար պատասխանատու տեղական հաստատության հետ և պայմանավորվե՞լ եք մշակութային ժառանգության վայրերի անվտանգության գնահատումների համակարգման համար:


ԻՆՉ Է ՀԱՋՈՐԴՈՒՄ ՏԵՂՈՒՄ ՎՆԱՍԻ ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆԸ:

Ձեր տարածքում ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿԻՑ ՀԵՏՈ ղուք և մշակութային ժառանգությանն առաջին օգնություն ցուցաբերող ձեր թիմն իրականացրել է **իրավիճակի վերլուծություն և տեղում վնասի ու ռիսկերի գնահատում**՝ պատահարից տուժած մշակութային ժառանգության համար: Այս երկու քայլերն իրականացվել են արտակարգ իրավիճակների համապատասխան դերակատարների հետ համակարգված և համապատասխան շահագրգիռ կողմերի ու տեղի համայնքի մասնակցությամբ: Արդյունքում ղուք կարողացել էք սահմանել կառույցները, առարկաներն ու անշարժ մշակութային ժառանգությունը անվտանգ դարձնելու և կայունացնելու առաջնահերթությունները:

Ինչպե՞ս եք շարունակելու:

Պարզելու համար՝ շարունակեք կարդալ:

ՔԱՅԼ ԵՐԵՔ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՅՈՒՆԱՅՈՒՄ



Ինչ է անվտանգությունը և կայունացումը:

Այն գործողությունները, որոնք կայունացնում են աղետից տուժած մշակութային ժառանգության վիճակն ու հետագա վնասը և կորուստը կանխում ռիսկերի նվազեցման միջոցով՝ հավաքականորեն կոչվում են անվտանգության և կայունացման գործողություններ:

Այս գործողություններն իրենց բնույթով ժամանակավոր են ու նախատեսված են վնասված ժառանգությանը համապատասխան օգնություն տրամադրել արտակարգ իրավիճակների ժամանակ՝ մինչև հնարավոր կլինի իրականացնել ամբողջական վերականգնան աշխատանքները:

Անվտանգության և կայունացման գործողությունները կախված են համատեքստից և միշտ չէ, որ հստակ հերթականություն ունեն: Այնուամենայնիվ, որպեսզի միջամտությունը հաջող ընթանա, կարևոր է մշակութային ժառանգության արժեքների կայունացման ու պահպանման գործողությունները մանրակրկիտ կերպով փաստաթղթավորել:



*Արտակարգ իրավիճակների կայունացումը գործնական աշխատարանի ժամանակ Լիբանանի Շուֆ շրջանում, 2014թ.:
Լուսանկարը՝ ICCROM-ԱԹՀԱԲ (Արաբական տարածաշրջանի ճարտարապետական և հնագիտական նյութական ժառանգություն)*

Անվտանգության և կայունացման հիմնական գործողությունները ներառում են.

- Աղետից տուժած վայրում կամ հավաքածուի շուրջ ցանկապատի տեղադրում:
- Ժամանակավոր պահոցի տրամադրում անպաշտպան մնացած կառուցվածքային տարրերի, բեկորների և առարկաների համար (տես Թուլկիթը, էջ 73):



- Մշակութային ժառանգության առարկաների **հետպատահարային տարհանում** մեկ այլ՝ ավելի ապահով, ժամանակավոր վայր:
- Վնասված մշակութային ժառանգության հավաքածուների, շինության բեկորների և հարդարանքի **փրկություն**: Այս գործողությունները ներառում են տեսակավորում և կայունացում առարկաների մակերևույթի մաքրման և/կամ չորացման միջոցով:
- Տարհանված և փրկված մշակութային ժառանգության նյութերի համար **ապահով և անվտանգ ժամանակավոր պահոցի** տրամադրում:
- Ջրհեղեղից հետո շինության կամ կառույցի **չորացում**:
- Ժամանակավոր ամրություն հաղորդելու համար **պատվարով** կամ այլ կրող կառուցվածքային տարրով ամրակայում:



Ոչ նյութական ժառանգության համար անվտանգության և կայունացման գործողությունները տարբերվում են վերը նշվածներից: Այս դեպքում առավել կարևոր է աղետից կամ հակամարտությունից անմիջապես հետո վտանգված ավանդույթի կամ գիտելիքների համակարգի շարունակականությունը: Մանրամասների համար տե՛ս ոչ նյութական ժառանգության պաշտպանության բաժինը:

Ո՞վ կարող է իրականացնել անվտանգության և կայունացման գործողություններ:



ՄԱԿ-ի խաղաղապահներն օգնում են Հայիթիի արվեստի կենտրոնի փրկարարական աշխատանքներին, 2010թ.: Լուսանկարը՝ ICCROM-ի:

Մշակութային ժառանգության վերապատրաստված փրկարարները և մշակութային ժառանգության պահպանության որակավորված մասնագետները, որոնք

ունեն արտակարգ իրավիճակներում ժառանգության պահպանման փորձ, կարող են որոշել՝ առաջնահերթություններ սահմանել և աջակցել անվտանգության և կայունացման գործողությունների իրականացմանը: Այս մասնագետները ներառում են, բայց չեն սահմանափակվում միայն վերականգնողներով, հնագետներով, համադրողներով, արխիվագետներով, շինարար-ճարտարագետներով, ճարտարապետ-վերականգնողներով, մարդաբաններով և ոչ նյութական ժառանգությամբ զբաղվող մասնագետներով:

Զինվորականները, հրշեջները, որոնողական և փրկարարական թիմերը հաճախ վերապատրաստվում են՝ իրականացնելու կառուցվածքային հրատապ ամրակայում: Այդուհանդերձ, նրանք կարող են ոչ բավարար պատկերացում ունենալ պատմական կառույցների և դրանց փլուզման մեխանիզմների մասին: Ուստի որքանով հնարավոր է, պետք է խորհրդակցել նախագծող ճարտարագետի և ճարտարապետ-վերականգնողի հետ: Արտակարգ իրավիճակների արձագանքման խումբը կարող է նաև ստանձնել և օգնել հետպատահարային տարհանման ու փրկարարական գործողություններում: Այն իրավիճակներում, երբ մուտքը սահմանափակ է կամ շինություններն անվտանգ չեն, զինվորականները կամ հրշեջները կարող են հատուկ սարքավորումներ կիրառելով՝ առարկաները փրկելու համար:

Լայնածավալ գործողությունների իրագործման համար պետք է ակտիվորեն ներգրավվեն կամավորները և տեղական համայնքի անդամները ու տեղում վերապատրաստվեն՝ հսկողության ներքո անվտանգության և կայունացման հատուկ գործողություններ իրականացնելու համար: Այդ գործողությունները կարող են ներառել փաստաթղթավորումը, առարկաների տեղափոխությունը, բեկորների տեսակավորումը, **պատվարների** պատրաստումը և գույքագրումը:

Ցանկացած արտակարգ իրավիճակ տարբեր է և պահանջում է համապատասխան արձագանք: Ուստի կարևոր է, որ նույնիսկ վերապատրաստված կամավորները, կոնկրետ գործողություններ իրականացնելիս, որոշակի ուղղորդում ստանան: Այնուամենայնիվ, ժամանակին և հետևողական առաջին օգնություն տրամադրելու համար՝ անհրաժեշտ է նախքան աղետը պատրաստել մշակութային ժառանգության և արտակարգ իրավիճակների արձագանքման մասնագետների և կամավորների:





Մշակութային ժառանգության առաջին օգնության վերապատրաստում Միջերկրական ավազանում. ՊՐՕՄԵԴԿԵ ծրագիր

ՊՐՕՄԵԴԿԵ-ն (Պաշտպանելով Միջերկրական ավազանի մշակութային ժառանգությունը աղետների ժամանակ) Իտալիայի քաղաքացիական պաշտպանության գերատեսչության բազմագործընկերային նախաձեռնություն է, որն իրականացվում է Եվրոպական հանձնաժողովի Բնակչության պաշտպանության և մարդասիրական օգնության գործողությունների գլխավոր տնօրինության ֆինանսական աջակցությամբ: Նախաձեռնության շրջանակներում ICCROM-ը հրավիրվել էր պատրաստելու թիմեր, որոնք բաղկացած էին Միջերկրական ծովի տարածաշրջանի հինգ երկրների քաղաքացիական պաշտպանության և մշակութային ժառանգության մասնագետներից: Ծրագրի նպատակներն էին զարգացնել բնական աղետներից հետո մշակութային ժառանգության առաջին օգնության կարողությունները և ընդհանուր ստանդարտ գործառնական ընթացակարգերը:

Վերապատրաստման արդյունքում մասնակից երկրները շարունակեցին պետական աշխատարաններ անցկացնել՝ պատրաստելու քաղպաշտպանության և մշակութային ժառանգության մասնագետների և այլ կամավորների, զորեղացնելով իրենց համապատասխան կարողությունները՝ մշակութային ժառանգության առաջին օգնությունն ավելի մեծ ծավալով իրականացնելու համար:

Տես հղումները, էջ 165:



Չիրա դի Կաստելո, Իտալիա, 2017թ.:
Լուսանկարը՝ ՊՐՕՄԵԴԿԵ-ի և ԻԲԲՐՈՄ-ի:

Ինչպե՞ս իրականացնել անշարժ և շարժական մշակութային ժառանգության անվտանգության ու կայունացման գործողություններ:

Մշակութային ժառանգության անվտանգության ու կայունացման գործողությունները կախված են ենթատեքստից, հետևաբար տարբերվում են:

Այդուհանդերձ, հետևյալ գործողությունները կարող են նպաստել հատուկ քայլերի բարեհաջող իրականացմանը՝ անկախ տուժած ժառանգության տեսակից և արտակարգ իրավիճակի բնույթից:

Անվտանգ դարձրեք տարածքը

Նախքան դեպքի վայրում անշարժ կամ շարժական ժառանգության կայունացման գործողություններ սկսելը՝ համոզվեք, որ այն անվտանգ է մուտք գործելու համար: Անձնակազմի բոլոր անդամներին պետք է տեղեկացնել ռիսկերի մասին և տրամադրել անհատական պաշտպանության միջոցներ (տե՛ս Գործնական ուղեցույց, էջ 10):

- 1. Տեղադրել անվտանգության պատնեշներ:** Վնասների և ռիսկերի տեղում գնահատման ավարտվելուց հետո, արգելափակեք բոլոր այն տարածքները, որոնք համարվում են վտանգավոր և աղետից տուժած տարածքի կամ հավաքածուի շուրջ տեղադրեք անվտանգության պատնեշներ:



Պարնեշները և նախազգուշական ժապավենն օգնում են նախազգուշացնել մարդկանց և պաշտպանել 2013 թվականի աղետից մեծապես փութած եկեղեցին Ֆիլիպիններում: Լուսանկարը՝ Ապարնա Թանդոնի:



Եթե կառուցվածքային կամ կախված տարրի փլուզման վտանգի կասկած կա, շրջանաձև բուֆերային գոտի ստեղծեք շուրջը՝ համոզվելով, որ գոտու շառավիղը հավասար է սլյալ տարրի բարձրությանը:

2. **Ստուգեք կոմունալ ծառայությունները:** Հնարավորության դեպքում, ստուգեք՝ արդյոք գազի, էլեկտրականության և ջրի փականները կարելի է տեղում անվտանգ օգտագործել:
3. **Տեղադրեք ցուցանակներ:** Արգելափակված տարածքների շուրջ համապատասխան ցուցանակներ տեղադրեք: Ցուցանակները պետք է լինեն մեծ, հստակ տեսանելի և հեշտ ճանաչելի անձնակազմի բոլոր անդամների համար:
4. **Ապահովեք ուղիներ:** Առանձնացրեք ուղիներ ու մուտքի ճանապարհներ և հստակ նշեք դրանք տեղանքի քարտեզի ու հատակագծի վրա (եթե առկա է): Եթե անվտանգ է ճանապարհից բեկորները հեռացնելը, արեք դա՝ տարածքի հասանելիությունն ապահովելու համար: Դա կարող է ներառել ոչ կայուն, կախված, ոչ կառուցվածքային տարրերի հեռացումը, ինչպիսին են տանիքի սալիկները, ծխնելույզները և տախտակները կամ հատակի ամրացումը, եթե մեծ անցքեր կան:



Նախքան պատմական կառույցից կհեռացնեք կախ ընկած տարրերը կամ բեկորները՝ համոզվեք, որ արձանագրել եք դրանց տեղադրության վայրը և տեսակը, ինչպես նաև պատճառոված վնասի աստիճանը: Լուսանկարեք (մեկ լուսանկար՝ խոշոր պլանով, մյուսը՝ ընդհանուր) և տեղանքի քարտեզի/հատակագծի վրա գրանցեք տարրերի ու բեկորների գտնվելու վայրերը: Եթե կառույցի տարրերը հեռացնելու որևէ կասկած ունեք, հարցրեք նախագծող ճարտարագետին՝ ինչպես դա անվտանգ անել:

5. **Ժամանակավոր պահոց տրամադրեք:** Կառուցվածքային փլուզման դեպքում թե՛ անպաշտպան կառույցները, թե՛ դժվար հասանելի վայրում հայտնված մշակութային ժառանգության առարկաները պետք է ժամանակավոր ծածկով ապահովվեն՝ մինչև հետագա գործողությունների իրականացումը: **Տես, գործնական ուղեցույցի 73 էջը:**
6. Եթե աղետից տուժած ժառանգության նմուշները բաց մնան, շաղախները և օրգանական մշակութային նյութերը կարող են արագորեն քայքայվել: Բաց մնացած մշակութային ժառանգության օբյեկտների կոյտը ծածկելը բացառապես **ժամանակավոր միջոց է**, որը մի քանի օրից ավել չպետք է տևի:
7. **Հեռացնել վտանագավոր թափոնները:** Բնական աղետից կամ

հակամարտությունից առաջացած պատահարից հետո ժառանգության վայրերը կարող են պարունակել վտանգավոր նյութեր և թափոններ, օրինակ՝ պայթուցիկ նյութեր, քիմիական նյութեր, նավթ, պոլիմերային խողովակներ, մեկուսիչ կամ հրակայուն նյութեր: Նման դեպքերում նախքան տեղում որևէ այլ գործողություն ձեռնարկելը՝ պետք է նույնականացնել դրանք և խորհրդակցել այն փորձագիտական գործակալության հետ, որը պատասխանատու է հայտնաբերված նյութերի անվտանգ հեռացման համար:



Ինչպես անվտանգ դարձնել հեղեղված տարածքը:

Ջրհեղեղի դեպքում վնասի և ռիսկերի տեղում գնահատումը պետք է ներառի ջրամատակարարման վերաբերյալ հեղեղումների դասակարգման գծով մասնագետների հետ խորհրդատվություններ. օրինակ՝ ջուրը մաքրու է (խմելու համար անվտանգ), թե՛ կեղտոտ է՝ մոխրագույն կամ սև: Երբ ջուրը դասակարգվում է մոխրագույն կամ սև, կենսաբանական աղտոտման վտանգը բարձր է, քանի որ այն կարող է պարունակել քիմիական նյութեր և/կամ կոյուղաջրեր: Նման դեպքերում կարևոր է մաքրել տեղանքը՝ խորհրդակցելով փորձագետների հետ և մեկուսացնել ախտոտված պատմական նյութերը՝ դրանք դնելով կնքված տարաների կամ պլաստիկ տոպրակների մեջ:

Տես հղումները, էջ 162:

8. Համոզվեք, որ թրջված կառույցները և մակերեսներն ամբողջովին չորացել են:

Եթե շենքը, կառույցը կամ դրվագազարդ մակերեսը ջրից զգալիորեն վնասվել են, կարևոր է չորացնել այն՝ կանխելու

ա. փայտյա տարրերի աղավաղումը և փտումը,

բ. ծեփի ճաքերը,

գ. բորբոսի աճը,

դ. կոռոզիան,

ե. աղի տարածումը:

Պետք չէ փորձել կառույցները չափազանց արագ չորացնել: Խոնավության մակարդակների արագ փոփոխությունները կարող են վնասել բարակ փայտե տարրերը, մեծացնել պատերի մեջ աղի տարածման գործընթացը, ինչը կհանգեցնի ծեփի ճաքելուն: Թրջված շինությունները և մակերեսները չորացնելու համար՝

- ստուգեք և մաքրեք խցանված ջրահեռացման անցքերը՝ ջուրը հեռացնելու համար,
- օգտագործեք դույլեր և պոմպեր՝ կուտակված ջուրը հեռացնելու համար:





Ծանր վնասն ավելի հավանական է այն շենքերում, ուր ջրի սրընթաց հոսք է եղել (օրինակ՝ սարալանջերի կամ փլուզված ամբարտակի մոտ), որտեղ շենքի ներսում ջրի մակարդակն ավելի քան 1 մետր է (կամ էր) կամ եթե կրող պատերը կավից են: Այս դեպքում կառուցվածքային վնասը կամ կառույցի կայունացման գործողությունների կարիքները գնահատելու համար՝ նախքան ջրահեռացում կատարելը, դիմեք նախագծող ճարտարագետի:

- Հեռացրեք ցեխը և բեկորները, քանի որ դրանք կլանում են խոնավությունը և դանդաղեցնում չորանալու գործընթացը: Մի սպասեք, որ ցեխն ու բեկորները չորանան: Ավելի ապահով և հեշտ է ցեխը հեռացնել, երբ այն թաց է:
 - Խուսափեք մաքրող լուծույթներից, որոնք կլանում են խոնավությունը կամ խոչընդոտում դրա տեղաշարժը՝ պատմական նյութերի ներսում:
 - Հեռացրեք թաց կարպետները և հատակի/պատի ծածկոցները:
 - Կահույքը տեղափոխեք պատերից հեռու և հանեք պատից կախված իրերը՝ չորանալու գործընթացն արագացնելու համար: **Տես հետպատահարային տարհանում, էջ 80:**
 - Հնարավորության դեպքում, թաց ծեփից հեռացրեք մետաղական տարրերը՝ կոռոզիայից և ժանգոտումից խուսափելու համար:
 - Համոզվեք, որ շենքի չորացման համար անհրաժեշտ բացվածքները որևէ կերպ խցանված չեն: **Տես Գործնական ուղեցույց, էջ 92:**
9. Մշակութային ժառանգության առարկաների, բեկորների և դեկորատիվ տարրերի համար **հատկացնել** ու ստեղծել ժամանակավոր պահոցի և աշխատնքային տարածքներ:

Անվտանգության և կայունացման այլ գործողություններ

Ձեր թիմի օգնությամբ հավաքեք անհրաժեշտ նյութերը և իրականացրեք անվտանգության ու կայունացման այլ, նախապես սահմանված միջոցներ:

Դրանք կարող են ներառել՝

- Հետպատահարային տարհանում
- Առարկաների փրկում
- Պատմական կառույցների հրատապ ամրակայում

Այս գործողություններից յուրաքանչյուրի մանրամասն նկարագրությունների համար՝ տե՛ս համապատասխան բաժինները: Աղետից տուժած մշակութային ժառանգության վայրում գուցե ստիպված լինեք ձեռնարկել անվտանգության և կայունացման համալիր գործողություններ:

Հետպատահարային տարհանում

Հետպատահարային տարհանումներն անհրաժեշտ են դառնում, երբ այն շինությունը կամ կառույցը, որ գտնվում են մշակութային ժառանգության առարկաները, հայտարարվում է օգտագործման համար ոչ անվտանգ, բայց բավական կանգուն է՝ առարկաները տարհանելու համար: Այն ներառում է առարկաների **փաստաթղթավորումը**, **փաթեթավորումը** և **տեղափոխումը** ժամանակավոր անվտանգ վայր:

Հետպատահարային տարհանումները կարող են ներառել հրշեջների տեխնիկական և/կամ զինվորականների կամ քաղաքացիական պաշտպանության աշխատակիցների աջակցությունը, քանի որ նրանք ունեն մարդկանց վտանգավոր շինություններից տարհանելու փորձ: Այնուամենայնիվ, անհրաժեշտ է նրանց ուղղորդել, թե ինչ տարհանել և որտեղից, ինչպես նաև բացատրել ժառանգության առարկաների հետ անվտանգ վարվելու կանոնները:





Դասեր Կատմանդուի Հանուման Դոկա պալատի թանգարանի հետպատահարային տարհանումից, Նեպալ

2015 թվականին Նեպալի Կատմանդու քաղաքում տեղի ունեցած երկրաշարժից հետո Հանուման Դոկա պալատի թանգարանի հատվածները շինության կրած խոշոր վնասի հետևանքով հայտարարվեցին վտանգավոր: Թանգարանի աշխատակազմն օգնություն խնդրեց Նեպալյան բանակից՝ Ոսկե գահը և այլ կարևոր նմուշներ տարհանելու համար: Տարհանման ժամանակ որևէ գույքացանկ չկար, որի շնորհիվ հնարավոր կլիներ տեղորոշել յուրաքանչյուր առարկայի գտնվելու վայրը: Արդյունքում, բանակի անձնակազմն ստիպված էր անվտանգության թույլատրելի ժամանակից ավելի երկար մնալ տարածքում՝ առանձնահատուկ նշանակություն ունեցող առարկաները հայտնաբերելու համար: Տարհանման ժամանակ նրանք բախվեցին Ոսկե գահը շենքի վերին հարկի դռնից հանելու դժվարություններին: Արդյունքում, Ոսկե գահի որոշ մասեր ստիպված առանձնացվեցին, որպեսզի հնարավոր լինի այն շենքից դուրս բերել:



Նեպալյան բանակի անձնակազմը տարհանում է թանգարանային առարկան: Լուսանկարը՝ Ապարնա Թանդոնի, ICCROM:

Թանգարանի տնօրենն ու փաստաթղթավորման պաշտոնյան տեղում էին՝ օգնություն տրամադրելու և տարհանված նմուշները պաշտոնապես պահպանության տակ վերցնելու համար: Տարհանու-





մից հետո Ոսկե գահը և մյուս առարկաները պահվեցին պալատի բակում, մինչև օրեր անց ավելի ապահով վայր գտնվեց: Բանակն ապահովեց նմուշների շուրջօրյա պահպանությունը:

Այս փորձից սերտած հիմնական դասերը.

- Հետպատահարային տարիանմանն ավելի լավ պատրաստվելու համար առաջին արձագանքման թիմին պետք է հասանելի լինի հատակագծերի մի քանի օրինակ, ուր հստակ նշված են ամենակարևոր նմուշների գտնվելու վայրերը և չափերը: Այնուամենայնիվ, նմուշների անվտանգության նպատակով պետք է ապահովել այս հատակագծերի գաղտնիությունը՝ առաջին արձագանքման խմբում չընդգրկված անձանց դրանք չտրամադրելով:
- Մշակութային ժառանգության առարկաների տարիանումը պետք է իրականացվի բացառապես ավելի անվտանգ ժամանակավոր վայրի առկայության և գործողությունների համար անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցների առկայության պարագայում:
- Արտակարգ իրավիճակների ժամանակ արձագանքման խմբերի և հավաքածուի համար պատասխանատու ժառանգության մասնագետների՝ նմուշների հետ վարվելու, փաթեթավորելու և տեղափոխելու նախնական ուսուցումը պարտադիր է:

Տես հղումը, էջ 167:



Ինչպե՞ս իրականացնել հետպատահարային տարհանում:

Հետպատահարային տարհանման աշխատանքների կազմակերպման հետևյալ գործընթացը վերցված է «Վտանգված մշակութային ժառանգություն. մշակութային ժառանգության հավաքածուների արտակարգ տարհանում»՝ նախապատահարային արտակարգ տարհանման ձեռնարկից: Հիշեք, որ առարկաները ոչ անվտանգ վայրից տարհանելու որոշումը պետք է ընդունել **տեղում վնասի և ռիսկերի հետպատահարային գնահատման** հիման վրա:





Թույլտվություն

Նախքան մշակութային արժեքները տարհանելը՝ ստացեք խնամակալների թույլտվությունը և համոզվեք, որ նրանք կամ անձնակազմի անդամները գտնվում են տարածքում, որպեսզի խորհուրդ տան և վերահսկեն ընդհանուր գործողությունները:



Փաստաթղթավորում. հարկավոր է պաշտոնական փաստաթուղթ, որտեղ նշված է, որ խնամակալը թույլատրել է 'x' թվով մշակութային ժառանգության փրկարարների տարհանել առարկաները և տեղափոխել դրանք այլ ապահով տարածք (հստակեցրեք գտնվելու վայրի ճշգրիտ անվանումը և աշխարհագրական դիրքը): Այս փաստաթղթում պետք է լինի խնամակալի ստորագրությունը, ինչպես նաև այլ կարևոր տվյալներ, օրինակ՝ ամսաթիվ, ժամ և վայր:



Նախապատրաստվել

1. Տարհանման թիմ հավաքեք: Այն պետք է ներառի տարհանվող հավաքածուի անմիջական պատասխանատու պաշտոնատար անձանց: Ընտրեք թիմի ղեկավար, որը կարող է բացատրել գործողության ծավալն ու նպատակները և հատուկ հանձնարարություններ տալ թիմի անդամներին: Այդ հանձնարարություններն են՝
 - առարկաների հետ զգուշությամբ վարվելը և փաթեթավորումը,
 - առարկաների տեղափոխումը,
 - ժամանակավոր պահոցի կազմակերպումը,
 - նյութատեխնիկական միջոցների, ինչպես օրինակ՝ ապրանքների, ուտելիքի, ջրի և այլնի ապահովումը,
 - թիմի ներսում և արտաքին դերակատարների ու շահագրգիռ կողմերի հետ հաղորդակցությունը:
2. Օգտագործելով վնասի և ռիսկերի տեղում գնահատման արդյունքները՝ սահմանեք և պատրաստեք.
 - ա. աղետից տուժած շենքի ներսում և դրանից դուրս առարկաները տեղափոխելու անվտանգ տարհանման ուղի,
 - բ. տեսակավորման և փաթեթավորման տարածք կամ բավականաչափ մեծ սենյակ, ուր հնարավոր կլինի տեղավորել առնվազն երկու աշխատանքային սեղան՝ առարկաները տեսակավորելու, փաստաթղթավորելու և փաթեթավորելու համար,
 - գ. դեպքի վայրում կամ դրանից դուրս առարկաների ժամանակավոր պահպանության համար անվտանգ վայր:



Անվտանգ պահոց ընտրելիս՝ համոզվեք, որ

- այն բավականաչափ ընդարձակ է՝ տեղափոխված առարկաները տեղավորելու համար,
- մաքուր է, չկան վնասատուներ կամ բորբոս,
- լավ է օդափոխվում, թաց կամ խոնավ չէ,
- պաշտպանված է գողությունից և վանդալիզմից,
- հասանելի է առարկաների անվտանգ տեղափոխությունն ապահովող ճանապարհով,
- անհրաժեշտության դեպքում, առարկաները կարելի է անորոշ ժամանակով թողնել պահոցում:



3. Հավաքեք տեղեկություններ և փաստաթղթավորեք.

ա. Հնարավորության դեպքում, ձեռք բերեք **առաջնահերթ այն առարկաների ցանկը**, որոնք պետք է սկզբում տարհանել: Կամ փաստաթղթավորում իրականացնող թիմին, խնդրեք ստուգել նախորդ գրանցումները առարկաների ցանկ պատրաստելու համար՝ հիմնվելով նմուշների արժեքի, խոցելիության, դրանց հետ վարվելու և տեղափոխության հեշտության վրա: Եթե նման ցանկ չկա, խորհրդակցեք խնամակալների կամ անձնակազմի անդամների հետ՝ առաջնահերթ առարկաների ցանկ կազմելու համար: **Տես Գործնական ուղեցույց, էջ 55:**

բ. Ձեռք բերեք այն շինության հատակագծերի կրկնօրինակները, որտեղից պետք է տարհանել նմուշները: Գտեք և հատակագծերի վրա նշեք տարհանվող առարկաների փաստացի գտնվելու վայրերը՝ օգտագործելով դրանց տրված **տեղակայման ծածկագրերը**: Եթե նման ծածկագրեր չկան կամ ճշգրտված չեն՝ փաստաթղթավորման թիմը պետք է **տեղակայման նոր ծածկագրեր** սահմանի, որոնք կլինեն հաջորդական և դյուրըմբռնելի: Տեղակայման ծածկագրեր ստեղծելու համար՝ **տես Գործնական ուղեցույց, էջ 42:**

գ. Հատակագծերի վրա տեղակայման ծածկագրերը նշելուց հետո, եթե ժամանակ ունեք, ծածկագրերով պիտակավորեք տարածքները և կահույքը: Համոզվեք, որ պիտակները լավ տեսանելի են:

դ. Տարհանման համար գույքացանկ պատրաստեք: Նախկինում կազմված փաստաթղթերի առկայությունը կարող է օգտակար լինել: Եթե չունեք նախապես պատրաստած գույքացանկ, կարող եք ստեղծել՝ օգտագործելով առկա ձևաթերթը:

4. Հավաքածուները փաթեթավորելու և տեղափոխելու համար՝ **հավաքեք** անհրաժեշտ **պարագաներ**: Նյութերի ցանկի օրինակի համար տես **Գործնական ուղեցույց, էջ 67:**

5. Տեղում առանձնացված անվտանգ տարածքում, որը սահմանված է վնասի և ռիսկերի տեղում գնահատման ձևաթղթում, ստեղծեք **աշխատանքային կայաններ**՝ առարկաները տեսակավորելու, փաստաթղթավորելու և փաթեթավորելու համար:

Առարքան համար	Նախորդ համարը	Տրված նյութականացման համարը	Առարկայի տեսակը	Նյութերը	Չափերը՝ նրկարություն, քայտություն, քարճրություն:	Քաշը	Ալյերնակն տնրակայանն ծածկազիրը	Լուսանկարի կամ հատուածի իրնան համար	Նոր վայրը	Լուսանկարի կամ հատուածի իրնան համարը

Նշել անող թվայն կարգով էից մինչև վերջին տնրափոխան առարկան, որը ցրց է տնրա տարիանակն նուոնների թիվը:

Այս դաշտում պնտը է նշել տարիանան նաատակով նաատակին տրվան նշակի նոյնաաաանացման համարը:

Առարկայի տնրակն օգտաարոնք այն առարկայի անիոնի նկարաարոյան համար թրինան՝ նկարաարոյ ծնուազիր, քանդակ, անոթ և այլն):

Ինչն է պատառուվան առարկան (թրինակ՝ աակի, կակ՝ մնտար, տնրատիլ և այլն):

Նշեք առարկայի մնրնական գտնելու վայրի ծածկազիրը

Այս դաշտը պնտը է յրանի տարիանուն պկարոնրոց և առարկաները նոր, ալինի անվտանոց վայր տնրափոխանրոց հնտո

Բոլոր նկարները և հատուածները պնտը է ոնննան իրնան համար

Լուսանք առարկան քաշը: Եթե ծնոնի տակ կնրեք ջկա, օգտագորնք փնկոնրեք, օրինակ՝ +, Եթե մնկ մարդ կարող է իրը տնրաարոյել: ++, Եթե առարկան տնրաարոյելու համար նրկու մարդ է պատանոցում, և +++, Եթե այն քարճացնելու և տնրափոխելու համար անտրաճշտը է հատուկ սարք:



Գտնել



Փաստաթղթավորել. Նախքան առարկաները տեսակավորման և փաթեթավորման վայր տեղափոխելը՝ գրանցեք դրանց տեղակայման ծածկազիրը հենարանին/տուփին դրված պիտակի վրա, որով պետք է տեղափոխել առարկան: Կամ գրանցումը իրականացնել անմիջապես առարկաների տեղափոխման ընթացքում:



Փաթեթավորել և տեղափոխել

1. Տեղափոխեք առարկաները տեսակավորման և փաթեթավորման տարածք. տեսակավորեք գտնված առարկաները՝ ըստ նյութի:



ա Յուրաքանչյուր առարկային **նույնականացման եզակի համար** հատկացրեք: Այս համարը տարբերվում է տեղակայման ծածկազրից, քանի որ այն նույնականացնում է տվյալ վայրում գտնվող յուրաքանչյուր առանձին նմուշ: Առարկաները համարակալեք աճման կարգով կամ օգտագործեք տառերի և թվերի համակցություն:

Ինչպես ստեղծել նույնականացման եզակի համար



Նախքան առարկան այլ վայր տեղափոխելը՝ եզակի նույնականացման համար հատկացրեք, որպեսզի տարիանման գործողությունների ժամանակ կարողանաք հետևել դրա տեղափոխմանը: Համոզվեք, որ տարիանման նպատակների համար մշակված համարակալման համակարգը պարզ է, միասնական և բոլորին հասկանալի: Այն կարող է լինել ուղղակի աճման կարգով թվեր (օր.՝ 01, 02) կամ տառերի և թվերի համակցություն (օր.՝ A001, A002): Հավելյալ տեղեկությունների համար՝ **տես Գործնական ուղեցույց, էջ 43:**

- բ. Տեղակայման վայրի ծածկագրով և նույնականացման եզակի համարով պիտակը դրեք ոչ հիմնական հենարանի վրա (օրինակ՝ ստվարաթղթի կտոր, սկուտեղ կամ առարկան տեղափոխող առանձին տուփ):
- գ. Ավարտեք **տարիանման գույքագրումը** և գրանցեք (առարկայի վրա հայտնաբերված) ցանկացած **ինվենտար համար**, նյութ, չափ, քաշ և փաստաղթավորման ցանկացած այլ չափանիշներ:
- 2. Օժանդակ հենարաններին կցված պիտակներով առարկաները տեղափոխեք նախապես պատրաստի աշխատանքային տարածք և փաթեթավորեք (**Տես Գործնական ուղեցույց, էջ 49**): Համոզվեք, որ **տարիանման** ավարտուն **գույքացանկի** պատճենը կցված է փաթեթավորված առարկաներին:



Նեպալի Ազգային թանգարան, Կալումանդու, Նեպալ, 2016թ.: Լուսանկարը՝ Ապարնա Թադոնի, ICCROM:

- 3. Առարկաները փաթեթավորելիս՝ համոզվեք, որ նույնականացման եզակի համարներով և տեղակայման վայրի ծածկագրով պիտակները տեղում են: Փաթեթավորման հենարանները նույնպես պետք է պիտակներ ունենան: Առարկաների փաթեթավորման լրացուցիչ տեղեկությունների համար, տես **Գործնական ուղեցույց, էջ 48:**



Նեպալի Ազգային թանգարանում նմուշների փաթեթավորումը, Կարմանդու, Նեպալ, 2016թ.: Լուսանկարը՝ Ապարնա Թանդոնի, ICCROM:



4. Հանդվեք, որ փաստաթղթավորման թիմից առնվազն մեկ անդամ հետևում է տարբեր տուփերում առարկաները տեղավորելու ընթացքին՝ լրացնելով նմուշների **տեղաշարժին հետևելու ձևաթերթը**: Այս ձևաթերթն օգտագործվում է՝ երաշխավորելու, որ բոլոր նմուշները հասել են նոր, ժամանակավոր պահոց: Պատրաստեք տեղաշարժին հետևելու ձևաթերթի մի քանի օրինակ (տե՛ս ստորև օրինակը):

Տեղաշարժին հետևելու ձևաթերթ

Մտաբարձրման համար	Տոսփի համար	Տոսփում նմուշների ընդհանուր թիվը	Նմուշների հետ վարվելու ցուցումներ/տեղավորում	Ում կողմից է ուղարկվել	Ում կողմից է ուղարկվել	Սուրհանդակի/մքրենայի համար	Ստացման ամսաթիվ	Տոսփի համար	Տոսփում նմուշների ընդհանուր թիվը	Ստացող
1	12	20	Ապակի՝ վարվել զգուշությամբ	Արոնջ Համիդ, ֆոնդապահ	Հունվարի 25	xxx256	Հունվարի 25	12	20	xxx պահեստապետ
...

Բոլոր առարկաները փաթեթավորելուն պես կարելի է դրանք տեղափոխել նոր վայր: Արկղում պետք է լինեն տարիանման գույքացանկի պատճենները և տեղաշարժը հետևելու ձևաթերթը:



Տեղափոխել

Մինչ թիմի մի մասը զբաղվում է նմուշների վերականգնմամբ,

փաստաթղթավորմամբ և փաթեթավորմամբ՝ մյուսները կարող են կենտրոնանալ ժամանակավոր պահոցի տարածքի նախապատրաստման վրա:



1. Սկսեք մտածել նոր վայրում նմուշները դասավորելու ամենահարմար տարբերակի մասին:
2. Տեղափոխության վայրի ծածկագրեր որոշեք. ըստ անհրաժեշտության՝ տեղափոխեք կահույքը և պահարանների ու դարակաշարերի համար տեղակայման ծածկագրեր հատկացրեք՝ նշելով առարկաների գտնվելու նոր վայրերը: Համոզվեք, որ դա արվում է նախքան նմուշները կհասնեն նոր վայր: Լրացուցիչ տեղեկության համար տես **Գործնական ուղեցույց, էջ 41**:



Ժամանակավոր պահոց կենտրոնական Իսրայիայում, 2017թ.: Լուսանկարը՝ Ապարնա Թանդոնի, ICCROM:

3. Գուցե արտակարգ իրավիճակների տարահանման ժամանակ, հնարավոր չլինի գտնել համապատասխան պահարաններ, օրինակ՝ դարակաշարեր: Այդ դեպքում փաթեթավորված առարկաները պետք է պահել հատակին: Պահպանման տարաների և հատակի միջև անմիջական շփումից խուսափելու համար՝ օգտագործեք տակդիրներ և/կամ բրեզենտ: Եթե օգտագործում եք փայտե տակդիրներ, ստուգեք և համոզվեք, որ դրանք ախտահարված չեն միջատներով կամ բորբոսով:
4. Առարկաները պաշտոնապես ընդունեք նոր, ժամանակավոր պահոցում՝ օգտագործելով տեղաշարժը հետևելու ձևաթուղ-

- թը: Այնուհետև, ստուգեք արտակարգ տարհանմանն ուղեկցող գույքացանկը և առանձնացրեք առարկաները՝ ըստ նյութի տեսակի և չափի:

Փաթեթավորված առարկաները տեղադրեք դարակների կամ մաքուր տակդիրների և առկա այլ կահույքի վրա: Փորձեք դյուրաբեկ առարկաները գետնին չդնել և պահել դրանք սենյակի հեռավոր, անհասանելի անկյունում: Նույն կերպ մեծ և ծանր առարկաները պետք է միասին դասավորել սենյակի մի անկյունում, որպեսզի տեղ ազատվի ավելի փոքր նմուշների տեղափոխության ու դասավորության համար:

5. Նոր, ժամանակավոր պահոցում յուրաքանչյուր առարկայի գտնվելու վայրը նշելու նպատակով՝ գույքացանկի «նոր տեղակայում» դաշտում նշեք դրա տուփի և դարակի համարը:
6. Գողություն և վանդալիզմ կանխելու նպատակով՝ նոր, ժամանակավոր պահոցի տարածքում իրականացրեք անվտանգության համապատասխան միջոցառումներ: Անհրաժեշտության դեպքում, պահակներ տեղակայեք:



Ակտիվ հակամարտության գոտիներում կարևոր է մշտապես հետևել անվտանգային իրավիճակին, որպեսզի, անհրաժեշտության դեպքում, բավարար ժամանակ ունենաք նմուշները մեկ այլ վայր տեղափոխելու համար:



Հաշվետվություն

Խնամակալներին տրամադրեք թարմացված գույքացանկը՝ առարկաների նոր տեղակայման վայրերի և տարհանման ողջ գործողության ամփոփ զեկույցի հետ միասին: Այս հաշվետվությունը պետք է պարունակի գործողության հիմնական քայլերը փաստող լուսանկարներ, առարկաների փաթեթավորման համար օգտագործվող նյութերի մանրամասներ, կատարված ծախսերի վերաբերյալ տեղեկատվություն և տարհանման մեջ ներգրավված թիմի կոնտակտային տվյալներ: Այն պետք է ստորագրի գործողությունը վերահսկող թիմի ղեկավարը:



Մշտադիտարկում

Նոր, ժամանակավոր պահոցի տարածքի մաքրման և վերահսկման համար մշակեք որոշակի ռեժիմ՝ վնասատուների, հրդեհի, ջրի կամ որևէ այլ նյութերի ազդեցության կանխարգելման նպատակով, որոնք կարող են նմուշներին վնաս պատճառել:



Փրկում

Հետպատահարային տարհանման ավարտից հետո վնասված մշակութային ժառանգությունը պետք է կայունացնել: Փրկումը վտանգավոր պատահարի հետևանքով բացասական ազդեցության ենթարկված վայրից վնասված մշակութային ժառանգության նմուշների, շինությունների բեկորների և դեկորատիվ տարրերի համակարգային վերականգնումն է:

Շարժական մշակութային ժառանգության փրկարարական գործողությունները նման են հետպատահարային տարհանման գործողությունների ընթացքին՝ ներառելով մշակութային ժառանգության նյութի դասակարգման, առաջնահերթությունների սահմանման և կայունացման լրացուցիչ այնպիսի գործողություններ, որոնք նախատեսված են, նախքան մասնագիտական միջամտություն իրականացնելը, հետագա վնասները կանխելու համար: Պատմական կառույցի մասնակի կամ ամբողջական փլուզման դեպքում փրկումը կներառի նաև բեկորների տեսակավորում՝ քարտե, աղյուսե կամ փայտե բնօրինակ տարրերը հետագա **վերակառուցման** ժամանակ օգտագործելու համար:

Արտակարգ իրավիճակի բնույթից կախված՝ կարող է անհրաժեշտություն առաջանալ իրականացնել և՛ տարհանում, և՛ փրկում: Կամ կարող է պարզվել, որ տուժած վայրը վնասներ չի կրել և հետպատահարային տարհանումն անհրաժեշտ է տարածքի վնասագերծման համար:



Պորտ-օ-Պրենս, Հայիթի, 2010թ.: Լուսանկարը՝ Ապարնա Թանդոնի, ICCROM:



Փրկելով հեղեղումից տուժած պատմական արխիվը. Չիլի

2016 թվականի հունիսին ոչ սեզոնային հորդառատ անձրևները հեղեղումների պատճառ դարձան Սանտյագոյից 250 կմ հարավ գտնվող Տալկա քաղաքի շրջանների մեծ մասում: Ջրահեռացման խափանումը հանգեցրեց Տալկայի համալսարանի շենքի նկուղում գտնվող փաստաթղթավորման կենտրոնի հեղեղմանը, որտեղ պահվում էր հին ձեռագրերի և երաժշտական բնօրինակ թերթերի կարևոր հավաքածու: Նախքան անձրևները կոպտարեին՝ ջուրը բարձրացավ մինչև 50 սմ: Ստորին դարակներում գտնվող բոլոր գրքերն ու ձեռագրերը, ինչպես նաև հատակի արկղերում պահվող նմուշները թրջվել էին. վնասվել էր ընդհանուր առմամբ մոտ 5000 գիրք և ձեռագիր:

Ջուրը հեռացվեց նկուղից և հատակը չորացվեց հնարավորինս արագ՝ նախքան օդափոխիչներ և խոնավակլանիչներ տեղադրելը: Մեծ ծավալի նմուշների վնասի պատճառով որոշվեց սառեցնել դրանք, մինչև հնարավոր կլիներ նմուշները պատշաճ ձևով չորացնել: Նմուշների առաջնահերթությունը սահմանվեց ըստ թրջվածության աստիճանի և դասակարգվեց այնպես, որ հնարավոր լիներ դրանք չորացնել կամ սառեցնել:

Միրզ արտահանող կազմակերպությունից փոխառվեցին սառնարանային բեռնատարներ և սառցարաններ: Նախքան պահոցի տուփերում դասավորելը՝ թրջված գրքերը զգուշորեն առանձնացվեցին և դրվեցին պոլիէթիլենային տոպրակների մեջ՝ սառեցման համար: Այնուհետև, գրքերը բեռնատարներով տեղափոխվեցին սառցարանի տարածք, որտեղ դրանք պահվեցին տասը ամիս, -24°C ջերմաստիճանում:

Սառեցված գրքերի փոքր քանակ սառցարանից հանվեց և զգուշորեն հալեցվեց: Ի վերջո, բոլոր գրքերն ու ձեռագրերը հալեցվեցին և չորացվեցին: Աղետների պլանավորման և հետագա արագ արձագանքման արդյունքում՝ բոլոր առարկաները հաջողությամբ վերականգնվեցին:

Աղբյուրը՝ Մարիա Սեսիլիա Ռոդրիգեզ Մորենո, գլխավոր ֆոնդապահ, Թոլթերի և գրքերի լաբորատորիա, Ամրակայման և վերականգնման ազգային կենտրոն, Գրադարանների, արխիվի և թանգարանների տնօրինություն, Չիլի:

Տես հղումները, էջ 166:

*խոնավ գրքերի էջերի բաժանումը ներդրինելով, Ամրակայման և վերականգնման ազգային կենտրոն, Չիլի, 2016թ.:
Լուսանկարը՝ Մարիելա Արիագադայի:*



Ինչպե՞ս իրականացնել փրկումը:

Փրկարարական աշխատանքների կազմակերպում

Փաստաթղթավորում
Հաղորդակցություն և համակարգում
Ռիսկերի կառավարում



ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ



ՆԱԽԱՊԱՏՐԱՏՈՒՄ



ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ



ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ ԵՎ
ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒ-
ԹՅՈՒՆՆԵՐԻ
ՍԱՀՄԱՆՈՒՄ



ԿԱՅՈՒՆԱՑՆԵԼ



ՓԱԹԵԹԱՎՈՐԵԼ
ԵՎ ՏԵՂԱՓՈՒՆԵԼ



ՏԵՂԱԿԱՅՄԱՆ
ՆՈՐ ՎԱՅՐ



ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼ



ՄՇՏԱԴԻՏԱՐԿԵԼ



Թույլտվություն

Խորհրդակցեք համապատասխան շահագրգիռ կողմերի հետ և դեպքի վայրում կամ դրանից դուրս փրկարարական աշխատանքների **թույլտվություն** ստացեք (ցանկալի է՝ գրավոր)՝ փրկված առարկաներն ավելի ապահով ժամանակավոր վայր տեղափոխելու համար:



Նախապատրաստել

- 1. Տեղեկացրեք թիմին.** հավաքեք թիմ, որը կներգրավվի փրկարարական աշխատանքներում և
 - համոզվեք, որ թիմի բոլոր անդամներն են գիտակցում, թե տեղանքի որ հատվածներն են փակ:
 - բացատրեք փրկարարական աշխատանքների գործընթացը,
 - ընտրեք խմբի ղեկավարի, որը կվերահսկի փրկարարական աշխատանքների ողջ ընթացքը:

Մարդկանց բաժանեք ենթաթիմերի և սահմանեք դերեր՝ փորձառության աստիճանի և առաջադրանքի հանդեպ հետաքրքրության համապատասխան: Առաջադրանքները ներառում են **փաստաթղթավորում, առարկաների վերականգնում, առաջնահերթ տեսակավորում, կայունացում, փաթեթավորում, փոխադրում, նյութատեխնիկական միջոցների ապահովում և հաղորդակցություն**: Եթե գործողության համար չկան բավականաչափ մասնագետներ, ժամանակ հատկացրեք և պատրաստեք կամավորների, որոնք կօգնեն իրականացնել մասնագիտական գիտելիքներ չպահանջող առաջադրանքներ:

- 2. Հավաքեք նյութեր՝** ըստ փրկված առարկաների, առաջացած վնասի տեսակի և պատահարի բնույթի: Օրինակ՝ եթե վնասված նմուշները օրգանական նյութերից են և թրջվել ու հողոսվել են, դրանք մշակելու և չորացնելու համար կպահանջվեն այնպիսի նյութեր, ինչպիսին է պոլիէթերի ցանցը: Օգտվեք վնասի և ռիսկերի տեղում գնահատման արդյունքներից՝ ընտրելու ձեզ անհրաժեշտ նյութերը: Փրկարարական պարագաների ընդհանուր ցանկի համար տես **Գործնական ուղեցույց, էջ 70**:

- 3. Նախապատրաստեք տարածքը.** կայունացման գործողությունների համար տարածք ստեղծեք և համոզվեք, որ յուրաքանչյուր աշխատանքային հատվածում վնասից տուժած առարկաների քանակի հետ աշխատելու համար բավարար տարածություն կա: Յուրաքանչյուր աշխատանքային հատված պետք է նախատեսված լինի մեկ տեսակի գործողության համար: Օրինակ՝ մի իրականացրեք թաց և չոր առարկաների



մաքրման աշխատանքները նույն տարածքում, քանի որ կվտանգեք թաց առարկաները կրկին կեղտոտվելուն կամ կվտանգեք չոր նմուշները՝ թրջելով և ավելի մեծ վնաս հասցնելով դրանց:

- 4. Փաստաթղթավորեք.** վերականգնման ենթակա առարկաները փաստաթղթավորելու և տեղաշարժին հետևելու համակարգ մշակեք: Փաստաթղթավորման համակարգը պետք է ներառի երեք հիմնական բաղադրիչ՝

ա. Տեղորոշման գրանցման համակարգ, որտեղից առարկաները պետք է դուրս բերվեն: Եթե հատակագիծը ձեզ հասանելի է, օգտվեք դրանից՝ տարածքներ առանձնացնելու համար՝ օգտագործելով հատակագծում նշված համարակալման համակարգը: Եթե հատակագծի համարակալման համակարգը հստակ չէ կամ անհամապատասխանություններ կան, ստեղծեք տեղակայման նոր ծածկագրեր: Տեղակայման ծածկագրեր ստեղծելու համար **տե՛ս Գործնական ուղեցույց, էջ 42:**

Եթե շենքը կամ կառույցը մասամբ կամ ամբողջությամբ փլուզվել է, և առարկաները բեկորների շերտի տակ են մնացել, ցանցով սահմանազատեք տարածքը՝ առարկաների տեղակայման վայրը նշելու նպատակով: Կախված պահանջից՝ ցանցը կարող է լինել փոքր կամ մեծ: Տարբեր վայրերում տարբեր բեկորների հատվածների համար օգտագործեք այնքան ցանցեր, որքան անհրաժեշտ է և յուրաքանչյուրին եզակի համար հատկացրեք: Այնուհետև, բոլորը նշեք մեկ ընդհանուր քարտեզի վրա, որտեղ նշված է հյուսիսը: Ընդարձակ հնավայրի դեպքում, որ ներառում է փրկարարական աշխատանքների կազմակերպում մի քանի վայրերում, ցանցը կարելի է անցկացնել **Աշխարհագրական տեղեկատվական համակարգերին** կցված քարտեզի վրա: Լրացուցիչ տեղեկությունների համար՝ **տե՛ս Գործնական ուղեցույց, էջ 11:**

Վերականգնված **առարկաների համարակալման համակարգ (տե՛ս Գործնական ուղեցույց, էջ 43):** Առարկաներն օբյեկտիվորեն հաշվելու և հետևելու համար ստեղծեք համակարգ՝ յուրաքանչյուր առարկային և դրա մասերին հատկացնելով եզակի նույնականացման համար:

- 5. Փրկված նմուշների գրանցման ձևաթերթ.** այս ձևաթերթն օգտագործվում է գտնված նմուշների քանակը գրանցելու և փրկարարական աշխատանքների ընթացքում նրանց տեղաշարժին հետևելու նպատակով: Այն նաև հավելյալ տեղեկություն է տրամադրում, օրինակ՝ յուրաքանչյուր առարկայի լուսանկարի համարը, սկզբնական գույքագրման և հատակագծում նշված համարները: Այն կարելի է բաժանել երեք մասի, որոնք կարելի է լրացնել փրկարարական աշխատանքների երեք տարբեր փուլերի ժամանակ, մասնավորապես՝ (i) հայտնաբերում, (ii) առաջնահերթությունների սահմանում ու կայունացում և (iii) փաթեթավորում ու տեղափոխում: Օրինակների համար՝ տե՛ս հաջորդ էջը:

1. ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ



Մտորագրման համար	Սկզբնական տեղակայման վայրը	Հատկացված նույնականացման համարը	Նախկին համարները

Ինչերի անման կարգով՝ առաջինից վերջին տեղափոխված նմուշը նշվում է փրկված առարկաների քանակը:

Այս դաշտում նշվում է առարկային տրված եզակի նույնականացման համարը

2ա - ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ ԸՍՏ ԱՈՒԱՆԱՀԵՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՅՈՒՆԱՅՈՒՄ

Սեփականատեր/ հաստատություն	Սկզբնական տեղակայման ծածկագիր	Առարկայի տեսակը	Նյութեր	Չափերը՝ երկարություն, լայնություն, բարձրություն

Այս դաշտում նշվում է փրկված առարկաների գտնվելու սկզբնական վայրի ծածկագիրը: Տեղակայման սկզբնական ծածկագիրը կարող է մատնանշել ցանցի համարը կամ դարակների, սենյակների և հարկերի համարների ամբողջությունը՝ կախված տեղակայման ծածկագրերի հատկացման ընդունված համակարգից:

«Առարկայի տեսակը» դաշտը օգտագործվում է առարկայի ամփոփ նկարագրության համար

Ինչից է պատրաստված առարկան (օրինակ՝ ապակի, խեցի, մետաղ, գործվածք և այլն):



2բ - ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ ԸՍՏ ԱՈՒՋՆԱԿԵՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՅՈՒՆԱՑՈՒՄ

Քաշ	Լուսանկարի կամ գծանկարի հղման համար	Վնասի տեսակը	Ցուցաբերած օգնությունը (պետք է լրացվի կայունացման ժամանակ)	Ով է կայունացրել
-----	-------------------------------------	--------------	--	------------------

«Լուսանկարի կամ գծանկարի հղման համարը» վերաբերում է առարկայի լուսանկարին/գծանկարին: Եթե վայրում առանձին նմուշները լուսանկարելու բավականաչափ ժամանակ չկա, լուսանկարեք առարկաների խումբը՝ նույնականացման համարներով: Գրանցեք լուսանկարի համարը: Այս դաշտը կարելի է լրացնել առաջնահերթությունների սահմանման փուլում կամ ժամանակավոր պահոցի տարածքում՝ կախված ժամանակից:

«Վնասի տեսակը» ամփոփ ներկայացնում է առարկայի ֆիզիկական վիճակը և տեսակը, ինչպես նաև կրած վնասի չափը:

Լրացրեք առարկայի բաշը: Եթե ձեռքի տակ կշեռք չկա, օգտագործեք սիմվոլներ, օրինակ՝ +, եթե մեկ մարդ կարող է իրը տեղաշարժել, ++, եթե առարկան տեղաշարժելու համար երկու մարդ է պահանջվում և +++ , եթե այն բարձրացնելու և տեղափոխելու համար անհրաժեշտ է մեկից ավել մարդ ու հատուկ սարք:

Այս դաշտում նկարագրվում է առարկայի կայունացման միջոցի տեսակը: Օրինակ՝ թաց և կեղտոտ նմուշը նոր, ժամանակավոր պահոց տեղափոխելուց առաջ պետք է վանա: Նման միջամտությունները պետք է իրականացնեն վերականգնողները և վերապատրաստում անցած մշակութային ժառանգության փրկարարները:

3 - ՓԱԹԵԹԱՎՈՐԵԼ ԵՎ ՏԵՂԱՓՈՒՆԵԼ

Ով է տեղափոխել	Ամսաթիվ	Նոր վայրի ծածկագիրը
----------------	---------	---------------------

Այս դաշտում նշվում է տեղափոխման նոր վայրի ծածկագիրը, որը տրվել է առարկային նոր, ժամանակավոր պահոց տեղափոխելիս: Դաշտը պետք է լրացնել բոլոր առարկաները տեղափոխելուց հետո:



Հայտնաբերում

Կառուցվածքային փուլզման դեպքում պատմական շենքի բեկորները և առարկաները կարող են թաղվել ծանր բետոնի կամ ոչ ցանկալի այլ կտորների տակ: Նման դեպքերում դուրսբերման խորհրդի համար կապվեք արտակարգ իրավիճակների արձագանքման համակարգողի կամ պատահարի հրամանատարի հետ: Հնարավոր է ծանր տեխնիկայի կարիք ունենաք, օրինակ՝ էքսկավատորի: Խորհրդակցեք վարորդի և նախագծող ճարտարագետի հետ՝ համոզվելու, որ աշխատանքներն անվտանգ են:



Աղտողված միջավայրից առարկաների մանրակրկիտ և համակարգված դուրսբերումը պահանջում է հմտություններ և համբերություն: Անձնական վնասվածքներից և մշակութային ժառանգության առարկաների որոնումների ժամանակ հետագա վնասներից խուսափելու համար՝ միշտ աշխատեք զույգով:

Շինության մի հատվածից կամ ցանցից առարկաները դուրս բերելիս.

- Նախ վերցրեք փոքր, չոր և չվնասված առարկաները:
- Ունեցեք կոշտ հենարաններ (ինչպես օրինակ՝ ծանր սովորաբար թեթե կամ փայտե հարթ տախտակներ)՝ դյուրաբեկ ու վնասված առարկաները դուրս բերելու և տեղափոխելու համար:
- Համոզվեք, որ միշտ կա առնվազն երկու մարդ՝ մեծ կամ ծանր առարկաները փրկելու համար, և համոզվեք, որ առարկան պատշաճ կերպով ամրացված է:
- Եթե առարկան կտորվել է, աշխատեք, որ կտորված բոլոր մասերը գտնվեն և միասին պահվեն: Որպեսզի աշխատելիս հարմար լինի, առարկան և կտորված բեկորները տեղադրեք արկղի կամ թափանցիկ պլաստիկ տոպրակի մեջ:
- Առանձին առարկաների պատյանները (շրջանակներ, տուփեր ու ենթաշրջանակներ) պահեք դրանց համապատասխան առարկաների հետ:
- Հետևելով ձեր նախընտրած փաստաթղթավորման ձևին՝ գրանցեք առարկայի սկզբնական տեղակայման վայրի համարը, համարակալեք առարկան և գրի առեք գտնված առարկաների քանակը:



Տեղանքի պիտակները կազմելիս սխալներից խուսափելու համար՝ բեկորները հերթով դուրս բերեք ցանցի յուրաքանչյուր բջջից:





Առարկաների դուրսբերումը փրկարարական գործողության ժամանակ, Պորտ-օ-Պրենս, Հայիթի, 2010թ.: Լուսանկարը՝ Ապարնա Թանդոնի, ICCROM:



Պատմական շինությունների բեկորների և տարրերի դուրսբերում

Պատմական շինությունների բեկորների, մակերևույթների և տեղական հուշարձանների դուրսբերումը կարող է լինել ժամանակատար և բարդ գործընթաց: Ձեր աշխատանքային տարածքը և մեթոդաբանությունը պատրաստելիս օգտվեք **տեղում վնասի և ռիսկերի գնահատման** արդյունքներից:

Դեպքի վայրում պատմական նյութերի դուրսբերումից առաջ հաշվի առեք հետևյալը.

- Բեկորների և կտորների տեսակները, որոնք ակնկալում եք գտնել տեղում:
- Շինության բնօրինակ նյութերի և դեկորատիվ տարրերի կամ տեղական հուշարձանների նշանակությունը:
- Կան արդյոք ոչ իսկական կամ անկարևոր բեկորներ: Ո՞ր բեկորները կարելի է վերօգտագործել կամ փոխարինել կամ դեն նետել:
- **Կայունացման** ինչպիսի՞ միջամտություն է անհրաժեշտ նախքան բեկորների պահեստավորումը:

Պատմական բեկորները հեռացնելու անհրաժեշտության դեպքում համոզվեք, որ արձանագրել եք դրանց սկզբնական գտնվելու վայրը՝ նախքան դուրսբերումը: Փաստաթղթավորումն օգնում է





հստակեցնել կառուցվածքային տարրերի կամ անշարժ ժառանգության օբյեկտի սկզբնական գտնվելու վայրը, որպեսզի կառույցի վերականգնման ժամանակ դրանք վերադառնան իրենց նախկին տեղը: Այն նաև երաշխավորում է, որ բեկորները չեն կորի կամ գողացվի, երբ դուրս հանվեն: Ստեղծեք տեղակայման ծածկագիր (տե՛ս Գործնական ուղեցույց, էջ 42)՝ հիմնվելով բեկորների դուրսբերման ցանցի վրա և, հնարավորության դեպքում, ներառեք վիզուալ նյութեր:

Բեկորները դուրս բերելուց հետո կարող եք հետևել շարժական մշակութային ժառանգության փրկարարական աշխատանքների ընթացակարգին:



Դասակարգում՝ ըստ առաջնահերթության

Մեծածավալ փրկարարական աշխատանքներում, երբ պետք է գտնել և կարճ ժամանակահատվածում միջամտության համար դասակարգել հազարավոր առարկաներ, կարևոր է առաջնահերթություններ սահմանելը: Դրա առավելագույն արդյունավետ ձևը դասակարգման առաջնահերթության սահմանման համակարգն է:

Մշակութային ժառանգության նյութի դասակարգումը և առաջնահերթության սահմանումը վերաբերում է գտնված առարկաների տեսակավորմանն ու կայունացման գործողությունների առաջնահերթություններին և հիմնված է երեք չափանիշների վրա՝

- մշակութային ժառանգության **վնասի չափը**,
- **հետագա վնասի վտանգը**՝ միջոցներ չձեռնարկելու դեպքում,
- առարկայի կամ կառույցի **նշանակությունը** կամ **արժեքը**:

Առարկայի արժեքը որոշելը բարդ է: Արտակարգ իրավիճակներում ավելի լավ է գնահատումն իրականացնել **իրավիճակի վերլուծության (տե՛ս էջ 30)** և **վնասի և ռիսկերի տեղում գնահատման (տե՛ս էջ 42)** փուլերի ժամանակ: Նման գնահատումը պետք է հիմնված լինի նախապատահարային ինստիտուցիոնալ արձանագրությունների վրա, ինչպիսին են, օրինակ, գույքացուցակը կամ **գրանցումների շտեմարանը**: Օգտվեք **Գործնական ուղեցույցից (էջ 55)**՝ պարզելու, թե ինչպես կատարել դասակարգում և առաջնահերթության սահմանում այն դեպքերում, երբ առարկայի արժեքն անհայտ է:

Գտնված մշակութային ժառանգության նյութերը տեսակավորելիս հետևեք ստորև նշված քայլերին.

- 1. Առանձնացրեք վնասված և անվնաս առարկաները:** Առանձնացրեք նաև թաց և չոր առարկաները: Հեռացրեք բորբոսնած նմուշները, դրանք դրեք պլաստիկ տոպրակներում կամ տարաներում և հեռու պահեք մնացած նմուշներից: Համոզվեք, որ տեսակավորելիս առարկաների սկզբնական տեղակայման ծածկագրերը փակցված են:



Փրկված առարկաների տեսակավորումը՝ որպես «Առաջին օգնություն մշակութային ժառանգությանը՝ ճգնաժամային իրավիճակներում» միջազգային դասընթացի վարժանքի մաս, Վաշինգթոն ԿՇ, Լուսանկարը՝ ICCROM-ի և Սմիթսոնյան ինստիտուտի 2016թ.:

- 2. Խմբավորեք առարկաները՝ ըստ ֆիզիկական վիճակի, նյութի տեսակի և անհրաժեշտ միջամտության ձևի:** Օրինակ՝ այն թղթե կամ գործվածքե նմուշները, որոնք չոր են, բայց մակերեսի մաքրման կարիք ունեն, պետք է միասին պահվեն: Նույն կերպ դյուրաբեկ խեցեղենը և ապակին, որ չեն վնասվել, պետք է միասին խմբավորել:

Տեսակավորումն ավարտելուց հետո յուրաքանչյուր նմուշին **հատկացրեք նույնականացման համար:** Եզակի նույնականացման համարով և տեղակայման ծածկագրով պիտակը տեղադրեք օժանդակ հենարանի վրա, որն օգտագործվում է առարկան տեղափոխելու համար:

3. **Փաստաթղթավորել.** Լրացրեք **փրկված նմուշների արձանագրության ձևաթերթի** այն բաժինները (տես էջ 92), որոնք կապված են առարկայի նույնականացման, սկզբնական տեղակմայան վայրի, չափի և վիճակի հետ (տես էջ 93):



Փրկված նկար, որին ամրացված է նույնականացման համարով և սկզբնական տեղակայման վայրի տեղեկությամբ պիտակ, Իսրայիլ, 2017թ.: Լուսանկարը՝ Ապարնա Թանդոնի, ICCROM:





Եթե կայունացման համար անհրաժեշտ է առարկան հեռացնել դեպքի վայրից, իսկ փրկության արձանագրության ձևաթերթը լրացնելու համար քիչ ժամանակ կա, համոզվեք, որ յուրաքանչյուր նմուշի տրվել է **նույնականացման եզակի համար**, **Տես Գործնական ուղեցույցը, էջ 42:**

- բոլոր նմուշները, փաթեթավորումները և տուփերը պիտակներ ունեն, որոնց վրա նշված են դրանց տրված համարները,
- նմուշին տրված **նույնականացման եզակի համարը** (տես **Գործնական ուղեցույցը, էջ 42**), սկզբնական տեղակայման վայրը, նյութի տեսակը և քաշը գրանցվել են **փրկության գրանցման ձևաթերթում** (տես էջ 92): Եթե գտնված առարկաները վնասված չեն, լրացրեք **փրկության գրանցման ձևաթերթը**, փաթեթավորեք նմուշները, տեղափոխեք դրանք նախապես հատկացված ժամանակավոր պահոց (տես **Տեղափոխում, էջ 103**):



Կայունացնել

Դասակարգումից և առաջնահերթության սահմանումից հետո վնասված նմուշները պետք է կայունացնել, որը կարելի է անել դեպքի վայրում կամ դրանից դուրս՝ մաքուր և նախապես պատրաստված տարածքում: Կայունացման միջոցներն օգնում են կանխել գտնված մշակութային ժառանգության առարկաների նյութերի հետագա վնասումն ու քայքայումը:



Նմուշների կայունացման և չոր մակերեսների մաքրման աշխատակայան Պորտ-Օրենսում, Հայիթի, 2010թ.: Լուսանկարը՝ Ապարնա Թանդոնի, ICCROM:

Ստորև նկարագրված է կայունացման երկու քայլ՝

- 1. Մակերեսի մաքրում.** աղետից հետո կարող են լինել փոշի, մուր, կեղտ և **աղտոտիչներ**, որոնք, եթե մնան առարկաների մակերեսին, կարող են հանգեցնել հետագա վնասների և քայքայման: Եթե առարկան թաց է, վրան կան աղտոտիչներ, կարելի է այն լվանալ մաքուր ջրով՝ դրանք հեռացնելու համար:

Մակերեսի մաքրման անհրաժեշտ մոտեցումը կախված է աղետի բնույթից, վնասի չափից և այն նյութ(եր)ից, որից պատրաստված է մշակութային ժառանգության առարկայի արժեքը: Փորձեք հասկանալ, թե ինչ նյութից է առարկան և կայունացման միջոցը ինչպիսի ազդեցություն կունենա դրա կառուցվածքային ամբողջականության վրա: Քննադատաբար մտածեք և ընտրեք կայունացման համար հասանելի ամենահարմար միջոցը:

- 2. Փաստաթղթավորում.** կայունացման ողջ ընթացքում պահպանեք առարկայի տեղադրության վայրի ծածկագիրը և նույնականացման եզակի համարը: Կայունացումն ավարտելուն պես լրացրեք **փրկության գրանցման ձևաթերթի (տե՛ս էջ 94)** համապատասխան դաշտերը:

Շարժական մշակութային ժառանգության կայունացման գործողությունների ընդունված քայլերի հերթականության համար՝ **տե՛ս Գործնական ուղեցույցը, էջ 57**, «Վնասված շարժական ժառանգության կայունացում» բաժինը:



Փաթեթավորել և տեղափոխել

Հայտնաբերումից, դասակարգումից ու առաջնահերթության սահմանումից, կայունացումից ու փաստաթղթավորումից (եթե իրականացվում է տեղում) հետո առարկաները պետք է նախապատրաստել տեղափոխության և պահպանության:

- 1. Փաթեթավորել.** չոր առարկաները պետք է ծածկել պաշտպանիչ շերտով, օրինակ՝ պոլիէթիլենային փրփուրով կամ բամբակյա թերթերով՝ առարկան հետագա վնասից պաշտպանելու և անվտանգ տեղափոխություն ապահովելու համար: Մշակութային ժառանգության առարկաների տարբեր նյութերի հետ վարվելու և փաթեթավորելու համար՝ տե՛ս Գործնական ուղեցույցը, էջ 49:

Երբ վնասված առարկաները տեղում կայունացնելն անհնար է, գզուշորեն փաթեթավորեք դրանք՝ տեղափոխելու կայունացման համար նախատեսված վայր: Լուսանկարեք առարկաները և պիտակներ փակցրեք այնպես, որպեսզի երևա յուրաքանչյուր նմուշի նույնականացման եզակի համարը:



Այս գործողությունն իրականացրեք նախքան փաթեթավորումը, որպեսզի կայունացման վայրում յուրաքանչյուր նմուշ հնարավոր լինի հեշտորեն նույնականացնել:



Համոզվեք, որ թաց կամ խոնավ նմուշները զգուշորեն ծածկվել են, որպեսզի կանխվի տեղափոխության ընթացքում այլ առարկաների աղտոտումը և արագ չորացումը: Հնարավորության դեպքում պետք է օգտագործել սառնարանային բեռնատարներ՝ թաց առարկաները տեղափոխելիս սառեցնելու կամ լիոֆիլիզացիայի համար:

2. Պիտակավորեք և լրացրեք փրկության գրանցման ձևաթերթը

ա. Փաթեթավորած առարկաները պիտակավորեք՝ նշելով նախորդ փուլում առարկաներին տրված նույնականացման եզակի համարները: Համոզվեք, որ բոլոր պիտակները հստակ երևում են և ապահով ամրացված են: Մեկից ավելի առարկաներ պարունակող տուփերի վրա պետք է նշել ներսում գտնվող նմուշների քանակը և տուփում պահվող յուրաքանչյուր նմուշի նույնականացման եզակի համարը:

բ. Լրացրեք **փրկված նմուշների արձանագրության ձևաթերթը (տես էջ 94)** և տեղաշարժին հետևելու ձևաթերթը **(տես ստորև օրինակը)**:

Տեղաշարժին հետևելու ձևաթերթ

Մուտագրման համար	Տուփի համար	Տուփում նմուշների ընդհանուր թիվը	Նմուշների հետ վերալվելու ցուցումներ/տեղափոխում	Ում կրողից է ուղարկվել	Ում կրողից է ուղարկվել	Սուրհանդակի/մեքենայի համար	Առացման ամսաթիվ	Տուփի համար	Տուփում նմուշների ընդհանուր թիվը	Ստացող
1	12	20	Ապակի՝ վարվել զգուշությամբ	Արոն Համիլ, ֆունդացիա	Հունվարի 25	xxx256	Հունվարի 25	12	20	xxx պահեստավան
...

3. Փաստաթղթավորման թիմի առնվազն մեկ անդամ պետք է հետևի, թե ինչպես են առարկաները դրվում տուփերի մեջ: Յուրաքանչյուր ձևաթերթի առնվազն մեկ օրինակ պետք է կցված լինի առարկաներին՝ մինչև պահեստավորման վայր հասնելը:

4. Առարկաները պահոցի տուփերում դասավորելիս ծանր առարկաները դրեք ներքևում, իսկ վերևում՝ ավելի թեթև կամ դյուրաբեկ առարկաները: Մի ծանրաբեռնեք տուփը: Երբ բոլոր առարկաները փաթեթավորվեն, կարող են տեղափոխվել նոր ժամանակավոր պահոց:



Տեղափոխում

Ինչպես **հետպատահարային տարհանման** ընթացքը, այնպես էլ այս քայլը ներառում է առարկաների տեղափոխությունը ավելի ապահով, ժամանակավոր վայր՝ թե՛ պատահարի տարածքում, թե՛ դրանից դուրս: Մինչ թիմի մի մասը ներգրավված է նմուշների փրկարարական աշխատանքներում, մյուսները կարող են օգնել ժամանակավոր պահոցի տարածքը նախապատրաստելուն: Պահոցի տարածքը պետք է մաքրել և ախտահանել՝ նախքան առարկաները կրեքվեն տարածք: Երբ բոլոր առարկաները տեղափոխվել են նոր պահեստային տարածք, մուտքագրեք նրանց տեղափոխման ծածկագրերը փրկության գրանցման ձևաթերթում:



ժամանակավոր պահոցի փորձքներ, որոնք ստեղծվել են կենտրոնական Իրափայում՝ 2016 և 2017 թվականների երկրաշարժերից փորհանված և փրկված առարկաները պահպանելու համար: Լուսանկարը՝ Ապարնա Թանդոնի, ICCROM:



Հաշվետվություն

Ինսամակալների համար գործողության ողջ ընթացքի մասին հաշվետվություն պատրաստեք: Այն պետք է ներառի՝

- գործողության ամփոփագիր,
- գործողության ընթացքի հիմնական քայլերը փաստող լուսանկարներ,
- կայունացման միջամտության տեսակը և օգտագործված նյութերը,
- **փրկության գրանցման թարմացված ձևաթերթը,**
- առաջացած ծախսերը,
- վերականգնման կարիքները,
- աշխատանքներում ներգրավված թիմի անդամների կոնտակտային տվյալները,
- աշխատանքների ղեկավարի անունը, ստորագրությունը և կոնտակտային տվյալները:





Մշտադիտարկում

Ինձամակալների հետ խորհրդակցելով՝ պահոցի տարածքի պարբերական ստուգման և մաքրման ժամանակացույց սահմանեք:

Պատմական շինությունների վթարային ամրակայում

Կառույցի կամ շինության վթարային ամրակայումը ներառում է այնպիսի գործողություններ, որոնք ժամանակավորապես օգնում են զսպել պատմամշակութային անշարժ ժառանգությանը հասցված վնասը և նվազեցնել կառուցվածքային կորստի հետևանքով փլուզման կամ քայքայման հետագա ռիսկերը: Այս գործողությունները հատկապես կարևոր են այն դեպքում, երբ կառույցն այնքան վնասներ չի կրել, որ (մասամբ կամ ամբողջությամբ) վերանորոգվի կամ երբ տեղական համայնքը ցանկանում է շարունակել օգտագործել շրջակա տարածքը: Կառույցի շտապ կայունացումը կարող է նաև էական լինել վերջինիս արժեքավոր ներսույթի կամ բարձրարժեք անշարժ ժառանգության այնպիսի նմուշների առկայության դեպքում, ինչպիսին են որմնանկարները, գերեզմանները կամ խճանկարային հատակները: Կարևոր է նշել, որ այս միջոցները չեն կարող վերականգնել կառույցի սկզբնական անվտանգության մակարդակները: Անցումային կամ **վաղ վերականգնման** փուլում անհրաժեշտ կլինի երկարաժամկետ լուծումներ գտնել:



Շինությունների շտապ վերականգնումը պահանջում է մասնագիտացված մոտեցում: Մի փորձեք այն իրականացնել առանց խորհրդակցելու այն նախագծող ճարտարագետի հետ, որը տվյալ տարածքի պատմական կառույցների մասին գիտելիք ունի:

Ինչո՞ւ է կարևոր վթարային կառույցի ամրակայումը:

Եթե կառույցը վնաս է կրել և մնացել է առանց հսկողության, հետագա վնասի և փլուզման վտանգը մեծանում է, ինչն էլ կարող է կյանքեր վտանգել:

Պատահարից հետո կառույցը կարող է փլուզվել կամ վտանգավոր դառնալ, եթե՝

- վնասվել է նրա **կառուցվածքային ամբողջականությունը** և **բեռնվածքները** (սովորական կամ գերազանցող) այլևս չեն կարող անվտանգ փոխանցվել գետնին,
- կառույցի մասնակի փլուզումն առաջացնում է տեղային **բեռնվածքների մեծացում**,

- ներքին կառուցվածքային տարրերն այլևս պաշտպանված չեն արտաքին միջավայրից, օրինակ՝ երբ պատի ներքին տարրերը բացվում են պատի մակերեսի վնասի պատճառով:

Ժամանակին արված միջամտությունը կարևոր է այն տարերային պատահարներից հետո, որոնք, ամենայն հավանականությամբ, կարճ ժամանակահատվածում կարող են կրկնվել: Օրինակ՝ երկրաշարժից հետո անհրաժեշտ է կայունացման միջոցառումներ իրականացնել, քանի որ հետոնցումները կարող են հանգեցնել հետագա վնասների, իսկ որոշ դեպքերում՝ կառույցի ամբողջական փլուզման: Նույն կերպ ցիկլոնային կամ հակամարտությունից տուժած շրջաններում կարևոր է պատմական շինությունները հնարավորինս արագ անվտանգ դարձնել:



Քազան, Մյանմա, 2016թ.: Լուսանկարը՝ ICCROM-ի:





Կառուցվածքային ամբողջականության պահպանության կարևորությունը. Մյանմա

2016 թվականի օգոստոսի 24-ին Մյանմայի Չաուկ քաղաքում 6.8 մագնիտուդով երկրաշարժ եղավ՝ մոտակա Բագանի հնավայրի հուշարձաններին հասցնելով խոշոր վնասներ: Երկրաշարժը տեղի ունեցավ անձրևների սեզոնի հենց սկզբում: Ստորև կառուցվածքային վնասի օրինակներ են որոնք հրատապ անվտանգության և կայունացման գործողությունների շնորհիվ քիչ ազդեցություն են ունեցել:

Փլուզում՝ կառուցվածքային խախտման պատճառով

Երկրաշարժից առաջ Սուլամանի տաճարի թաղը մասամբ փլուզվել էր, և կախ ընկած տարրերը չէին ամրակայվել, որի հետևանքով՝ կառուցվածքային խախտումներ էին առաջացել: 2016 թվականի երկրաշարժի ժամանակ թաղն ամբողջությամբ փլուզվեց: Նման խոշոր վնասից կարելի էր խուսափել, եթե խոցելի կառուցվածքային տարրերը վերահսկողության ներքո ամրացվեին կամ հեռացվեին:



Բագան, Մյանմա, 2016թ.: Լուսանկարը՝ Էժենի Կրեպեի:

Ծանրաբեռնվածություն՝ բեկորների պատճառով

Փլատակների կույտերը գերծանրաբեռնվածություն էին առաջացրել երկրաշարժից արդեն իսկ թուլացած կառույցների համար: Կարևոր էր հնարավորինս շուտ հեռացնել փլատակները, մանավանդ որ մեծ էր հորդառատ անձրևների վտանգը: Փլատակները կուտավում են ջուրը, ինչը ստեղծում է հավելյալ ծանրաբեռնվածություն: Նման իրավիճակում ժամանակավոր լուծում է փոփ եկած կույտը բրեզենտով ծածկելը՝ միաժամանակ պատրաստվելով բեկորների հեռացմանը: Արդյունավետության համար բրեզենտը պետք է ապահով ամրացնել:



Սուլամանի տաճարը Բագանում, Մյանմա, 2016թ.: Լուսանկարը՝ Էժենի Կրեպեի:






Կառուցվածքային ներքին տարրերը և դեկորատիվ մակերեսներն անպաշտպան թողնելը

Տանիքներում և տանիքների ջրամեկուսիչ համակարգերում հայտնաբերվել են անցքեր ու ճաքեր, որի հետևանքով ջուրը ներթափանցել է շենք՝ պատճառելով լուրջ վնաս: Պարզվել է, որ ջրհորդանները կտրվել են և բեկորներով արգելափակվել՝ այսպիսով չկարողանալով հեռացնել տանիքի ջուրը: Երկրաշարժից հետո վնասված պատերը շատ զգայուն դարձան անձրևների նկատմամբ՝ հատկապես այն դեպքերում, երբ ցեխի շաղախը մնում էև առանց պաշտպանության: Եվ իսկապես, հորդառատ անձրևի պատճառով երկրաշարժին հաջորդած շաբաթների ընթացքում նոր փլուզումներ տեղի ունեցան:

Աղբյուրը՝ Էժենի Կրեպե, Շրջակա միջավայրի ճարտարապետություն և շինարարական մշակույթներ – CRA-Terre, Գրենոբլ:



Բագան, Մյանմա, 2016թ.: Լուսանկարը՝ Էժենի Կրեպեի:



Ճաքեր փաճարի փանիքում, Բագան, Մյանմա, 2016թ.: Լուսանկարը՝ Էժենի Կրեպեի:



Անցքեր Բագանում պագոդայի փանիքի ջրամեկուսիչ համակարգում, Մյանմա, 2016թ.: Լուսանկարը՝ Էժենի Կրեպեի:



Ինչպե՞ս կարելի է ամրակայման գործողություններ իրականացնել վթարային իրավիճակում

Այս բաժնում ներկայացված են պատմական կառույցների վթարային ամրակայման հիմնական գործողությունները: Նախքան կայունացման որևէ գործողություն իրականացնելը՝ **ապահովեք անձնական և տարածքի անվտանգությունը:**

Ստորև նկարագրվում է վթարային ամրակայման տարբեր տեսակի գործողությունների իրականացման ընդհանուր ընթացքը՝ պատմական շինությունների և կառույցների, ներառյալ հնավայրերում անպաշտպան մնացած ավերակների համար:





Նախապատրաստել

1. Խնամակալներից և, հնարավորության դեպքում, արտակարգ իրավիճակների համակարգողից ստացեք գրավոր թույլտվություն՝ շինության կամ կառույցի վթարային ամրակայում իրականացնելու համար:
2. Հավաքեք թիմ, որտեղ ընդգրկված կլինեն նախագծող ճարտարագետ, ճարտարապետ, վերապատրաստում անցած աշխատակիցներ ու կամավորներ: Համոզվեք, որ ճարտարապետը և նախագծող ճարտարագետը ծանոթ են մշակութային ժառանգության կառույցների և շինությունների նշանակությանը: Թիմը կարող է ներառել տեղական պատմաբանի կամ համայնքի անդամի, որը նախնական գիտելիք ունի շինարարության ոճի և օգտագործված նյութերի առանձնահատկությունների մասին:
Կարող են մասնակցել նաև զինվորականները և հրշեջները, որոնք սովորաբար կառույցների վթարային ամրակայման վերապատրաստում են անցնում: Որոշ երկրներում արտակարգ իրավիճակների մասին օրենսդրությունը հրշեջներից կամ զինվորականներից պահանջում է վերահսկել վթարային կառույցները կամ դրանց ամրակայում իրականացնել: Այդուհանդերձ, նրանց պետք է տեղեկություններ փոխանցել շենքի նշանակության և պահպանության կարիք ունեցող մշակութային ժառանգության տարրերի վերաբերյալ:
3. Համապատասխան գծագրերից և հատակագծերից բացի՝ օգտագործեք **վնասի և ռիսկերի գնահատման հաշվետվությունը (տես էջ 63)**: Իրականացրեք վնասի տեսակի և դրա պատճառների խորքային տեխնիկական գնահատում՝ հայտնաբերելու կարևոր կառուցվածքային և ոչ-կառուցվածքային վնասների տեղերը: Այս գնահատումը կարող է ներառել շինության հիմքերի վիճակի և տարբեր տեսակի բեռնվածքների ուսումնասիրություն:
4. Որոշեք աշխատանքային, նյութերի պահեստավորման և սնվելու համար անվտանգ տարածքները: Սահմանազատեք այդ տարածքները տեղանքի քարտեզի վրա և համապատասխան ցուցանակներ տեղադրեք:
5. Եթե շենք մուտք գործելն անվտանգ է, նույնականացրեք չտեղաշարժվող այնպիսի դեկորատիվ տարրերը, ինչպիսին են սալիկապատ կամ փայտե հատակները, որմնանկարներն ու խճանկարները, որոնք անհրաժեշտ է ծածկել և պաշտպանել՝ նախքան հնարավոր կլինի վթարային ամրակայման աշխատանքներ իրականացնել: Նույն կերպ գտեք արժեքավոր կահկարասի, օրինակ՝ գորգեր, գոբելեններ և նկարներ, որոնք պետք է **տարհանել**՝ նախքան շենքի ամրակայում սկսելը:





6. Վթարային ամրակայման անհրաժեշտ միջոցառումներ մշակելու համար խորհրդակցեք նախագծող ճարտարագետի հետ և գծագրեր պատրաստեք: Հիմնվելով պլանի վրա՝ պատրաստեք ձեր գործողությունների իրականացման համար անհրաժեշտ նյութերի և սարքավորումների տեխնիկական բնութագրերը:
7. Խորհրդակցեք խնամակալների հետ և բացատրեք նրանց շինության կամ կառույցի համար ընտրված վթարային ամրակայման միջոցի տեսակը, ակնկալվող տևողությունը և պահանջվող մարդկային ու ֆինանսական ռեսուրսները: Անհրաժեշտության դեպքում, դիմեք խնամակալների և տեղի համայնքի օգնությանը՝ **տարհանելու (տես էջ 79)** արժեքավոր առարկաները և տեղում պաշտպանելու դեկորատիվ տարրերը:
8. Հավաքեք նյութեր և սարքավորումներ, օրինակ՝ փայտե տախտակներ, պարաններ, մուրճեր, սղոցներ և այլն: Կառուցվածքային կայունացման հատուկ միջոցառումների համար անհրաժեշտ պարագաների և սարքավորումների տեսակների վերաբերյալ հավելյալ տեղեկությունների համար՝ **տես Գործնական ուղեցույց, էջ 93:**



Փաստաթղթավորել

1. Գրանցեք պատճառած վնասի ճշգրիտ վայրը, տեսակը և չափը, օրինակ՝ ճաքեր, մակերեսային դեֆորմացիաներ, սվաղի շերտի աղավաղում: Վնասը գրանցելու համար օգտագործեք հատակագծեր, կտրվածքներ և ճակատների գծագրեր:
2. Լուսանկարեք վնասներ կրած հատվածները, խոշոր և ընդհանուր պլանով կադրեր արեք: Լուսանկարելիս ավելացրեք չափման ձող կամ 10 սանտիմետրանոց քանոն՝ չափը որոշելու համար, ինչպես նաև ամսաթիվը ցույց տվող նշան: Հատակագծի վրա գրանցեք կոնկրետ վնասի տեսակին համապատասխանող լուսանկար(ներ)ի հղման համարը:
3. Անհրաժեշտության դեպքում, արձանագրեք այլ կարևոր այնպիսի մանրամասներ, ինչպիսին են բեռնվածքների տարբեր տեսակները, բնահողի վիճակը և այլն: Վնասի փաստաթղթավորմանն ավելացրեք ձեռնարկված կայունացման միջոցի համապատասխան գծագիրը, քանի որ ընդհանուր առմամբ այս արձանագրությունները կօգնեն սահմանել վերականգնման կարքիները:



Գործադրել

Շինությունների և կառույցների վթարային ամրակայման հիմնական միջոցները նկարագրված են ստորև: Նման միջոցների տեխնիկական մանրամասները ներկայացված են **Գործնական ձեռնարկում, էջ 79:**

1 Ժամանակավոր ծածկ

Զգայուն տարրերը ջրից, քամուց, շրջակա միջավայրի հետագա ազդեցությունից և կենդանիների ներխուժումից պաշտպանելու համար՝ օգտագործեք ամուր բրեզենտներ (կրկնապատկված մետաղական ցանցով՝ ընկնող առարկաների նկատմամբ դիմադրությունը կարգավորելու համար) կամ ծալքավոր ցինկապատ երկաթ (CGI) կամ պողպատե (CGS) թիթեղներ, որոնք ամրացվել են գոյություն ունեցող կամ ժամանակավոր շրջանակի վրա: Գտեք ամենարդյունավետ լուծումը՝ հաշվի առնելով տեղում հասանելի ռեսուրսները, նյութերը և հմտությունները: Քայլ առ քայլ իրագործման համար տես **Գործնական ուղեցույց, էջ 73: Basic shoring**



Բազան, Մյանմա, 2016թ.: Լուսանկարը՝ Ապարնա Թանդոնի:

2. Հիմնական հենարան

Հենարանը վերանորոգումների ժամանակ կառուցված տարրերի կամ փլուզման վտանգի եզրին գտնվող կառույցի համար հենման տեխնիկա է: Այն հենակի գործառույթ ունի և **ծանրությունը** փոխանցում է հիմքին:


Հենարանները կարող են կիրառվել որպես հենման հիմք՝

- վնասված պատի կամ սյան վրա հենված կրող հեծանների համար,
- թեքված, ծոված կամ դուրս ցցված ծանրություն կրող աղյուսե, քարե կամ կավե պատի համար, որը կառուցվածքային առումով կայուն չէ:
- դռան կամ պատուհանի կտորված բարավորի համար:



Պարզ պատվարումը կազմված է չորս բաղադրիչներից՝

1. բեռնվածքը կրող տարրեր (վերին հեծաններ կամ պատային սալեր),
2. բեռնվածքը փոխանցող տարրեր (սյուներ կամ հենարաններ),
3. համակարգը կայունացնող կողային ամրակներ/պահանգներ,
4. բեռնվածքը գետնին փոխանցող կրող տակդիրներ:



Ճիշտ տեղերը նշել

Հնարավորության դեպքում, հենարանը նախապես կառուցեք անվտանգ վայրում, որտեղ հարթ մակերևույթով աշխատանքային մաքուր տարածք կա: Նախքան պատվարումը՝ բեկորները հեռացրեք այն տարածքից, որտեղ պետք է տեղադրվի կրող տակդիրը, քանի որ բեռնվածքի համաչափ բաշխման համար անհրաժեշտ է հարթ մակերես:



Մետաղական հենարաններ օգտագործելիս հենարանի և վնասված կառուցված միջև մշտապես գործածեք փայտե տախտակներ: Որպես կանոն՝ փայտե օգտագործվում է վթարային հենարանի համակարգի վերին և/կամ ստորին հատվածում՝ բեռնվածքը կուտակելու և փոխանցելու համար: Բացի այդ՝ ոմանք համարում են, որ փայտը ծառայում է որպես լսելի և տեսանելի զգուշացում, երբ գերծանրաբեռնվածության պատճառով այն դեֆորմացվում է:


Պարզ փայտե պատվար կառուցելու քայլ առ քայլ ցուցումները նկարագրված են **Գործնական ուղեցույցում, էջ 79**:



- Առանց նախագծող ճարտարագետի՝ մի փորձեք պատնեշել այն տարրերը, որոնք ունեն ավելի քան 3 մետր բարձրություն:
- Ձգուշացեք թույլ կամ վնասված շաղախով քարե պատը պատվարելուց: Օգնություն խնդրեք նախագծող ճարտարագետից, որպեսզի վերջինս նախագծի բավականին մեծ պատի հենարան կամ բավականաչափ հենակներ կառուցի՝ ողջ տարածքը պատնեշավորելու համար:

3. Կառույցը կապելը

Կառույցը կապելը բարելավվում է նրա ուղղահայաց ծանրության կրող կարողությունը՝ ապահովելով կողային մեկուսացումը և կանխելով հետագա կողային աղավաղումը: Կապելն օգնում է վերամիավորել ուղղանկյուն պատերը ողջ շենքի չափով՝ կողային շարժման հանդեպ ապահովելով ավելի լավ դիմադրություն: Շինությունը կարելի է կապել սինթետիկ գոտիներով, պողպատե ճոպաններով կամ մասերով, որ եռակցվել կամ ամրացվել են պտուտակներով:



*Գծագրի աղապարացիա՝
Grimaz, S. et al. 2010. Vademecum,
STOP, Երկրաշարժից վնասված
շենքերի հենարանների օրինակ-
ներ և գործստնական ընթացա-
կարգեր: Հոռմ, Ներքին գործերի
նախարարություն, Իտալիայի
իրշեջ ծառայություն:*




Երբեք մի օգտագործեք այս մեթոդը բետոնե սյուների փլուզման դեպքում:

- ա. Նախքան կառուցվածքային մեկուսացումն իրականացնելը՝ խորհրդակցեք նախագծող ճարտարագետի հետ դրա անհրաժեշտության և կառուցվածքի մասին:
- բ. Նախքան կառուցվածքային տարրը մեկուսացնելը՝ հեռացրեք բեկորները:
- գ. Կառույցը պոլիէթերից սահմանափակող գոտիներով և/կամ արգելանիվ մեխանիզմով բռնակներով կապելիս՝ կառույցի վրա տեղադրեք փայտե տախտակներ կամ պողպատե թիթեղներ, որպեսզի ճնշումը բաշխվի բարձրության վրա և այն կիպ լինի: Տախտակները պետք է ունենան մոտավորապես 3 սմ հաստություն: Դրանք պետք է տեղադրվեն պատի/սյան և պողպատե թիթեղների միջև:



դ. Ամրացրեք գոտիները՝ սկսելով ամենաբարձր հատվածից (տե՛ս պատկեր 2): Միմյանց միջև պահպանեք կանոնավոր տարածություն: Լարանների միջև տարածությունը պետք է լինի 10-ից 45 սմ միջակայքում՝ համաձայն վնասի մակարդակի և պահվող ծանրության: Տեղադրեք արգելանիվ մեխանիզմը հավասար հեռավորության վրա: Կառուցը մեկուսացնելու համար անհրաժեշտ նյութերի և սարքավորումների ցանկի համար՝ տե՛ս **Գործնական ուղեցույց, էջ 95**:



Գծագրի աղապարացիա՝

Grimaz, S. et al. 2010. *Vademecum, STOP*, երկրաշարժից վնասված շենքերի պատվարների օրինակներ և գործառնական ընթացակարգեր: Հոռմ, Ներքին գործերի նախարարություն, Իվրալիայի հրշեջ ծառայություն

4. Տեղում դեկորատիվ տարրերի պահպանություն

Տեղում կայունացումը ներառում է դեպքի վայրում իրականացվող այնպիսի գործողություններ, որ կարելի է ձեռնարկել՝ ամրակայելու անշարժ դեկորատիվ տարրերը և արվեստի այնպիսի նմուշները, ինչպիսին են՝ քանդակները, պատի կամ հատակի խճանկարները և որմնանկարները:

Շենքերի վթարային կայունացման միջոցառումները, ինչպես օրինակ՝ հենարանների տեղադրումը և մեկուսացումը, կարող են վնաս հասցնել չտեղաշարժվող տարրերին, եթե չհաջողվի դրանք պաշտպանելու համապատասխան քայլեր ձեռնարկել: Մշտապես խորհրդակցեք վերականգնողի հետ՝ նախքան դեկորատիվ տարրերի կամ դրանց շատ մոտ կայունացման գործողություններ նախաձեռնելը:



Պաշտպանիչ և մեկուսիչ շերտ որմնանկարի և հենարանի միջև Ֆրեյշու-դի-Էշպադա-Սինյա եկեղեցում, Պորտուգալիա, 2007թ.: Լուսանկարը՝ էմերալդա Պաուպերիոյի:

Նախքան վթարային կայունացում սկսելը, համոզվեք, որ քանդակները, սալիկները կամ մակերևույթները անվտանգ են սկզբնական տեղակայման վայրում: Պատվարի կամ մեկուսացնող գոտու միջև դրվագազարդ մակերեսի հետ անմիջական շփումից խուսափելու համար՝ օգտագործեք չօսլայած սպիտակ մուսլին կամ ներկակյուֆ չպարունակող, որևէ այլ փափուկ գործվածք: Նույն կերպ պոլիէթիլենային փրփուրի օգտագործումը կանխում է անմիջական շփումը: Համոզվեք, որ այն փափուկ գործվածքով ապահով փաթաթված է, որպեսզի պատահմամբ ընկնելու և դեկորատիվ տարրի մակերեսը քերծելու վտանգը նվազի:

Կարող եք նաև օգտագործել ավազե պարկեր՝ վերին հեծանի կամ պատային սալի և դեկորատիվ տարրի միջև շփումը կանխելու համար, թեև հաշվի առեք, որ խոնավ կլիմայական պայմաններում ավազե պարկերը հակված են խոնավություն կուտակել, որը կարող է հետագայում վնասներ պատճառել: Անհրաժեշտ նյութերի ընդհանուր ցանկի համար՝ [տե՛ս Գործնական ուղեցույցը, էջ 93:](#)



Անվտանգություն տեղում և խճանկարների կայունացում Մաարայի խճանկարների թանգարանում. Սիրիա

Սուր հակամարտությունների պայմաններում անվտանգության և կայունացման գործողությունները կարող են ներառել ծայրահեղ և բարդ այնպիսի քայլեր, ինչպիսին են անպաշտպան մնացած հնագիտական մնացորդների ծածկումը կամ որմնանկարի ու խճանկարի պաշտպանիչ երեսպատումը: Մաարայի խճանկարների թանգարանը, ուր պահվում է Մերձավոր Արևելքում 3-6-րդ դդ. հռոմեական և բյուզանդական խճանկարների ամենակարևոր հավաքածուներից մեկը, մեծապես տուժել էր Սիրիայում շարունակվող հակամարտության ժամանակ: Նախքան սիրիական մշակութային ժառանգության մասնագետների և կամավորների ձեռնարկած անվտանգության ու կայունացման արտակարգ միջոցառումները՝ շենքը փլուզման վտանգի եզրին էր:

Հակամարտության ընթացքում խճանկարները հետագա վնասից պաշտպանելու նպատակով՝ սիրիական թիմը խորհրդակցեց մշակութային ժառանգության վերականգնող-մասնագետների հետ՝ մշակելու չտեղաշարժվող խճանկարները կայունացնելու և պահպանելու պլան: Տանիքի անցքերը վերանորոգվեցին՝ հետագա վնասը և փլուզումը կանխելու համար: Այնուհետև խճանկարի վերականգնող-մասնագետների հետ խորհրդակցելով՝ թիմը խճանկարները ծածկեց սոսնձի և կտորի շերտով, որպեսզի սալիկները չառանձնանան: Կայունացումից հետո խճանկարների միջև տեղադրվեցին մեծ քանակի ավազե պարկեր՝ պաշտպանելու դրանք հետագա վնասից: Ընդհանուր առմամբ պահպանվեց մոտավորապես 148 մ² խճանկար:

Աղբյուրը՝ Սմիթսոնյան ինստիտուտ, 2015թ.: Սիրիայի Մաարայի խճանկարների թանգարանում իրականացված վթարային պահպանության գործողություններ: Վաշինգտոն ԿՇ, Սմիթսոնյան ինստիտուտ:



Հաշվետվություն և հաղորդակցություն

1. Կազմեք ամփոփ հաշվետվություն՝ նկարագրելով վթարային ամրակայման գործողությունները, որոնք իրականացրել եք մշակութային ժառանգության շինությունների/կառույցների համար:
2. Նշեք կարևոր մանրամասները, ինչպես օրինակ՝ շարժական մշակութային ժառանգության տարահանումը կամ պատմական շինությունների բեկորների փրկումը, որն իրականացվել է վթարային ամրակայման նախապատրաստման ժամանակ:
3. Տրամադրեք առաջացած ծախսերի հաշվետվությունը և ցանկը, որ ներառում է վթարային ամրակայման աշխատանքներն իրականացրած թիմի անդամների անունները և կոնտակտային տվյալները:
4. Հաշվետվությունը պետք է պարունակի մշտադիտարկման պլան և ամբողջական վերանորոգման ու վերականգնման համար առաջարկվող գործողություններ:



Իրականացրեք մշտադիտարկում

Կառույցների և շինությունների վթարային կայունացման գործողությունները ժամանակավոր բնույթ են կրում: Այդպես, նախքան ամբողջական վերականգնում սկսելը՝ կարևոր է հետևել դրանց արդյունավետությանը: Օրինակ՝ փլուզման դեպքում պատվարները կարող են վտանգավոր դառնալ: Ուստի աղավաղման կամ գերբեռնվածության որևէ նշանի առկայության դեպքում, դրանք պետք է պարբերաբար ստուգվեն (առաջին մի քանի օրվա ընթացքում՝ առնվազն 12 ժամը մեկ):

Համոզվեք, որ սյուները մնան իրենց սկզբնական դիրքում: Ավելին՝ միացումները և սեպերը պետք է ամուր մնան ու չխախտվեն: Հետևեք հենարանի կրող տակդիրի դիրքի ցանկացած տեղաշարժին կամ հիմքի խախտման որևէ նշանի: Նույն կերպ համոզվեք, որ սյուների ծայրերը չեն սեղմվել կամ որ հեծանների ծայրերը չեն կիսվել, քանի որ դրանք մատնանշում են, որ պատվարը գերծանրաբեռնված է: Եթե պատային սալի վրա ճաքեր են հայտնվում, նշանակում է՝ սալը բավականաչափ մեծ չէ կամ պատը չի հակազդում հենարանի ճնշմանը:

Այն հատվածներում, որտեղ **սահմանափակող գոտիները** կամ պողպատե ճոպաններն օգտագործվել են կառույցը կապելու համար, համոզվեք, որ դրանք ամուր են: Ստուգեք, որ փայտե տարրերն անշարժ լինեն և սեղմվեն գոտիների ու ճոպանների ճնշման տակ: Պարբերաբար ստուգեք օգտագործվող փայտը, որ բացահայտեք ֆի-

զիկական մաշվածության կամ վնասի նշանները (օրինակ՝ վնասատուների առկայություն):

Հեղեղումից տուժած շենքում համոզվեք, որ կանոնավոր կերպով արձանագրում եք հետևյալը.

- ա. Սվաղի և/կամ պատերի խոնավությունը, որի համար կարող եք օգտագործել խոնավության չափիչ կամ մուլտիմետր կամ կարող եք վերցնել այն նմուշները, որոնք պետք է կշռել՝ դրանք ջեռոցում չորացնելուց առաջ և հետո:
- բ. Կավե կառույցներում խոնավության մակարդակը: Պետք է ստուգել խոնավությունը պատերի հիմքերում և անմիջապես պատի մեջ (պատի սվաղի խոնավությունը տարբերվում է պատի կառուցվածքային մասի խոնավությունից):
- գ. Ցանկացած աղի տարածման կամ բորբոսի աճ:
- դ. Փայտե տարրերի ցանկացած աղավաղում:
- ե. Սվաղի ճաքեր կամ դուրս ցցվածություն:

Ինչպես պաշտպանել և կայունացնել ոչ նյութական մշակութային ժառանգությունը:

Անվտանգությունը և կայունացումը եզրույթներ են, որոնք տրամաբանորեն չեն համապատասխանում ոչ նյութական ժառանգությանը: Ինչպես նկարագրված է համապատասխան բաժնում՝ **ոչ նյութական ժառանգության ռիսկերի և վնասի գնահատումը** պետք է ներառի՝

- ա. տարածքի հասանելիություն,
- բ. կատարում,
- գ. փոխանցում:

Այն գործողությունները, որոնք համապատասխանում են անվտանգությանը և կայունացմանը, առաջին հերթին իրականացվում են առաջին երկու մակարդակներում, որ առնչվում են ոչ նյութական ժառանգության հետ կապված նյութական տարրերին և մարդկանց՝ որպես ավանդույթների կրողների: Ավելին՝ ոչ նյութական ժառանգության անվտանգությանը և կայունացմանն ուղղված ցանկացած գործողություն պետք է հիմնված լինի տուժած համայնքի և դրա հատուկ կարիքների հստակ պահանջների վրա:

Ոչ նյութական ժառանգության դեպքում ժառանգության արժեքը կայանում է համայնքի ավանդույթների և գիտելիքների համակարգերի, ինչպես նաև դրանց կիրառման ու փոխանցման մեջ: Որպես այդպիսին՝ նման միջոցառումների նպատակը տարբերվում է նյութական ժառանգության միջոցառումների նպատակներից: Հետևաբար ոչ նյութական ժառանգության կայունացումը ենթադրում է մի բան, որն էապես տարբերվում է անշարժ կամ շարժական ժառանգության կայունացումից:





Կրոնական ձեռագրերի ընթերցանության ավանդույթը՝ որպես Նեպալի առօրյա ծեսերի մաս, 2015թ.: Լուսանկարը՝ ICCROM-ի

Մասնավորապես, այն վերաբերում է՝

- Վտանգավոր պատահարից անմիջապես հետո համայնքի համար որոշակի գործունեության, ծեսի և այլնի կատարման շարունակության հնարավորությանը:
- Գիտելիքի և հմտությունների փոխանցման երաշխավորմանը, որը հնարավոր է շարունակել այնքան ժամանակ, քանի դեռ չեն գտնվել ավելի երկարաժամկետ լուծումներ:

Նյութական տարրերի և մարդկանց անվտանգության և կայունացման գործողությունները նշված են ստորև՝

1. **Նյութական տարրեր.** ներառում են շենքեր, վայրեր, առարկաներ, գործիքներ, տարագներ և ոչ նյութական գործունեության հետ կապված ցանկացած նյութական մշակույթ: Եթե **իրավիճակի վերլուծությունը և վնասի ու ռիսկերի տեղում գնահատումը** բացահայտել են առաջնահերթ կարիքները, ապա կարելի է կիրառել վերոնշյալ նույն միջոցները, որ իրականացվել են շարժական ժառանգության համար:

Սովորաբար ոչ նյութական ժառանգությանն առնչվող նյութական տարրերը մշակութային կարևորություն ունեն, քանի որ դրանք միջավայր և համատեքստ են ստեղծում ոչ նյութական ավանդույթներ-

րի դրսևորման համար: Ուստի նյութական տարրերի կայունացումը պետք է ուղղված լինի ոչ նյութական ավանդույթների շարունակականության ապահովմանը: Սա կարող է նշանակել նաև, որ համայնքները կայունացման որոշակի նախապատվություններ կունենան: Օրինակ՝ եթե պաշտամունքի վայրը վնասվել է, համայնքը կարող է նախընտրել ժամանակավոր ապաստանը հենարաններով ամրակալված կառույցին, որ բավականաչափ անվտանգ չէ կրոնական արարողությունների համար:

- 2. Մարդիկ.** մեծ մասամբ անվտանգության և կայունացման գործողությունները սահմանափակվում են համայնքների գտնվելու վայրերի բացահայտմամբ և այն հանգամանքով, թե ինչպես կարող է իրականացվել ոչ նյութական արժեքների փոխանցումը: Այս քայլը կարող է ներառել նաև այնպիսի գործողություններ, ինչպիսին են փաստաթղթավորումը, արձանագրումը կամ գույքագրումը՝ երաշխավորելու, որ կատարվել են տեսողական ու բանավոր արձանագրություններ, որ կօգտագործվեն, երբ իրավիճակը կկարգավորվի: Այնուամենայնիվ, հատկապես խոշոր տեղահանության դեպքերում կամ երբ համայնքը կրել է ավանդույթների առանցքային կրողների կորուստ, գիտելիքների փոխանցման համար անհրաժեշտ է իրականացնել հրատապ միջոցներ, ինչպես օրինակ վավերագրում՝ տեսանկարահանման կամ հմտությունների ուսուցման փոխանցման միջոցով:



Ոչ նյութական արժեքների հետ աշխատելու խորհուրդներ

Ոչ նյութական ժառանգությունը կարող է նաև կարևոր դերակատարություն ունենալ շարժական և պատմական ժառանգության առաջին օգնության գործողություններում: Նախքան անվտանգության և կայունացման գործողություններ ձեռնարկելը՝ միշտ նկատի ունեցեք շինությունների ու վայրերի կրոնական և հոգևոր նշանակությունը: Համոզվեք, որ ձեր գործողություններում հաշվի եք առնում կառույցի ոչ միայն ֆիզիկական կողմերը: Սա պետք է վերաբերի նաև մշակութային առարկաներին, որոնցից շատերը տեղի համայնքի համար կարող են ոչ նյութական նշանակություն ունենալ, ինչպես նաև առարկաների տարիանման և փրկության ժամանակ:

Գոյություն ունի միայն մեկ տարբերակ պարզելու, թե ինչպես վարվել այս վայրերի, շենքերի և օբյեկտների հետ: Այն է՝ ներգրավել համապատասխան համայնքներին, դրանց անդամներին ու տեղական ղեկավարներին և **նախքան** որևէ գործողություն ձեռնարկելը՝ խորհուրդը հարցնել նրանցից, գալ համաձայնության և համագործակցության:



Շարունակելով ավանդույթները Նարգիս ցիկլոնից հետո. Մյանմա

2008 թվականի մայիսի 2-ին Նարգիս ցիկլոնը հարվածեց Մյանմային՝ պատճառելով աղետալի ավերածություններ և մարդկային կորուստներ: ՄԱԿ-ի գնահատականները ցույց են տալիս, որ ցիկլոնի հետևանքով տուժել է 2,4 միլիոն մարդ:

Ցիկլոնից լրջորեն տուժել էին ավանդական արհեստների արտադրության և կատարողական արվեստների գլխավոր կենտրոնները: Այդպիսի կենտրոններից մեկում արտադրվում էին Մյանմայի ավանդական խամաճիկները և անցկացվում խամաճիկների ու Մյանմայի նվագախմբի ավանդական ելույթները: Արդեն իսկ խոցելի վիճակում գտնվող, սակավաթիվ արհեստագործներով երկրին ցիկլոնի հետևանքները և հետագա ռազմական շրջափակումը սպառնում էին հմտությունների և գիտելիքի իսպառ կորստով, որ կիրառվել էին տասնհինգերորդ դարից սկսած՝ Ավայի (Ինվա) թագավորության ժամանակաշրջանից:



«Մյանմայի վերին երկիր | Մշակույթ և ճամփորդություն» գործակալությունը ստեղծվել է ավանդական կատարողական արվեստները, մասնավորապես Մյանմայի խամաճիկների ավանդական ներկայացումը խթանելու նպատակով: Հանրային իրազեկման միջոցով այս կազմակերպությունը Մյանմայում ստեղծում է կատարողական կարողությունների զարգացման հնարավորություն և երաշխավորում այս ժառանգության բոլոր դրսևորումները, ներառյալ Մյանմայի խամաճիկների պատրաստումը և ղեկավարումը, պարը,





երաժշտությունը, քանդակը, փայլազարդերով ասեղնագործությունը և նկարչությունը: Մյանմայի խամաճիկների կազմակերպության հետ համատեղ, հմտություններն ու գիտելիքները տեղական համայնքներին փոխանցելու նպատակով ստեղծվել է կրթական DVD սկավառակ, ներկայացման սեմինարներ և Մյանմայի առաջին միջազգային տիկնիկային փառատոնը (2016թ.)՝ նվազեցնելու խոցելիությունը և զարգացնելու կատարողական արվեստների կարողությունն ու կայունությունը, ինչը շարունակվում է մինչ օրս:



*Խամաճիկների ներկայացման դասընթաց, Մանդալայ, Մյանմա, 2016թ.:
Լուսանկարը՝ Զուգեպպե Սալերնոյի:*

Տես հղումները, էջ 164:





Բարելավեք ձեր սեփական պատրաստվածությունը արտակարգ իրավիճակներում

Եթե ձեր քաղաքում արտակարգ պատահար լինի և տուժե՛ն մշակութային ժառանգության մի շարք հավաքածուներ, շինություններ և ոչ նյութական ժառանգության տարրեր՝

- արդյոք տուժած հաստատությունները ժամանակին օգնություն կստանան՝ վտանգված ժառանգությունը պաշտպանելու և կայունացնելու համար,
- արդյոք մշակութային ժառանգության պահպանության հաստատությունների և արտակարգ իրավիճակների կառավարման գործակալությունների միջև **խոշոր** պատահարների ժամանակ վնասված ժառանգության հասանելիությունն ապահովելու համար համակարգման ու համագործակցության մեխանիզմներ կան,
- արդյոք կա՞ մշակութային ժառանգության առաջին օգնություն ցուցաբերողների և կամավորների թիմ,
- արդյոք նրանց հասանելի՞ են մեծաքանակ նյութեր և սարքավորումներ, որպեսզի կարողանան տարբեր վայրերում փրկարարական, տարհանման ու կառուցվածքային կայունացման աշխատանքներ իրականացնել,
- արդյոք տուժած հաստատություններն ազատ մուտք կունենան դեպի անվտանգ տարածքներ՝ ժամանակավոր պահոցներ պատրաստելու կամ խոշոր օբյեկտների և շինությունների տարրերի տեսակավորման և կայունացման նպատակով տարածքներ ստեղծելու համար:


ԻՆՉ Է ՀԱՋՈՐԴՈՒՄ ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅԱՆԸ:

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿԻՑ հետո դուք և ձեր թիմը հաջողությամբ առաջին օգնություն եք տրամադրել աղետից տուժած մշակութային ժառանգությանը. դուք իրականացրել եք **իրավիճակի վերլուծություն** և օգտագործել արդյունքները՝ **տեղում վնասի և ռիսկերի գնահատում** կատարելու համար: Հիմնվելով այս գնահատման վրա՝ դուք **պահպանել և կայունացրել** եք թե՛ նյութական, թե՛ ոչ նյութական ժառանգությունը:

Ինչ պետք է անեք հիմա:

Կարդացեք՝ իմանալու համար:

ԿԱՂ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ



ՎԱՂ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ

Մշակութային ժառանգության առաջին օգնությունը հաջողված է համարվում այն դեպքում միայն, երբ դրան հաջորդում են գործառնակա-նությունը և հասանելիությունը վերականգնելու ամրակայման գործողու-թյունները: Այսպիսով, վնասված մշակութային ժառանգությանն առաջին օգնություն ցուցաբերելուց, ողջ գործընթացը փաստաթղթավորելուց և մշտադիտարկման պլան մշակելուց հետո հաջորդ քայլը վերականգնման ու **վերարտադրման** գործողությունների համաձայնեցված պլան պատրաս-տելն է, որը ներառում է վիճակի մանրամասն գնահատումներ, նյութական ժառանգության վերականգնման միջամտություններ (ներառյալ վերանո-րոգում ու **վերականգնում**), ռիսկերի մեղմացում, ապրուստի միջոցների և ծառայությունների վերականգնում, մշակութային ժառանգության բարե-լավված կամ փոփոխված կիրառություն՝ **կայուն զարգացման** և **«ավելի լավ վերակառուցման»** սկզբունքներին համապատասխան: Պարզ ասած՝ մշակութային ժառանգության վերականգնումն ու վերակառուցումը ենթադ-րում է վնասների նորոգում, կորուստների վերականգնում, ռիսկերի նվա-զեցում և մշակութային ժառանգության ավելի լավ վերակազմում, որպեսզի հետագայում այն ավելի կայուն կերպով վերաօգտագործվի:

Առաջին օգնությունից հետո մշակութային ժառանգության վերա-կանգնման և վերանորոգման գործողությունների ծրագիր կազմելու համար անհրաժեշտ միջանկյալ ժամանակահատվածը մարդասիրական ոլորտում հայտնի է որպես վաղ վերականգնման փուլ:



Դուրբարի հրապարակ, Կալումանդու, Նեպալ, 2015թ.: Լուսանկարը՝ ICCROM-ի:





Ինչպես է մարդասիրական ոլորտը սահմանում վաղ վերականգնումը

Վաղ վերականգնումը սահմանվում է որպես «բազմաչափ գործընթաց, որը ղեկավարվում է զարգացման սկզբունքներով: Այն նպատակ ունի ստեղծել կենսունակ, ազգային և ճկուն գործընթացներ հետճգնաժամային վերականգնման համար» (ՄԱԿ ՄԳՄԿ, 2006, էջ. 1): Այս սահմանումը անհատներին հնարավորություն է տալիս օգտվել մարդասիրական գործունեության առավելություններից՝ առավել կայուն զարգացում ապահավելու համար: Այս փուլում խրախուսվում է համագործակցություն մարդասիրական և զարգացման ոլորտների գործակալությունների միջև: Ամփոփելով նշենք, որ վաղ վերականգնման փուլն այն կետն է, որտեղ ավարտվում են կարճաժամկետ, հրատապ, «կյանք փրկող» միջամտությունները և սկսվում երկարաժամկետ զարգացման ու վերականգնման ծրագրերը:

Մարդասիրական ոլորտում վաղ վերականգնման նպատակներն են՝

1. Ընդլայնել շտապ օգնության ընթացիկ գործողությունները:
2. Խրախուսել և աջակցել տուժած համայնքների նախաձեռնություններին:
3. Ստեղծել երկարաժամկետ վերականգնման հիմքեր՝ ձևավորելով հետագա զարգացման կայուն պայմաններ:
4. Կայունացնել և ընդլայնել համայնքային ու պետական կարողությունները, որպեսզի համայնքային ու պետական իշխանությունները կարողանան ապահովել կայունություն, վերականգնել շուկաները և ապրուստի միջոցները, ինչպես նաև ծառայություններ առաջարկել:
5. Կարողությունների զարգացման և խոցելիության նվազեցման միջոցով կանխել ճգնաժամի կրկնությունը և աշխատել տարբեր դերակատարների ճկունությունը բարձրացնելու ուղղությամբ:
6. Համայնքներին անվտանգության ցանցեր տրամադրել:

Տես հղումները, էջ 167:



Հակամարտության պայմաններում հաստատությունները, կառավարման մեխանիզմները և սոցիալական հարաբերություններն արմատապես փոխակերպվում են: Նույն կերպ մշակութային ժառանգության համար վաղ վերականգնումը հետևյալ ֆիլիտային իրավիճակներում պետք է նպաստի հակամարտությունների վերափոխմանը (օրինակ՝ մշակութային ժառանգության վերականգնման միջոցով վստահություն ստեղծել և միավորել պառակտված համայնքը):

Վաղ վերականգնման ժամանակ առաջարկվող գործողություններ

Այս բաժնում ներկայացված են այն գործողությունները, որոնք կարելի է ձեռնարկել վաղ վերականգնման փուլում՝ խթանելու վնասված մշակութային ժառանգության վերականգնումն ու վերանորոգումը: Հաջողություն ապահովելու համար կարևոր է, որ այս գործողությունները ղեկավարեն մշակույթի ոլորտի տուժած հաստատությունները և իրականացվեն համապատասխան շահագրգիռ կողմերի, դերակատարների ու տեղական համայնքների հետ խորհրդակցելով:

1. Իրավիճակի վերլուծություն առաջին օգնությունից հետո

Մշակութային ժառանգության հետճգնաժամային վերականգնման և վերանորոգման համար գործողությունների պլան մշակելիս՝ կարևոր է վերանայել ու թարմացնել **իրավիճակի վերլուծությունը (տես էջ 25)**, որն իրականացվել է նախքան պլանավորումը և առաջին օգնության ցուցաբերումը: Հակամարտության հետևանքով առաջացած արտակարգ իրավիճակի դեպքում անհրաժեշտ է ընդլայնել առաջին օգնությունից հետո իրականացվող իրավիճակի վերլուծությունը՝ ներառելով **հակամարտության վերլուծությունը (տես էջ 38)**: Այն թույլ կտա մշակութային ժառանգության վերականգնման և վերանորոգման գործընթացում ընդգրկել հակամարտությունների կանխարգելման և խաղաղաշինության ռազմավարություններ:

Մասնավորապես, կարևոր է վերանայել՝

- մշակութային ժառանգությանը վնաս հասցրած պատահարի բնույթը և պատճառները,
- գոյություն ունեցող սոցիալական, քաղաքական և տնտեսական ոլորտների խոցելի կողմերը,
- տուժած մշակութային ժառանգության նշանակությունը և արժեքները:
- **շահագրգիռ կողմերի և դերակատարների քարտեզագրումը (տես էջ 33)**, վերականգնման ու վերանորոգման գործում նրանց համապատասխան դերերի և հետաքրքրությունների գնահատումը:





Կարևոր է հաշվի առնել, որ առաջին օգնության և վերականգնման փուլերում ներգրավված դերակատարները մշտապես տարբեր են լինելու: Կարող են ի հայտ գալ նոր դերակատարներ (օրինակ՝ զարգացման գծով), մինչդեռ մյուսները, ինչպես օրինակ՝ հրշեջները կամ քաղաքացիական պաշտպանության անձնակազմը, կարող են դուրս գալ վաղ վերականգնման փուլից: Ավելին՝ որոշ դերակատարներ կարող են փոխել իրենց դերերը և վաղ վերականգնման ժամանակ այլ պարտականություններ ստանձնել, որ չեն ունեցել արտակարգ իրավիճակների արձագանքման ընթացքում: Այդ նպատակով կարևոր է վերստին վերլուծել և քարտեզագրել շահագրգիռ կողմերին ու դերակատարներին:

- Մշակութային ժառանգության ընդհանուր վիճակն առաջին օգնությունն իրականացնելուց հետո և առաջացած ռիսկերը:
- Տուժած մշակութային ժառանգության ամբողջական վերականգնման համար անհրաժեշտ ամրակայման մեթոդի և ռիսկերի մեղմացման տեսակը:
- Մշակութային ժառանգության վերականգնման համար անհրաժեշտ ռեսուրսները:

2. Վիճակի գնահատում

Օգտագործեք **առաջին օգնությունից հետո իրավիճակի վերլուծության** արդյունքները՝ բացահայտելու մշակութային ժառանգության այն արժեքները, որոնք վերականգնման և վերակառուցման համար վիճակի մանրամասն գնահատում են պահանջում: Վիճակի գնահատումն օգնում է բացահայտել վերականգնման առաջնահերթությունները: Հետպատահարային վիճակի գնահատումը սովորաբար ներառում է հետևյալ գնահատումը.

- պատճառված վնասը և գոյացած եկամտի կորուստը (**տե՛ս ՀՊԿԳ, էջ 64**),
- մշակութային ժառանգության վրա ներգործող քայքայման գործընթացները, օրինակ՝ աղի տարածման և լույսի շարունակական ազդեցության հետևանքով տեսանելի գունային փոփոխությունը,
- անվտանգության և կայունացման այն գործողությունները, որոնք իրականացվել են առաջին օգնության ժամանակ,
- առկա թույլ կողմերն ու ռիսկերը և հատկապես ակտիվ քայքայման գործընթացները, որոնք ժառանգությունը խոցելի են դարձնում հետագա աղետների համար:

Հետպատահարային վիճակի գնահատումները պետք է արձանագրվեն հաշվետվությամբ, որ ներառում է վնասի, քայքայման և ռիսկերի մանրակրկիտ լուսանկարչական վավերագրում, թարմացված գույքացանկ, տեղանքի քարտեզներ ու հատակագծեր: Ընդգր-

կեք նաև տրամադրված առաջին օգնության մանրամասները, որ ստացվել են մշակութային ժառանգության արժեքների **անվտանգության և կայունացման** ընթացքում հավաքված փաստաթղթերից (տես էջ 68):

Նման գնահատումը կարող է ներառել վերլուծական ուսումնասիրություններ, ինչպես օրինակ տարբեր շաղախների ամրության փորձարկումը կամ կտավում օգտագործված կապակցանյութերի և պիգմենտների վերլուծությունը: Հնարավորության դեպքում, տեխնոլոգիական գործիքների կիրառումը, օրինակ՝ **3D լազերային սկաներները կամ ֆոտոգրամետրիան**, կարող են ճշգրիտ չափումներ տրամադրել, որոնք կարևոր են ամբողջական վերականգնման համար: Փաստաթղթավորման մակարդակը մեծապես կախված կլինի տուժած ժառանգության նշանակությունից, վնասի չափից և առկա ռեսուրսներից:

Մասնագետների միջգիտակարգային թիմերը, որոնց կազմում կարող են ընդգրկվել վերականգնողներ, ճարտարապետներ, համադրողներ, նախագծող ճարտարագետներ, անալիտիկ քիմիկոսներ, մարդաբաններ և պատմաբաններ, պետք է ներգրավված լինեն վիճակի գնահատման գործընթացում: Թիմի կազմը կախված է տուժած մշակութային ժառանգության վնասի բնույթից: Համապարփակ գնահատման համար կարևոր է խորհրդակցել ժառանգության խնամակալների և տեղական համայնքների հետ:

3. Մշակել մեխանիզմներ համակարգման, մասնակցության և կարողությունների զարգացման համար

Խոշոր ավերածություններից հետո տեղական մշակութային հաստատությունները և աղետից տուժած համայնքները մշակութային ժառանգությունը վերականգնելու մասնագիտական հմտությունների, նյութերի, միջոցների և/կամ ինստիտուցիոնալ մեխանիզմների հասանելիության պակաս կարող են ունենալ: Վաղ վերականգնման փուլը կարող է կիրառվել՝ սահմանելու վերականգնման համար անհրաժեշտ ռեսուրսները, քարտեզագրելու տեղական կարողությունները և ձեռնարկելու հմտությունների, գիտելիքի ու ինստիտուցիոնալ քաղաքականությունների բարելավման դասընթացներ:

Վաղ վերականգնման փուլում անհրաժեշտ է համակարգել մշակութային ժառանգության վերականգնման և վերանորոգման ծրագիրը այլ ոլորտների համապատասխան ծրագրերի հետ՝ միևնույն ժամանակ մշակելով աղետից տուժած անձանց ներգրավելու մեխանիզմներ: Օրինակ՝ կարելի է մշակել կառուցապատման նոր կարգավորումներ կամ հողօգտագործման քաղաքականություն, որը կարող է վնասաբեր լինել անշարժ ժառանգության վերականգնման և դրա հետագա օգտագործման համար: Նույն կերպ համայնքները կարող են ունենալ որոշակի առաջնահերթություններ առ այն, թե որ ժառանգությունը պետք է առաջինը վերականգնել:



Ջանքեր պետք է ձեռնարկել՝ տեղական համայնքների ավանդական հմտություններն ու գիտելիքները օգտագործելու և նրանց վերականգնման պլանավորման մեջ ներգրավելու համար: Իրականում վաղ վերականգնման փուլը կարող է գործադրվել՝ համայնքին վերականգնման տարբերակների մշակման և մշակութային ժառանգության վերաօգտագործման մեջ ներգրավելու համար:

Առաջին օգնությանը հաջորդող իրավիճակի վերլուծության արդյունքները կարելի է օգտագործել՝ սահմանելու, թե որ դերակատարներին ու շահագրգիռ կողմերին պետք է ներգրավել մշակութային ժառանգության վերականգնման գործում:



«Ներքևից վերև» համայնքահեն նախաձեռնությունների դերը Լ'Աքվիլա քաղաքի մշակութային և սոցիալական վերականգնման գործում, Իտալիա

2009 թվականի ապրիլի 6-ին Կենտրոնական Ապենինների Աբրուցո նահանգում 6.1 մագնիտուդ ուժգնությամբ երկրաշարժ տեղի ունեցավ՝ լրջագույն վնաս պատճառելով մայրաքաղաք Լ'Աքվիլային և մոտակա հիսուն քաղաքներին:

Ամիջապես Քաղաքացիական պաշտպանության իտալական դեպարտամենտն իրականացրեց փրկարարական գործողություններ արտակարգ իրավիճակի փուլում: Մարդկանց տրամադրեցին ժամանակավոր ապաստաններ և քաղաքի պատմական կենտրոնն ամբողջովին տարհանվեց, պատնեշապատվեց ու խոշոր վնասի պատճառով հայտարարվեց կարմիր գոտի:

Լ'Աքվիլայի բնակիչների համար քաղաքի պատմական կենտրոնը միշտ ծառայել է որպես սոցիալական ու տնտեսական կենսական տարածք, ուր մարդիկ հանդիպում էին, շփվում և զվարճանում: Քաղաքի հրապարակները և բաց տարածքները նրանց առօրյա կյանքի և մշակույթի հիմնական մասն էին կազմում: Աղետից հետո այդ տարածքների տևական անմատչելիությունը իրեն զգացնել էր տալիս, քանի որ մարդիկ շփման վայրերի պակաս ունեին:

Ի պատասխան՝ Լ'Աքվիլայի բնակիչները կազմակերպում էին տարբեր համայնքահեն նախաձեռնություններ՝ մասնակցելով իրենց քաղաքի և թաղամասերի վերականգնմանը: Նմանատիպ նախաձեռնություններից է «Viviamola»-ը, որը ստեղծել են Լ'Աքվիլայի համալսարանի ուսանողները և շրջանավարտները:

Քաղաքային տարածքների և լքված վայրերի վերաօգտագործմամբ՝ «Viviamola»-ն աջակցում է սոցիալական, քաղաքային ու մշակութային վերականգնմանը: Նրա նախագծերը հիմնված են շրջակա միջավայրի ու սոցիալական կայունության սկզբունքների վրա և ծառայում են որպես գործիքներ՝ խթանելու հանրային միասնությունը և կոլեկտիվ գործողությունները: Մասնակցությունն ու համագործակ-





ցությունը «Viviamolaq»-ի բոլոր նախագծերի հիմնարար բաղադրիչն է՝ ստեղծարար պլանավորման փուլից մինչև շինարարություն : Սա էր «Ռեստարտ» նախագծի ոգին, որը կյանքի կոչվեց 2014 թվականին: «Ռեստարտը» վերաօգտագործեց Լ'Աքվիլայի համալսարանի դիմաց գտնվող Հումանիտար գիտությունների ֆակուլտետի մի լքված հանրային տարածք՝ ուսանողների և տեղի համայնքի համար ստեղծելով բաց հանգստի գոտի: Վերակառուցման ընթացքից մնացած վերամշակված նյութերը (փլատակներ, պողպատի ու փայտի կտորներ, որ նախկինում օգտագործվել էին վնասված շենքի պատվարների համար) օգտագործվեցին քաղաքային կահավորման համար: «Ռեստարտի» ազդեցության համար կարևոր է նախագծի մեջ աղետի հիշողության ինտեգրումը: Այն ցույց է տալիս վերականգնման հնարավորությունը և թե ինչպես է հնարավոր աղետին հաջորդող փուլում բարձրացնել տոկոսությունը և հանրային միասնությունը:

Լ'Աքվիլայում համայնքահեն վերականգնման արձագանքման գործողությունների հաջողությունը դիտարկելուց հետո համայնքահեն մոտեցումներ կիրառվեցին Էմիլիա Ռոմանիայում 2012 թվականի, իսկ ավելի վերջերս՝ Կենտրոնական Իտալիայում 2016-2017թթ. երկրաշարժերին հաջորդած արձագանքման և վերականգնման գործողություններում:

Աղբյուրը՝ Վալենտինա Սպանո, մագիստրոս, Բրանդենբուրգի տեխնոլոգիական համալսարանի նախկին փորձնակ, Հավաքածուների պահպանության բաժին, ICCROM:

Տես 167 էջի հղումները:



«Ռեստարտ»։ Լ'Աքվիլա քաղաքի պատմական կենտրոնի աղետից մնացած վերամշակված բեկորների օգտագործումը՝ հանրային տարածքներ վերաստեղծելու նպատակով: Լուսանկարը՝ Վալենտինա Սպանոյի:



Կարողությունների զարգացում արհեստագործների համար. դեպի փոքր ձեռնարկատիրությունների վերականգնում Հայիթիում:

2010 թվականի Հայիթիի երկրաշարժը երկրի արհեստների գլխավոր կենտրոնում՝ Ջաքմելում, մեծ թվով արհեստավորների զրկեց տներից, արհեստանոցներից, գործիքներից և նյութերից: Երկրաշարժը տեղի ունեցավ հունվարին՝ արհեստավորների համար եռուն ժամանակաշրջանում, երբ նրանք պատրաստվում էին կառնավալի ամենամյա տոնակատարությանը: Այդ ժամանակահատվածում շատ արհեստավորներ նույնիսկ վարկեր են վերցնում, որպեսզի գնեն համապատասխան նյութեր՝ արտասովոր կառնավալային հանդերձանք պատրաստելու համար: Այդուհանդերձ, երկրաշարժի ժամանակ իրենց տների և արհեստանոցների փլուզման հետևանքով նրանք կորցրեցին նաև իրենց պահեստները և պատրաստի ապրանքները, ինչն անհնարին դարձրեց տրամադրված վարկի գումարի վերադարձը:

Առաջին օգնության փուլի ընթացքում ուշադրություն դարձվեց համայնքին ժամանակավոր ապաստան և հարմարություններ տրամադրելուն: Այնուամենայնիվ, վաղ վերականգնման փուլում ՅՈՒՆԵՍԿՕ-ն աշխատեց արհեստավոր վարպետների հետ՝ վերականգնելու նրանց գործունեությունը, տրամադրելով (ժամանակավոր) ընդհանուր արհեստանոց և աշխատանքները վաճառելու տարածք, ինչպես նաև աշխատանքները վերսկսելու համար անհրաժեշտ նյութեր ու գործիքներ:

Քանի որ առևտուրը, որը հիմնականում կատարվում է երկրից դուրս, էապես չէր տուժել, արհեստավորերին տրամադրված աջակցությունը նախատեսվել էր այնպես, որ նրանց հնարավորություն տրվեր վերականգնել իրենց գործունեությունը՝ գիտակցելով, որ իրենցից պահանջվում է միայն հաղթահարել երկրաշարժի հետևանքով առաջացած պարտքի և դրամական հոսքերի կորուստը: Արտադրությունը վերսկսելուն պես՝ արհեստավորերի մեծ մասը կարողացավ վերականգնվել:

Աղբյուրը՝ Էլկե Ջելթեր, Արևելագիտության և Աֆրիկագիտության դպրոց, Լոնդոնի համալսարան, ՄԹ:



Պապիե-մաշե դիմակներ, որոնք պեղք է նկարագրողել Ջակմելի կառնավալի համար, 2012թ.: Լուսանկարը՝ Էլկե Ջելթերի:



Արհեստները Ջակմելում, 2010թ.: Լուսանկարը՝ Էլկե Ջելթերի:

4. Գնահատել մշակութային ժառանգության

կիրառությունը, գործառույթը և իմաստը

Աղետից հետո մշակութային ժառանգության վերականգնման տարբերակները կախված են ապագայում դրա հնարավոր կիրառությունից և աղետից տուժած հաստատության կամ համայնքի հետճանաժամային կարիքներին դիմակայելու կարողությունից: Մշակութային ժառանգության կիրառության կամ գործառույթի փոփոխության որոշումները կարող են հակասական լինել և պետք է հիմնվեն հանրային լայն համաձայնության վրա, որը կարող է հաստատվել վաղ վերականգնման փուլի ժամանակ:

Կոնֆլիկտից հետո էլ հնարավոր առճակատումը կանխարգելելու նպատակով մշակութային ժառանգության համատեքստում ներկայացվող ցանկացած նարատիվ ընդգրկում է նաև համայնքի ոչ մեծամասնաություն կազմող խմբի հետաքրքրություններն ու շահերը: Նման փորձերը պետք է թափանցիկ լինեն և ներառեն խորհրդատվություններ աղետից տուժած համայնքների և հակամարտության բուրր կողմերի հետ:

Մեծ մասամբ աղետից տուժած համայնքը կարող է նոր ժառանգություն ստեղծելու ցանկություն ունենալ՝ ավերածությունների վայրերը հուշակոթողների վերածելով, աղետին նվիրված նոր հուշարձաններ կերտելով կամ հուշ-միջոցառումներ կազմակերպելով, որոնք ժամանակի ընթացքում ձեռք են բերում նոր, ոչ նյութական ժառանգության ձև: Նման երևույթի վերջին հայտնի օրինակը ԱՄՆ Նյու Յորք քաղաքում «**Ground Zero**»-ն է: Նմանօրինակ նոր պատումները կարող են ներառել նաև օբյեկտներ ու մշակութային հաստատություններ: Հարավային Աֆրիկայում Ապարտեիդի թանգարանը և 6-րդ շրջանի թանգարանը վառ օրինակներ են, թե ինչպես են հաստատությունները նպաստել վերականգնմանն ու երկխոսության խթանմանը:

Որոշ համայնքներ առաջնահերթ են համարում մշակութային ժառանգության կենդանի կողմը և նախընտրում են ջնջել ոչնչացման բոլոր նշանները: Նման դեպքերում հնարավոր է նաև ժառանգությունը ամբողջովին նոր կառուցով փոխարինելու որոշումներ կայացվել: Այդպիսի օրինակ է Շրի Լանկայում Բուդդայի ատամի մասունքի տաճարի վերականգնումը, որը 1998 թվականին ռումբի պայթյունից լրջորեն վնասվել էր: Մնացած դեպքերում առաջնահերթություն է տրվում ժառանգության նյութական կողմի վերականգնմանը և իրականացվում է այնպես, որ ավերածության հետքեր չեն մնում, ինչպես է, օրինակ, Լեհաստանում Վարշավայի պատմական կենտրոնը՝ ավերված երկրորդ համաշխարհային պատերազմի տարիների: Իհարկե, շատ ջանքեր են գործադրվում՝ փորձելով համադրել երկու մոտեցումներն էլ: Վերջին տարիներին վերականգնման տարբերակների շարքում ավելացել են բազմաթիվ տեխնոլոգիական նորամուծություններ, որոնց արդյունքում ստեղծվում են ոչնչացված ժառանգության պրոյեկցիաները (օրինակ՝ **Բամիյանի** լազերային կամ **Պալմիրայի Հաղթական կամարի** լայնաֆորմատ 3D տպագրությունը):

Տես հղումները, էջ 167:





Բաց պահոց. հարմարեցված վերաօգտագործումը արագ վերականգնման փուլում, Նեպալի ազգային թանգարան

2015 թվականին Նեպալի երկրաշարժից անմիջապես հետո տասը թանգարաններ, ներառյալ Նեպալի ազգային թանգարանը, ստիպված էին տարհանել իրենց հավաքածուները լրջորեն վնասված շենքերից, որոնք հայտարարվել էին օգտագործման համար վտանգավոր: Անվտանգության նկատառումներից ելնելով՝ տարհանված հավաքածուները ժամանակավորապես պահեստավորվել էին համապատասխան թանգարանների ցուցարահներում, որոնք իրենց հերթին հանգեցրեցին վերջիններիս մասնակի փակմանը: Վաղ վերականգնման փուլում ICCROM-ը Հնագիտության բաժնի հետ ու Նորվեգիայի կլիմայի և շրջակա միջավայրի նախարարության աջակցությամբ՝ տուժած թանգարանների անձնակազմի համար վերապատրաստում անցկացրեց՝ բաց, բայց անվտանգ պահեստավորման տարածքներ նախագծելու համար, որ ծառայելու էին երկու նպատակով՝ տեղավորել տարհանված հավաքածուները և այցելուներ ներգրավելու համար նոր ցուցադրության տարածքներ տրամադրել:

Տես հղումները, էջ 167:



Հեղափոխարարային հարմարեցված կիրառություն. Կրեանելի և անվրանգ ժամանակավոր պահոց Նեպալի ազգային թանգարանում, որը պատրաստվել էր տարհանված հավաքածուները տեղավորելու և այցելուների թանգարան վերադարձնելու համար, 2016թ: Լուսանկարը՝ Ապարնա Թանդոնի, ICCROM:

5. Ռեսուրսներ հավաքել

Մշակութային ժառանգության առաջին օգնության և վերականգնման միջև ժամանակահատվածը պետք է օգտագործել տարբեր գործակալություններից ռեսուրսների հայթայթման նպատակով, ինչպիսին են, օրինակ, պետական և համայնքային իշխանությունները, պետական և միջազգային դրամաշնորհային կազմակերպությունները ու մշակութային ժառանգության հաստատությունները: Հատկապես օգտակար են առաջին օգնությանը հաջորդող վիճակի գնահատման հաշվետվությունները՝ հետճգնաժամային վերականգնման կարիքները ձևակերպելու համար: Անհրաժեշտ ռեսուրսներ տրամադրելու նպատակով հնարավոր բոլոր շահագրգիռ կողմերի ներգրավումն օգնում է երաշխավորել, որ մշակութային ժառանգության վերականգնման ու վերանորոգման գործընթացները բխում են տեղական կարիքներից և ցանկություններից, այլ ոչ թե դրամաշնորհ տրամադրողների ցանկությունից:



Հաշվետվողականություն, ինչպես նաև թափանցիկություն խթանելու համար՝ անհրաժեշտ է ստեղծել դրամաշնորհ տրամադրողների, կառավարական մարմինների, շահագրգիռ կողմերի և լայն հանրության հետ հաղորդակցվելու արդյունավետ մեխանիզմներ:

Եզրակացություն

Այս ձեռնարկում նկարագրված եռաստիճան շրջանակը բարձրացնում է մշակութային ժառանգությանը համակարգված առաջին օգնություն ցուցաբերելու պատրաստվածությունը, որը նպաստում է վաղ վերականգնմանը: Այդուհանդերձ, պետք չէ կարծել, թե յուրաքանչյուր աստիճանի միջև առաջխաղացումը գծային է կամ ընթանում է հստակ սահմանված ժամկետով: Երբ տեղի են ունենում խոշոր և բարդ արտակարգ իրավիճակներ, մշակութային ժառանգության առաջին օրգնությունը աշխարհագրական տարբեր շրջաններում կարող է իրականացվել տարբեր ժամանակահատվածներում: Դրա իրագործումը կախված է աղետից տուժած մշակութային ժառանգության անվտանգ ու անխոչընդոտ հասանելիությունից և գոյություն ունեցող պետական և/կամ համայնքային կարողություններից:

Ավելին՝ եթե վաղ վերականգնման ընթացքում մշակութային ժառանգությունը մնում է խոցելի, կարող եք կրկնել առաջին օգնությունը մեկ այլ արտակարգ իրավիճակի դեպքում, օրինակ՝ երկրաշարժի կամ հակամարտության կրկնություն դեպքում:

Այսպիսով, դիսկերի շարունակական կառավարումը, **չնախատեսված իրավիճակների պլանավորումը**, տարբեր դերակատարների ու շահագրգիռ կողմերի միջև գործողությունների համակարգումը և մշակութային ժառանգության հաստատություններում ու տեղական համայնքներում գոյություն ունեցող խոցելի կողմերը վերացնելու նպատակով կարողությունների զարգացումը կարևոր են աղետների և հակամարտությունների նկատմամբ մշակութային ժառանգությունը դիմակայուն դարձնելու գործում:

ԲԱՌԱՐԱՆ

3D լազերային սկաներ

Անհալում, անվտանգ սարք, որ օգտագործում է լազերի լույսը՝ առարկայի ֆիզիկական ձևը թվային տիրույթում վերարտադրելու համար: Այն ստեղծում է առարկայի մակերեսի տվյալների հավաքածու կամ «կետային ամպ»՝ առարկայից անդրադարձած լույսը խցիկի ոսպնյակներով եռաչափ պատկերի վերածելու միջոցով: 3D լազերային սկանավորումը առարկայի ֆիզիկական իրական չափն ու ձևը թվային եռաչափ պատկերի վերածելու միջոց է: Այն լավագույնս հարմար է ուրվագծային մակերեսների և բարդ առարկաների չափման ու ստուգման համար, որոնց ճշգրիտ նկարագրության համար պահանջվող մեծաքանակ տվյալները դժվար կլինեն ստանալ չափման ավանդական մեթոդներով: (Պատմական Անգլիա, 2018):

Կարդալ ավելին՝ <https://perma.cc/YLM5-LQL2>

Գույքամատյան

Գույքամատյանը թանգարանի մշտական հավաքածուի բոլոր նմուշների մշտական գրանցման փաստաթուղթն է: Սա թանգարանի փաստաթղթավորման համակարգում ամենակարևոր փաստաթուղթն է: Գույքամատյանը թանգարանային նմուշների մասին տեղեկություն է պարունակում և պաշտոնական ցուցակն է այն հավաքածուների, որոնց համար պատասխանատու է թանգարանը: (Հավաքածուների ֆոնդ, 2018):

Կարդալ ավելին՝ <https://perma.cc/J4GF-WHWN>

Դերակատար

